

ԴԵՂԵՅ
ԼՍՏԻԾՈՅ

Ս. ԷԶՍԻԱԾԻՆ - 2001

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՀՈԳԵՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀՐԱՄԱՆԱԻ

S. S. ԳԱՐԵԳՆԻ Բ

ՎԵՅԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՄԵՂԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ

(Բացատրություն «Հրաժարիմքի» եւ մեղքերի ընդհանրական
խոստովանության աղոթքի խոսքերի)

Գիրքը, հիմնվելով Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու հայրերի աստվածաբանական ժառանգության վրա, համառոտ բացատրություններ է տալիս մեղքի սկզբնավորության, տարատեսակների, գղջման, մեղքերի անհատական և ընդհանրական խոստովանության, ինչպես նաև «Հրաժարիմքի» և մեղքերի ընդհանրական խոստովանության աղոթքի խոսքերի վերաբերյալ:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

**«Եկայք առ իս, ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես
հանգուցից զձեզ»:**
(Մատթ. ԺԱ 28)

Քրիստոսի Եկեղեցին Աստծո արքայության իրականացումն է այս աշխարհում և Սուրբ Հոգին շնորհաբախշումն իրականացնողը: Քրիստոսը Գողգոթայի վրա Իր Արյունը թափեց մեղավոր մարդկության համար՝ բացելով մինչ այդ փակված երկնքի ճանապարհը: Իր հրաշափառ Հարությանը Նա կենդանացրեց մեզ, որ մի ժամանակ մեռած էինք մեղքերի մեջ: Մեղքն է, որ հեռացնում է մարդուն Իր Արարչից՝ Աստծուց, և քանի դեռ մեր սրտերում փափայում ենք մեղքի ժամանակավոր զվարճության վայելումը (Եբր. ԺԱ 25), այդ հեռացումը՝ օտարումը, չի դադարի: Երբ մարդը գիտակցում է մեղքի հասցրած վնասների ահավորությունը, ապա առանց երկմտելու զղջում է գործած մեղքի համար, փորձում ազատվել այդ բեռից: Մեղքի մեջ ընկնելով՝ մարդ կորցնում է իր աստվածային պատկերը, ապականում մարմնի տաճարը, հեռացնում շնորհի լույսից, ավերում այն ճանապարհը, որ կապում է իրեն մեր Փրկչի՝ Տեր Հիսուս Քրիստոսի հետ: Եվ այն հավիտենական **«ինչ անել»** (Գործք Բ 37) հարցը դառնում է մարդու համար հույժ արդիական:

Եկեղեցին սուրբ է և իր անդամներին առաջնորդում է դեպի նոր կյանք, ուր տեղ չունի ապականարար մեղքը: Բայց երբ մարդն ընկնում է մեղքի մեջ, Եկեղեցին անմիջապես պատգամում է զղջմամբ ու ապաշխարությամբ մաքրվել նրանից և Սուրբ Հոգու շնորհով ազատվել գործած անօրենությունների հետևանքներից: Սա է քրիստոնյաների ճանապարհը. **«Մքրվեցեք և սուրբ եղեք, որովհետև Ես՝ ձեր Տեր Աստվածը, սուրբ եմ»** (Ղևտ. ԺԱ 44):

Դարեր շարունակ մեր հայրերը, համաձայն սուրբգրային պատվերների, սրբվել և մաքրվել են իրենց գործած հանցանքներից ու մեղքերից՝

խոստովանելով դրանք Եկեղեցու սպասավորի՝ քահանայի առաջ, և քահանան, իրեն տրված աստվածային իշխանության համաձայն, թողություն է տվել խոստովանողներին՝ արձակելով և խրատելով, որ հետայսու մեղավոր ճանապարհով գնալու փոխարեն բարեգործության ճանապարհն ընտրեն: Ս. Գրիգոր Տաթևացուն վերագրված զղջման բանաձևը, որ մինչ այսօր չի կորցրել իր կենսունակությունն ու արդիականությունը, հայտնի է գրեթե բոլորին: Բայց շատ հաճախ մերօրյա քրիստոնյաների համար այդ հանճարեղ բանաձևը մնում է անհասկանալի և անհրաժեշտություն է զգացվում այն մեկնելու, բացատրելու: Վերջին երկու հարյուր տարիների ընթացքում ընդամենը երկու գիրք է մեզ հայտնի, ուր տրված է «ՄԵՂԱՅ»-ի բացատրությունը*: Այս նոր 21-րդ դարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ՔԳԿ-ն ընթերցողներին է ներկայացնում «ՄԵՂԱՅ»-ին նվիրված մի նոր գրքույկ, ուր հեղինակն ամփոփ ու սպառնիչ պատասխաններ է տալիս նշյալ բանաձևին վերաբերող գրեթե բոլոր հարցերին: Կարծում ենք, որ այն օգտակար կլինի ինչպես հոգևոր հովիվների, հոգևոր ճեմարանների ուսանողների, այնպես էլ կրոնի ուսուցիչների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են Հայ Եկեղեցու դավանանքով ու ծեսով: Համոզված ենք, որ այն օգտակար կլինի նաև խոստովանության գնացող բոլոր հայորդիների համար:

ՂԵՎՈՆԳ ԲԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

ՔԳԿ հրատարակչության գլխավոր խմբագիր

Սբ. Էջմիածին, 22 սեպտեմբերի 2001թ.

Սրբալույս Մյուռոնի օրհնության օր

* Սկրտիչ վրդ. Արծրունեան, Բացատրութիւն հրաժարման եւ զղջման բանից..., Երուսաղէմ 1854, Մայիլեան, Ոսկեփորիկ, մասն Բ, էջ 99-142, ԴԲՄ «Գթութիւն», Երևան 1993

ՄԱՍ Ա

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂՔԸ

Ըստ Աստվածաշնչի՝ Աստված արարչագործության վեցերորդ օրը հողից ստեղծեց առաջին մարդուն՝ Ադամին, իր պատկերով ու նմանությամբ¹: Եվ քանի որ Աստված Ինքն աննյութ է և չունի նյութական պատկեր, ապա, ինչպես բացատրում են Եկեղեցու հայրերը, Ադամի ոչ թե հողաշեն մարմինը, այլ հողին էր, որ ուներ աստվածային պատկերը, այսինքն՝ բնությամբ բարի էր, ազատ ու ինքնիշխան, ուներ նաև այլ արարածների վրա իշխելու կարողություն, մաքուր էր, չուներ որևէ արատ, թերություն կամ այն, ինչ կոչվում է ՄԵՂՔ:

Ադամը բնակվում էր դրախտի երանության մեջ Աստծո հետ միասին՝ Նրա ձայնը լսելով, Նրա հետ խոսակցելով: Աստված առաջին մարդուն օժտել էր ազատ կամքով, այսինքն՝ իր մտքերի, ցանկությունների ու արարքների մեջ անբռնադատ ու կամավոր ընտրության ազատ իրավունքով, որը նույնպես աստվածային պատկերի անհրաժեշտ ու էական տարրն էր: Ինչպես Հայ Եկեղեցու մեծանուն սրբերից Գրիգոր Տաթևացին (14-15-րդ դդ.) է ասում, ինքնիշխան կամքը մարդու գլխին Աստծո դրած թագն էր²: Աստծուն նման լինելով՝ Ադամն Աստծո որդին էր: Հետո Ադամի կողից ստեղծվեց նրա ընկերն ու օգնականը՝ Եվան, և նրանք Աստծո սիրո մեջ և Աստծո հետ հաշտ ապրում էին՝ լուսեղեն աննյութական զգեստ հագած, ինչպես ասում է եկեղեցական ավանդու-

¹ Տե՛ս ԾԱՆՊ. Ա 26, Բ 7: «Ադամ»-ը եբրայերեն նշանակում է հող:

² Տե՛ս Գ. Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 271:

թյունը³, մինչև օձի կերպարանքով հայտնվեց փորձիչը՝ սատանան: Այստեղ մի պահ կանգ առնենք՝ ներկայացնելու համար Եկեղեցու վարդապետությունը, այսինքն՝ ուսմունքը, սատանայի սկզբնավորության մասին:

Նախքան այս երկիրն ու երկինքը և մարդուն ստեղծելը, Արարիչ Աստված արդեն ստեղծել էր հոգեղեն ու անմարմին, հրեղեն ու լուսավոր բազմաբյուր հրեշտակային էակներին՝ Իրեն մշտապես փառաբանելու և ծառայելու համար, և նրանց բնակեցրել մեր այս նյութական ու տեսանելի երկնքից տարբեր մի երկնքում: Թեև սպասավոր հոգիներ են հրեշտակները, սակայն ո՛չ ստրուկ, քանզի Արարիչը նրանց նույնպես օժտել է ազատ կամքով, և նրանք ծառայում ու փառաբանում են իրենց Ստեղծչին կամովին՝ միայն Նրա հանդեպ սիրուց մղված: Եվ ահա նրանցից ամենազեղեցիկն ու փառավորը՝ «Անդրանիկը» հրեշտակների մեջ, Աստուծոց իրեն տրված փառքը սակավ համարելով, Աստծո հանդեպ նախանձով լցվեց և Նրանից իրեն շնորհված ազատությունը շահագործելով՝ կամեցավ Նրա տեղը գրավել՝ աստված դառնալ: Այս նպատակով իր շուրջ համախմբեց բազմահազար ուրիշ հրեշտակների և Արարչի դեմ ապստամբեց: Ապստամբների դեմ ելավ Աստծուն հավատարիմ հրեշտակների մի բանակ՝ Միքայել⁴ հրեշտակապետի գլխավորութայն, և ապստամբներին պարտության մատնելով՝ նրանց իրենց առաջնորդ հրեշտակով հանդերձ արտաքսեց աննյութական երկնքից՝⁵ այնտեղից վայր գցելով:

Ընկած հրեշտակը սատանան էր (որ եբրայերեն հակառակորդ է նշանակում)⁶, և նրա զորքը՝ դևերը, որոնց քանակն, ըստ Հայտ. ԺԲ

³ Տե՛ս, օրինակ, Առաքել Սիմեցի, Ադամգիրք, Երևան, 1989, էջ 27:

⁴ «Միքայել»-ը եբրայերեն («Մի՞ կա խա էլ») նշանակում է «Ո՞վ է ինչպես Աստված»:

⁵ Այս երկինքը սովորաբար «իմանալի», այսինքն՝ հոգեւոր, աննյութական, երկինք է կոչվում:

⁶ Սատանային տրվող անուններից են. նախքան անկումը՝ Արուսյակ (=Լուսաբեր, Առավոտյան աստղ. համապատասխանում է լատիներեն Lucifer-ին, որ բառացի նշանակում է «ույս բերող»), անկումից հետո՝ Սադայել, Հիմ Օձ, Վիշապ, Բելիար, Բեղեղեթուղ, Բանասրկու և այլն:

4-ի մեկնության, կազմում է բոլոր հրեշտակների շուրջ մեկ երրորդը⁷: Այսպիսին է սատանայի ու դևերի առաջացման մասին պատմող ու Աստվածաշնչի վրա հիմնված ավանդությունը (տե՛ս Եսայի ԺԴ 12-15, Հայտ. ԺԲ), որը գալով նախաքրիստոնեական ժամանակներից՝ որդեգրվել է Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցու կողմից:

Ահա նա, ով առաջինը մեղանչեց իր Արարչի դեմ և հավիտենապես տարագրվեց Նրանից, նա, ով ինքն էր ուզում առաջինը լինել Աստծո բոլոր արարածների մեջ, տեսնում է, որ Աստված մի նոր, հրեշտակներից առավել փառավոր արարած է ստեղծել՝ Մարդուն, քանզի Աստված ոչ մի հրեշտակային էակի Իր պատկերը չի շնորհել և որդիության պատվի արժանացրել է միայն մարդուն: Ընկած հրեշտակը՝ սատանան, որ երբեմնի բարի հրեշտակից վերածվել էր չարի⁸, չհանդուրժելով այս նոր արարածի պատիվը, փառքը և այն սերը, որ նա վայելում էր Արարչից, որոշում է նրան ևս զրկել այդ ամենից: Ինքն անմարմին լինելով՝ մտնում է օձի մեջ և վերջինիս կերպարանքով մոտենալով Եվային ու պատրելով (խաբելով) նրան՝ նրա սրտում ևս սերմանում է առանց Աստծո աստվածանալու փառքը: Քանի որ աստվածաշնչյան այս պատմության մանրամասներին ամեն ոք կարող է «Ծննդոց» գրքից տեղեկանալ, նշենք միայն, որ նախաստեղծ մարդիկ՝ նախ Եվան, ապա վերջինիս միջոցով՝ նաև Ադամը, չարի սաղրանքին ենթարկվելով, անտեսում են

⁷ Տե՛ս Գ. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 152:

Սատանայի և նրա հրեշտակների անկման ու բնակության վայր է համարվում «օդը» երկնքի և երկրի միջև տարածվող ոլորտը, ինչ պատճառով և սատանան կոչվում է նաև «օդի իշխան» (տե՛ս Եփես. Բ 2, Զ 12):

⁸ Չարը, ըստ Քրիստոնեական Եկեղեցու ուսմունքի, բնություն չունի, էություն չէ, ուստի և չի ստեղծված Աստծուց, Ով արարչն է ամեն գոյության: Չարն առաջանում է որպես հետևանք ազատ կամքի ընտրության, այսինքն՝ այն ազատ կամքի դրսևորում է: Չարը բարու բացակայությունն է, ինչպես որ խավարը՝ լույսի: Իսկ այն ամենն, ինչ ունի բնություն, այսինքն՝ Աստծո ստեղծածն է, բարի է, ինչպես բարի է դրանց ստեղծիչը՝ Աստված: Այս մասին տե՛ս, օրինակ, Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1994, էջ 30-42:

Ստեղծչի պատվերը⁹, նախընտրում հավատալ Օձին, քան Ստեղծչին, այսպիսով անհնազանդ գտնվում Նրան՝ գործելով իրենց և ողջ մարդկության առաջին մեղքը, որ կոչվում է աղամական կամ սկզբնական մեղք: Ըստ Քրիստոնեական Եկեղեցու ուսմունքի՝ աղամական մեղքը սերնդեսերունդ փոխանցվում է բոլոր մարդկանց, քանզի ամենքս էլ Ադամի որդիներն ենք. յուրաքանչյուր աղամորդի ծնվում է այս մեղքով, և այն մաքրվում է միայն Մկրտություն ժամանակ՝ Սուրբ Հոգու զորությունով:

Այսպես, Ադամն ու Եվան մեղանչելով՝ աղավաղում են իրենց աստվածային անթերի պատկերը, այսինքն՝ այդ աստվածապատկեր բարի բնության մեջ իրենց ազատ կամքով ու ընտրությունով ներդրում են մի թույն, որն ախտահարում է մարդկային ողջ բնությունը՝ վնասելով ու հիվանդացնելով մարդ արարածի թե՛ հոգին և թե՛ մարմինը: Արդյունքում մարմինը մահկանացու է դառնում՝ համաձայն Ադամին նախապես տրված աստվածային պատվիրանի, որն էլ ապա վերածվեց անեծքի¹⁰: Ուրեմն՝ մեղքն էր պատճառը, որ մարդու կյանքը լցվեց բազմապիսի ցավերով ու տառապանքներով¹¹ և մահն առաջ եկավ, այլապես Աստված Ադամին ու Եվային անմահ էր ստեղծել (**«Բանասարկուի նախանձով մահն աշխարհ մտավ»**. Իմաստ. Բ 24): Ուստի այժմ պարզ է, թե ին-

⁹ «Դրախտում բոլոր ծառերի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կերեք, որովհետև այն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կդառնաք» (Մճճ. Բ 16-17):

¹⁰ Տե՛ս Մճճ. Գ 19 («Հող էիր և հող էլ կդառնաս»): Առաջին մարդու մեղանչման պատճառով ամեծքի տակ է ընկնում նաև ամբողջ երկիրը՝ իր բուսական ու կենդանական աշխարհներով (տե՛ս Մճճ. Գ 17):

¹¹ Որ մարմնական հիվանդության կամ արատի պատճառը հաճախ մեղքն է, պարզ երևում է Ավետարանի որոշ հատվածներից: Օրինակ՝ անդամալուծի բժշկությունը Տերը կատարեց մեղքերի թողության շնորհմամբ (տե՛ս, օրինակ, Մատթ. Թ 1-7), իսկ Պրոբատիկեի ավազանի անդամալուծի բժշկելուց հետո նրան ասաց. «Ահա առողջացար, այլևս մի՛ մեղանչիր, որպեսզի ավելի չար բան քեզ չպատահի» (Հովհ. Ե 14): Այսպես էին հավատում նաև հրեաները. այդ էր պատճառը, որ ի ծնե կույրի մասին աշակերտները Տիրոջը հարցրին. «Մեղքն ո՞ւմն է, որ սա կույր է ծնվել՝ իրե՞՞նք, թե՞ իր հորն ու մոր» (Հովհ. Թ 2, տե՛ս նաև Սիրաք ԼԸ15):

չո՛ւ է երջանկություն, անցավ կյանքի ու անմահություն բնական փափագն ունեցող մարդու համար խիստ անհրաժեշտ ազատվել մեղքի իշխանությունից:

Առաջին մարդիկ կոչված էին հավիտենապես ապրելու Աստծո հետ միություն մեջ: Աստծո հետ միությունը նախևառաջ Աստծո կամքի հետ միությունն է: Ազատ կամքը մարդուն տրված էր գիտակցորեն ու ազատորեն Աստծուն իբրև իր նպատակի և կյանքի աղբյուրի ընտրելու համար, այսինքն՝ սիրելու Նրան ամեն ինչից առավել, իսկ առանց ազատության գոյություն չունի սեր: Բայց երբ եկավ ընտրություն կատարելու պահը, մարդն իր Արարչի հանդեպ անհավատարիմ գտնվեց ու հարեց սատանային՝ այսպիսով անցնելով վերջինիս իշխանության ներքո: Իսկ սրա պատճառն այն էր, որ առանց Արարչի կամքի հետ համաձայնության կամեցավ իրեն աստված տեսնել և իր կյանքի կենտրոնից Աստծուն հանելով՝ փոխարենն իր անձը դրեց: Մինչդեռ մարդուն իր պատկերը շնորհած Արարիչ Աստծո նպատակն ուրիշ բան չէր, քան մարդու աստվածացումը, բայց աստվածացումն իրենն՝ և ո՛չ թե իրենից դուրս մեկ այլ ճանապարհով, որն իրականում գոյություն չունի էլ:

Այսպիսով պարզ է դառնում, որ մեղքի արտադրիչը սեփական անձն Աստծուց առավել սիրելն է, այսինքն՝ եսասիրությունը՝ իր բոլոր դրսևորումներով: Եվ վերոնշյալ պատճառներով է մեղքը սովորաբար սահմանվում որպես «անհնազանդություն Աստծո պատվիրաններին», «եսասիրության կամ անձնասիրության արդյունք»:

Այս ամենից հետևում է, որ մարդը մեղքից ձեռքազատման միայն մեկ ճանապարհ ունի. վերականգնել Աստծո բացարձակ գերիշխանությունն իր ներսում՝ գահից իջեցնելով սեփական անձը: Մեղքի դեմ պայքարը հենց այս գործընթացն է. ամեն քայլափոխի շարժվել այնպես, ինչպես մեր Տեր Աստվածն է կամենում, և այնտեղ, ուր մեր սեփական ցանկություններն ու Աստծո կամքը չեն համընկնում, մերը մի կողմ դնել՝ կատարելու համար Աստծու-

նը: Եվ սա ճանապարհ է դեպի մարդու՝ Ադամով խաթարված աստվածային պատկերի վերականգնումը, այլև դեպի հավիտենական կյանք՝ Աստծո հետ միության մեջ: Քրիստոնյան, այսինքն՝ մեկը, ով Քրիստոսի հետևորդն է, առանց այս ճանապարհի չի կարող հասնել փափազելի երջանկությանը: Սեփական անձն Աստծով փոխարինելը, սեփական անձն Աստծո համար այս կերպ «կորցնելը»՝ Տիրոջ խաչը կրելով, նախապայմանն է քրիստոնյայի փրկության՝ համաձայն Տեր Հիսուս Քրիստոսի խոսքի. «Եթե մեկն ուզում է Իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա, իր խաչը վերցնի և Իմ հետևից գա: Որովհետև ով ուզում է իր անձն ապրեցնել, այն կկորցնի, և ով իր անձն Ինձ համար կորցնի, այն կգտնի» (Մատթ. ԺԶ 25-26):

Տեր Հիսուսը շարունակ ազդարարում է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը. ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Ինձանով» (Հովհ. ԺԴ 6): Այսինքն՝ «Ես եմ միայն, որ ճշմարիտ Աստված և Աստվածորդի լինելով՝ կարող եմ Ադամի մոլորված որդիներին դարձյալ բարձրացնել Հոր մոտ՝ վերականգնելով նրանց աստվածորդիության երբեմնի պատիվը: Ես եմ միայն, որ Ինքս որևէ մեղք չունենալով՝ ցույց եմ տալիս այն ճանապարհը, որով մարդը կարող է հաղթել մեղքին՝ այդ օտարածին ու մարդու ի բնե բարի բնության մեջ դրսից ներմուծված ախտին, ազատվել դրա հետևանքը հանդիսացող մահվանից և հավիտենապես ապրել: Հենց այդ նպատակով՝ ձեզ մեղքի ու մահվան իշխանությունից փրկելու և երկնքի արքայությանն արժանացնելու համար էր, որ եկա աշխարհ, այսինքն՝ մարդացա, երկրի վրա կատարեցի այն ամենն, ինչ կամեցավ Իմ Հայրը¹²: Հենց այդ նպատակով խաչի մահը ճաշակեցի և ապա հարուժյուն առա մեռելների միջից, համբարձվեցի երկնք և երկրորդ անգամ պիտի գամ՝

¹² Տիրոջ՝ երկրի վրա կատարած բոլոր գործերը՝ սկսած ծնունդից մինչև համբարձում, ինչպես նաև հոգեգալուստը, կոչվում են տնօրհնություններ կամ տնօրհնական գործեր:

հարուժյուն տալու մեռելներին և դատաստանի միջոցով արդարներին պարգևելու խոստացված արքայությունը, իսկ անհավատարիմներին կորստյան մատնելու»:

«Հիսուսը փրկիչ և Տիրոջ փրկություն է նշանակում՝ ժողովրդին փրկելու ոչ թե աշխարհի տեսանելի պատերազմողներից ու մարմնական ծառայությունից, այլ ՄեՆՂԻՅ ու ապականությունից, և ժառանգորդ դարձնելու ոչ թե Աբրահամին իբրև ընծա խոստացված երկրին, այլ ողջերի երկրին՝ երկնքի արքայությանը, և անճառելի բարիքներին, «որոնք աչքը չտեսավ, ականջը չսսեց, և մարդու սիրտը չընկան» (Հմմտ. Ա Կորնթ. Բ 9)»¹³ (Սարգիս Շնորհալի վարդապետ, 12-րդ դ.):



¹³ Տե՛ս Ա. Ընդհանրական Մեկնությունն եթաօնց թղթոց կաթողիկեայց, Կ.Պոլիս, 1828, էջ 17:

ՄԿՋԲՆԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՂՔ

Ինչպես Ադամը, Աստծուն կամովին թողնելով, մտավ սատանայի իշխանության տակ ու գրկվեց Աստծո որդին լինելու պատվից՝ ժառանգելով տառապալից ու մահվամբ պսակվող կյանքը, այդպես էլ «վերջին Ադամի»¹⁴ Քրիստոսի անունով մկրտվողը, կամովին¹⁵ դուրս գալով սատանայի իշխանության տակից և Սուրբ Հոգով մաքրվելով մեր նախահոր անկման պատճառը հանդիսացած մեղքից ու մինչ մկրտության պահին իր գործած բոլոր մեղքերից, դարձյալ որդեգրվում է Աստծուն: Սրանով նա հոգևոր վերածնունդ է ապրում՝ բռնելով դեպի հավիտենական կյանք կամ երկնքի արքայություն տանող ճանապարհը: Ուրեմն՝ սկզբնական մեղքից ձերբազատվելը նշանակում է սատանայի իշխանության տակից ելնել ու դարձյալ Աստծուն որդեգրվել՝ մահվանից դեպի կյանք քայլափոխել, սակայն սա դեռ չի նշանակում, թե փոխվում է մարդու մեղանշական դարձած բնությունը, և այն այլևս մեղքին ենթակա չէ: Մարդը շարունակում է մնալ ազատ կամքի տեր բանական էակ, ով իրավունք ունի չարի և բարու միջև ընտրություն կատարելու. այլև քնած չէ սատանան, որն իրեն ենթակա չար հրեշտակների միջոցով շարունակում է Աստծո որդեգիրներին մեղքի զանազան ծուղակների մեջ գցել՝ նպատակ ունենալով նրանց հեռացնել Աստծուց ու գրկել հավիտենական կյանքից: Այս իսկ պատճառով քրիստոնյան, ով մկրտությամբ սկիզբն է դնում իր փրկության գործընթացի, Մկրտության և Դրոշմի (Կնունք) խորհուրդներով Սուրբ Հոգուց

¹⁴ Տե՛ս Ա, Կոր. ԺԵ 45-47:

¹⁵ Եթե մկրտվողը մասնով է կամ անչափահաս, մկրտվում է իր ծնողների և կնքահոր հավատքով ու կամքով:

ստանում է շնորհ, այսինքն՝ աստվածային զորություն, օգնություն և պաշտպանություն: Եվ իր ողջ կյանքի ընթացքում, Աստծո շնորհի գորակցությամբ և իր իսկ ջանքերով, նա կարիքն ունի շարունակ պայքարելու փրկության գլխավոր արգելքի՝ մեղքի դեմ, որով և՛ սատանայի ու նրա դիվային ամբողջ բանակի: Ինչպես ասում է մեր Եկեղեցու հայրերից Եգնիկ Կողբացին (Ե դ.), «Այս կյանքը պատերազմ է»¹⁶: Իսկ «մեր պատերազմը,՝ ասում է ս. Պողոս առաքյալը,՝ մարմնի և արյան հետ չէ, այլ իշխանությունների ու պետությունների, այս աշխարհի խավարի տիրակալների և երկնքի ներքո գտնվող չար ոգիների հետ» (Եփես. Զ 12): Եվ մեր գորագլուխն ու առաջնորդն այս պայքարում Քրիստոսն է:

Բոլոր այն մեղքերը, որ քրիստոնյան գործում է մկրտությունից հետո, կոչվում են ներգործական մեղքեր, որոնք լինում են ներելի և մահուցափ կամ մահացու¹⁷: Սկզբնական կամ ազամական մեղքից մեկընդմիջտ մաքրվում ենք մկրտությամբ, իսկ ներգործական մեղքերից՝ շարունակաբար՝ ապաշխարությամբ: Ապաշխարությունը զղջումն է մեղքերի համար, դրանք խոստովանելը և ապա որպես գործված հանցանքների փոխհատուցում բարի գործեր, մանավանդ՝ ողորմության գործեր կատարելը:



¹⁶ Եգնիկ Կողբացի, Խղճ աղանդոց, Խրատք, էջ 254:

¹⁷ Այս մասին առավել հանգամանակից խոսվելու է սույն գրքի Բ մասում, Ա, 2 կետում:

ԽՂԾՄՏԱՆՔ ԵՎ ԶՂԶՈՒՄ

Աստված մարդուն ստեղծելիս նրա հոգում կարգել է մի զորություն՝ աներևույթ օրենսդիր, դատավոր կամ նույնիսկ դահիճ և միևնույն ժամանակ օգնական, որ կոչվում է խիղճ: Ինչպես ասում է Հայ Եկեղեցու՝ վերջին դարերի հայրերից Պողոս պատրիարք Ադրիանուպոլսեցին (18-19-րդ դդ.), «մարդու կամքը հանդուգն է և բանականության սահմանից շատ անգամ ելնում է, ուստի խիղճը նրան որպես սանձ տրվեց, որպեսզի առանց բանականության առաջնորդության չարչավի»¹⁸: Ուրեմն՝ խիղճը մարդուն տրված է նրան սխալից կամ մեղքից հետ պահելու և դեպի բարին առաջնորդելու համար: Ամեն անգամ, երբ մարդ սխալ է թույլ տալիս, խիղճն իր ձայնը բարձրացնում է՝ ազդարարելով այդ մասին: Սա իր «խայթոցներով» մարդու միտքը խռովեցնում, տագնապեցնում, ցավեցնում ու «տանջում» է՝ մարդուն ստիպելով գործել, այսինքն՝ սխալն ուղղել կամ որևէ կերպ դրանից ազատվել՝ «թողություն կամ ներում ստանալ»: Խիղճն իր հարվածներով մարդու մեջ առաջացնում է կատարված սխալի համար զղջում: Զղջումն ապաշխարության սկիզբն է. առանց սրտաբուխ զղջման չի կարող լինել և ճշմարիտ ապաշխարություն:

Կան մարդիկ, ովքեր մտքի փոքր սայթաքման դեպքում իսկ տագնապում են խղճի խայթոցներից, կան և այնպիսիք, ովքեր, թվում է, ընդհանրապես խիղճ չունեն, քանի որ ընդունակ են կատարելու ամենասոսկալի հանցանքներն իսկ՝ բնավ ցավ չզգալով կատարվածի համար: Իսկ պատճառն այն է, որ, ինչպես արդեն ասվեց, խիղճն առաջնորդվում է մարդու բանականությանից կամ մտքից, իսկ միտքը լուսավորվում է հավատքով ու աստվածային

¹⁸ Պողոս պատրիարք Ադրիանուպոլսեցի, Խրատի թանգարան, Բ հրատ., Ս. Էջմիածին, 2002, «Խղճմտանք» Ե, էջ 164:

օրենքով: Ուրեմն՝ խղճի «չափն ու կերպը» և սրանով պայմանավորված մարդկային վարքը մեծապես կախում ունեն նրանից, թե մարդն ինչ աշխարհայացք ունի, ինչին է հավատում և ինչպես: Մեղքի ճշմարիտ գիտակցություն, ճշմարիտ զղջման ու ապաշխարության համար շատ կարևոր է անձի աներկբա հավատը մահվանից հետո հոգու կենդանության, մեր մարմնի հարույթյան, Տիրոջ դատաստանի, մարդու՝ այս կյանքում կատարած գործերի քննության ու հատուցման, «դժոխք» կոչված հավիտենական մահվան՝ Աստծուց հեռացման, և «զբախտի»՝ Աստծո հետ միությունից հավիտենական կյանքի հանդեպ: Նա, ով սրտանց հավատում է այս ամենին, չի կարող ուշադիր չլինել իր անձին և «ահուղողով չաշխատել իր փրկության համար» (տե՛ս Փիլիպ. Բ 12)՝ Մկրտության ժամանակ ստացած լինելով ճշմարիտ քրիստոնյային այնքան անհրաժեշտ աստվածային երկյուղը՝ Սուրբ Հոգու յոթ շնորհներից կամ պարզեցներից մեկը¹⁹: Միևնույն ժամանակ շատ կարևոր է, թե մարդու սիրտը որքան անկեղծությամբ ու սիրով է «դարձի եկել» առ Աստված՝ նրան ընտրելով որպես իր կյանքի նպատակի և ամեն բան ծառայեցնելով նրա փառքին: Այսպիսին գիտի, որ մեղանչելով ինքը ցավ է պատճառում ու դառնացնում Տիրոջը, «տրտմեցնում Սուրբ Հոգին» (տե՛ս Եփես. Դ 30), այլև իրենից հեռացնում նրան, Ով իր մխիթարությունը, երջանկությունն ու կյանքի միակ իմաստն է:

Սակայն չափազանց զգայուն խղճմտանքը, եթե բանականության կողմից ճիշտ չկառավարվի, մարդուն կարող է հուսահատության տանել, ինչպես որ անսթափ վիճակում գտնվող, բայց թվացյալ խաղաղություն վայելող խղճմտանքը՝ դեպի ամեն տեսակ մեղքեր ու անօրինություններ: «Եթե մեկն ամեն ինչում անսուղ է խղճին՝ իբրև

¹⁹ Ըստ Եկեղեցու վարդապետների՝ փրկության համար քրիստոնյային տրվող Սուրբ Հոգու յոթ պարզեցները կամ «յոթնափյուն» շնորհներն են Աստծո երկյուղը, աստվածաշնորհունը, գիտությունը, գործունեությունը, խորհուրդը (կամ խրատը), իմացումը (կամ համեմարը) և իմաստությունը: Տե՛ս Եսայի ԺՍ, 2-3, Գ. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 582:

խղճահար, է՛լ առավել է սխալվում, ուստի խղճի հետ խոհեմությամբ պետք է վարվել: Պետք է իսպառ արհամարհել այն կամ լիովին հետևել նրան, այլ բանականության լույսով ու օրենքով բարեկարգել այն և տարակուսական բաներում, ուր խիղճը տկարանում է որոշում կայացնել, դիմել իմաստուններին ու օրինազետներին և նրանցից սովորել, թե ինչ է պետք անել... Խղճահարությունը չար բան է, բայց ավելի չար է անխիղճ լինելը: Ուստի պետք է խղճամտանավոր լինել, այսինքն՝ իբրև փոքրօգի՝ ամեն ինչից չվախենալ և իբրև հանդուգն՝ ամեն ինչին չվստահել, այլ իբրև արի՝ չվախենալ, ուր պետք է, և վախենալ, ուր պետք է»²⁰:

Աստված սեր է՝ այնքան մեծ, որ մեր ամենասոսկալի մեղքն իսկ որպես փոշեհատիկ կորչում է այդ սիրո օվկիանոսում, եթե մենք սրտանց զղջում ու վստահությունը դիմում ենք Աստծուն: Ս. Եփրեմ Ասորին (Դ դ.) Հիսուսի անունից ասում է. «Դու քո մեղքերի համար թողություն խնդրիր յոթ անգամ, և ես յոթանասուն անգամ յոթ անգամ կասեմ քեզ, որ քեզ թողություն եմ շնորհում»²¹: Մեծապես զղջացող մեղավորին օգնության են գալիս Հիսուսին հավատով դիմող բոլոր այն մաքսավորները, պոռնիկները, դիվահարները և այլք, ովքեր իրենց մեղքերին թողություն ստացան: Օգնում է Պետրոս առաքյալը, ով թեև իր անարիություն պատճառով երիցս ուրացավ Տիրոջը, սակայն մեծապես զղջալով ու դառնապես լաց լինելով՝ արժանացավ թողության և առաքելական մեծազույն շնորհների: Օգնում է Տիրոջ խաչակից ավազակը, ով խոնարհ սրտից բխած ու հավատքով ասված մի խոսքով արժանացավ փրկության: Օգնում են աստվածաշնչյան բազմաթիվ խոսքեր, որոնք հավաստում են Աստծո մեծ սերն ու գթությունը բոլոր մարդկանց հանդեպ:

«Աստված այնպես սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին

²⁰ Պողոս պատրիարք Ադրիանուպոլսեցի, «Խղճմտանք» Գ-Դ, էջ 164:

²¹ Եփրեմ Ասորի, Յորդորակ ապաշխարութեան, Օրթագիտ, 1837, էջ 10:

Որդուն տվեց, որպեսզի ով հավատում է նրան, կորստյան չմատնվի, այլ ընդունի հավիտենական կյանքը: Որովհետև Աստված Իր Որդուն աշխարհ չուղարկեց, որ նա դատի աշխարհը, այլ որ աշխարհը նրանով փրկվի» (Հովհ. Գ 16-17):

«Սա՛ է Իմ Հոր կամքը, Ով Ինձ ուղարկեց. ում Հայրը տվել է Ինձ, նրանցից ոչ ոքի չկորցնեմ» (Հովհ. Զ 39):

«Գթասիրտ, ողորմած է Տերը, համբերատար ու բազումողորմ: Տերն իսպառ չի բարկանում և հավիտյան ոխ չի պահում: Մեր մեղքերի համեմատ չվարվեց մեզ հետ և մեր անօրենությունների համեմատ չհատուցեց մեզ: Այլ որքան բարձր է երկինքը երկրից, այնքան զորեղ է Տիրոջ ողորմությունն իրենից երկյուղածների հանդեպ» (Սաղմ. ՃԲ 8-11):

«Նա ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և հասնեն ճշմարտության գիտությունը» (Ա Տիմ. Բ 4), և **«համբերատար է ձեր հանդեպ, որովհետև չի կամենում, որ որևէ մեկը կորստյան մատնվի, այլ կամենում է, որ ամենքը գան ապաշխարություն»** (Բ Պետ. Գ 9):



ՄԵՂՔԵՐԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուրեմն՝ Տերն է, որ «կամենում է, որ ամենքը գան ապաշխարութեան» (Բ Պետ. Գ 9), այսինքն՝ գղջան իրենց մեղքերը, մաքրվեն նրանցից և իրենց կյանքն առաքինություններով պտղավետ դարձնեն: Եկեղեցին որպես մեղքերից մաքրվելու ճանապարհ ցույց է տալիս խոստովանությունը, որով ենք թողություն գտնում մեր մեղքերին: Աստված անշուշտ առանց մեր խոստովանության էլ ամեն բան գիտի, սակայն Ի՛նքն է պահանջում. «Նախ դու խոստովանի՛ր քո անօրենությունները, որ արդարացվես» (Եսայի ԽԳ 26):

Հայտնի է, որ երբ մարդ վիշտ կամ ներքին խնդիրներ է ունենում, որոնք տանջում են նրա հոգին, կարիք է ունենում իր ներքին անցուղարձի մասին որևէ մեկին պատմելու: Սա տեղի է ունենում, օրինակ, այնժամ, երբ հիվանդը դիմում է հոգեբանին՝ պատմելով նրան իր անհանգստություններն ու ներքին խնդիրները: Մեղքը նույնպես «խնդիր» է, ցավ և հիվանդություն, ինչպես վկայում է նաև մեր Տերը՝ Իրեն բժիշկ, իսկ մեղավորներին հիվանդ կոչելով²²: Ուստի կարիք կա այս ցավը բացահայտելու: Մեղքը թաքցնելը միայն է՛լ առավել է հիվանդացնում մարդու հոգին, ինչն էլ ի վերջո կարող է պատճառ դառնալ նրա մահվան՝ հավիտենական կյանքից զրկման: Այս տեսանկյունից դիտելիս՝ ակնհայտ է դառնում մեղքի խոստովանության կարևորությունը:

Զղջացող մարդը նախ դիմում է Տիրոջը, իր հանցանքը կամ հանցանքները խոստովանում նրան ու թողություն հայցում՝ մեղքն այլևս չկրկնելու որոշմամբ, որն իրագործելու համար Տիրոջից օգնություն է խնդրում՝ գիտենալով իր տկարությունը: Այնուհետև, համաձայն սեփական խղճի կարիքի ու պարտադրանք-

²² «Բժիշկն առողջներին չէ պետք, այլ հիվանդներին» (Մատթ. Թ 12):

քի, առանձնաբար խոստովանում է օծյալ հոգևորականի²³ առաջ՝ անհրաժեշտության դեպքում նրանից խորհուրդներ ստանալով: Քահանայի առաջ կատարված այսպիսի խոստովանությունը կոչվում է առանձնական կամ անհատական խոստովանություն: Քահանան մեղքերի արձակում է տալիս խոստովանողին՝ հատուկ բանաձևի միջոցով և երկու ձեռքերը խոստովանողի գլխին դնելով²⁴: Մեղքեր արձակելու այս իշխանությունը քահանաներին, ովքեր ձեռնադրության ու օծման միջոցով առաքյալների իրավահաջորդն են, տրված է Տեր Հիսուսից՝ համաձայն Նրա խոսքի. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապեք երկրի վրա, կապված կլինի երկնքում, և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում» (Մատթ. ԺԼ 18): Այլև երբ հարությունից հետո երևաց աշակերտներին, նրանց վրա փչելով՝ Իր իշխանությունը փոխանցեց նրանց՝ ասելով. «Առե՛ք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, ներված կլինեն, և եթե մեկի մեղքերը չներեք, ներված չեն լինի» (Հովհ. Ի 23):

Խոստովանության ու մեղքերի արձակման միջոցով թողություն արժանացած, այսինքն՝ մեղքերից մաքրված մարդն է միայն, որ իրավունք ունի ճաշակելու Տեր Հիսուսի մաքրամաքուր Մարմինն ու Արյունը՝ ս. Հաղորդությունը՝ Տիրոջ հետ միավորվելու և հոգևոր կյանքում զորանալու համար, քանի որ Սրբությանը պետք է սրբությանմբ մոտենալ: Ուստի և Պատարագի արարողության ընթացքում կամ նրանից անմիջապես առաջ նրանք, ովքեր պատրաստվում են այդ օրը հաղորդվելու, ծնկի են գալիս քահանայի առաջ, և հավատացյալներից մեկը բոլորի անունից կարդում է տա-

²³ Օծում ունեցող հոգևորականները բոլոր ամուսնացյալ կամ կուսակրոն քահանաներն են՝ ամուսնացյալ քահանա, արեղա, վարդապետ, եպիսկոպոս:

²⁴ Տե՛ս Գ. Տաթևացի, Գիրք քարոզության, որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741թ., էջ 313 («...ինչպես այնտեղ [մկրտության ժամանակ] քահանայի երկու ձեռքերն են սպասավորում, աչրպես էլ այստեղ [մեղքերի թողություն տալիս] քահանան երկու ձեռքերն է դնում [խոստովանողի] գլխին»):

րատեսակ մեղքերի խոստովանության մի աղոթք՝ «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն» սկզբնավորությամբ, և սրա ավարտին քահանան կարդում է մեղքերի արձակման բանաձևը՝ «Ողորմեսցին»։ Խոստովանության այս ձևը կոչվում է ընդհանրական խոստովանություն։

Քանի որ որևէ մարդ անկարող է իր բոլոր մեղքերը հիշել ու խոստովանել, ուստի «ինչ հիշում, խոստովանում ու ապաշխարում է, այդքանով սրբվում է, և ինչ էլ չի կարողանում հիշատակել, այն Քրիստոսի Մարմինն ու Արյունն է սրբում»²⁵, որը բաշխվում է մեր «մեղքերի թողության համար»՝ ըստ Տիրոջ խոսքի (Մատթ. ԻԶ 26)։

Ի հավելումն՝ հարկ է նշել, որ ամեն մեղք չէ, որ թողության արժանանալու համար պարտադիր կերպով պետք է խոստովանվի անհատական խոստովանության ժամանակ։ Շատ մեղքեր թողնվում են նաև միայն ընդհանրական խոստովանությամբ²⁶։

«Ո՛վ կարող է իր հանցանքները տեսնել, իմ գաղտնիքներից մաքրի՛ր ինձ, Տե՛ր, և օտարներից պահի՛ր Քո ծառային, որ ինձ չտիրեն։ Այդժամ մեծ մեղքերից մաքուր ու անբիծ կլինեմ» (Մաղմ. ԺԸ 13-14)։

Թողություն տալու իշխանություն ունեցող մարդկանց առաջ մեղքերի խոստովանությունը կիրառվել է դեռևս մովսիսական շրջանում, և այս մասին վկայություններ կան Աստվածաշնչում (տե՛ս Ղևտ. Ե 4-10, Թիվք Ե 6-7)։ Հովհաննես Մկրտչի մոտ գնացողներն էլ «Հորդանան գետում մկրտվում էին նրանից՝ խոստովանելով իրենց մեղքերը» (Մատթ. Գ 6, Մարկ. Ա 5)՝ «մեղքերի թողության համար» (Ղուկ. Գ 3)։ Առաքյալներին նույնպես «հավատացյալներից շատերը գալիս խոստովանում էին ու պատմում իրենց արարքները» (Գործք ԺԹ 18)²⁷։

²⁵ Տե՛ս Գրիգոր Վարդապետ, Խօսք ճշմարիտ հաւատքի և առաքինաւեր վարքի մասին, Երևան 1992, էջ 55-56։

²⁶ Այս մասին առավել հանգամանակից խոսվելու է սույն գրքի Բ մասի Ա, 2 կետում։

²⁷ Այս ամենից բացի, կա վկայություն նաև մեղքերի՝ «միսյանց խոստովանության» մասին։

Սրտի անկեղծ զղջմանը նայելով է Աստված թողությունն տալիս մեղավորին, ինչը Տերը ցույց է տալիս մաքսավորի օրինակով, ով «արդարացած գնաց տունն» (տե՛ս Ղուկ. ԺԸ 14), սակայն մարդու առաջ կատարված անկեղծ խոստովանությունը նպաստում է մարդու խոնարհեցմանը, որն էլ մեզ վրա է իջեցնում Աստծո շնորհը. «Տերը հակառակ է ամբարտավաններին. նա շնորհ է տալիս խոնարհներին» (Առակ. Գ 34, Հակ. Դ 6, Ա Պետ. Ե 5)։ «Իր ամբարշտությունը ծածկողը հաջողությունն չի ունենա, բայց բացահայտողը և իրեն պախարակողը կդառնա սիրելի» (Առակ. ԻԸ 13)։

Ձխոստովանված ու թողության չարժանացած, մարդու սրտի գաղտնարանում թաքնված մեղքը, որքան էլ, խղճի քարացման կամ քնեցման հետևանքով, թվա, թե մոռացվել ու անհետացել է, մի օր անպայման պիտի արթնանա, գլուխ բարձրացնի՝ խղճի տանջանք պատճառելով։ Քրիստոսյան հավատում է, որ, միևնույն է, «չկա ծածուկ բան, որ չհայտնվի, և ոչ գաղտնի բան, որ չիմացվի» (Մատթ. Ժ 26), քանի որ Տեր Հիսուսի Երկրորդ գալստյանը դատաստանի առաջ է կանգնելու և իր բոլոր մեղքերն ամենքին հայտնի են դառնալու։ Բայց միայն այդ Մեծ դատաստանը չէ, որ սպասում է ամեն մարդու։ Իր մարմինն ու երկիրը լքող մարդուն սպասում է սատանայի կողմից հարուցվող մի մարտ, որը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մարդու հոգին լքում է մարմինը՝ գնալու հոգիների կայանները (օթևանները)՝ արդարների կամ մեղավորների, ուր ուրախալից հույսով կամ դառնություններով պիտի սպասի Մեծ դատաստանի օրվա հատուցմանը։ Ըստ Եկեղեցու հայրերի ընդհանուր նկարագրության՝ մարդու մահվան ժամանակ հայտնվում է նրա հրեշտակը (կամ հրեշտակներ)՝ հոգին տանելու (հմմտ. Ղուկ. ԺԶ 22)։ Հոգին երկնքի ներքո գտնվող օդային ոլորտով անցնելիս (որն,

Հակոբոս առաքյալն ասում է. «Ձեր մեղքերը միսյանց խոստովանե՛ք և միսյանց համար աղո՛թք արեք, որպեսզի բժշկվեք» (Հակոբ. Ե 16) (թեև ըստ Եկեղեցու որոշ հայրերի՝ այս խոսքը նույնպես վերաբերում է քահանաների առջև կատարվող խոստովանությանը. տե՛ս, օրինակ, Ս. Ծնորհալի, Մեկնություն եօթանց թղթոց կաթողիկեաց, էջ 169)։

ինչպես գիտենք, սատանայի և նրա հրեշտակների իշխանությունն ուղորտն է), հարձակման է ենթարկվում բազմաթիվ չար ոգիների (չար հրեշտակների, այսերի, դևերի) կողմից, որոնք մարդուն հիշեցնում են նրա մեղքերը, այսինքն՝ այն, ինչը նրանում պատկանում է իրենց: Այս մարտում հոգու պաշտպանն ու օգնականն է նրա հրեշտակը (կամ բարի հրեշտակներ), որն արդարի հոգին ազատելով այս հարձակումներից՝ բարձրացնում-հասցնում է երկինք՝ արդարների կայանները՝ Անդրանկաց Եկեղեցին, ուր հավաքված են հրեշտակները և արդարների ու սրբերի հոգիները (տե՛ս Եբր. ԺԲ 22-23): Այստեղ հոգին ուրախալից հույսով սպասում է Մեծ դատաստանի օրվա հատուցմանը, երբ արդեն ո՛չ միայն հոգով, այլև հարուստի շունքը մարմնով, այսինքն՝ կատարելապես, պիտի ճաշակի հավիտենական բարիքները Երկնքի արքայության մեջ: Իսկ մեղսաշատ հոգին, այս մարտում պարտվելով, չի կարողանում անցնել երկինք և մնում է երկնքի ներքո՝ մեղավորների կայանում՝ այնտեղ երկյուղով ու հոգու տանջանքով սպասելու Մեծ դատաստանին ու վերջնական դատապարտությանը²⁸:

Եկեղեցին սովորեցնում է, որ մեզ հիշեցվելու են միայն այն մեղքերը, որոնք այս կյանքում թողուլթյան չեն արժանացել: Այս իրողությունը պատկերավոր կերպով ներկայացվում է այսպես. ամեն

²⁸ Հոգու ելքից հետո տեղի ունեցող պատերազմի մասին տե՛ս, օրինակ, *Ս. Անտոնի վարքը* (սկզբնապես գրված Ա. Աթանաս Ալեքսանդրացու կողմից), Յալամատրք (Տեր Իսրայելի), հտ. Ա, Կ. Պոլիս, 1834, էջ 34. *Սովհան Ոսկերթյան*, Յալամատրք, հտ. Բ, [Յալեյում], Շառ Ի (Մատթ. ԻԳ 44-ի մեկնությունը), էջ 47. *Մաշտոց*, Կանոն մեծի թաղման, Կանոն Մեծի պզուց, Վաղարշապատ, 1905, էջ 389, 462, 464-465, 487, 503-504. *Ժամագիրք*, Նիս Երրք, 1986, *Ս. Ներսէս Ընդհակի*, «Աշխարհ ամենայն» (Քեզ միշտ մերձ ծանիր), էջ 35, «Աստուած անեղ», էջ 113-114 (Ղօղեպ սարսեաց), «Ես ասացի», էջ 124-125 (Յանչատման հոգույն). *Սարգիս Ընդհակի*, Մեկնություն եօթանց թղթոց կաթուղիկեայց, էջ 156. «Ս. Յովհաննէս ստաբեայի և անտարանչի անջումը», սրա մեկնությունը (*Ն. Լամբրոնացի*), «Գանձասար» Զ, Ե., 1996, էջ 486, 542-545. Գ. *Տաթևացի*, Գիրք քարոզութեան որ կոչի Ջմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740թ., էջ 231-232, Ամստան հատոր, էջ 587-589, Գիրք հարցմանց, էջ 669-670. Վ. *Այգեկցի*, րատներ, Ե., 1999, էջ 36-38: Այս *ընտրանքը* (Օրմանեան, Տեղիք աստ., էջ 185) կամ հետմահու *պատերազմը* (ու. Գ. Տաթևացի), «առանձնական դատաստան» (ռուս. частный суд) անվամբ

անգամ, երբ մարդ մեղանչում է, նրա մեղքը գրի է առնվում նրա պահապան հրեշտակի²⁹ կողմից, ով տեսնում է նրա բոլոր գործերը: Սակայն խոստովանությունը ու քահանայական իշխանությունը թողուլթյան արժանանալուց հետո գրանցված մեղքը մեկնումիշտ ջնջվում է³⁰ և այլևս չի հիշվելու ոչ հոգու ելքից հետո, ոչ էլ Մեծ դատաստանի ժամանակ: Ինչպես իրավամբ ու գեղեցկորեն ասում է Հայ Եկեղեցու վարդապետներից Սարգիս Շնորհալին, «Այն ամենն, ինչ մեկը մի անգամ խոստովանում է, կորցնում է, լինի դա մեղք, թե առաքինություն»³¹:

Մահվանից հետո տեղի ունեցող այս պատերազմն ու նրա արդյունքը, ինչպես նաև Տիրոջ երկրորդ գալստյանը հետևող Մեծ դատաստանն են պատճառը, որ մարդիկ մեռնելուց առաջ կարիք են ունենում իրենց մեղքերը խոստովանելու և քահանայից թողու-

ընդունում են նաև Օրթոդոքս ու Կաթոլիկ Եկեղեցիները: Սակայն, ի տարբերություն վերջիններիս, մեր Եկեղեցին չի ընդունում, թե «առանձնական դատաստանի» արդյունքով հոգիներն անմիջապես դժոխք կամ դրախտ են գնում, այլ սրա փոխարեն ունի կայանների վարդապետությունը, ինչպես նաև չի ընդունում կաթոլիկյան «քավարանի» վարդապետությունը (տե՛ս Սահակ քհն. Տեր Սարգսեան, Քննական կրօնագիտություն, 1897, էջ 1001-1017, Ա. Տեր Միքելեան, Հայաստ. ս. Եկեղեցու քրիստոնեականը, էջ 526-536, Մ. Օրմանեան, Տեղիք աստուածաբանութեան, էջ 184-188, Протоиерей Григорий Дьяченко, Вера, надежда, любовь (Кате-хизические поучения), т. 1, Москва, 1993, ст. 430-438; Иеромонах Серафим Роуз, Душа после смерти, С-Петербург, 1995, ст. 80-102, 192-205):

²⁹ «Յուրաքանչյուր մարդ ունի պահապան հրեշտակ, որը թվում է մեր բոլոր գործերը և ներկայացնում Աստծուն՝ մեր բարի գործի համար ուրախանալով, իսկ չարի համար տրտմելով» (տե՛ս Գ. Տաթևացի, Ամստան հատոր, էջ 357): «Երբ մահուկը ստանում է բանական հոգին, նրա վրա պահապան հրեշտակ է կարգվում միևնչ մահ» (անդ, էջ 582): Այլև՝ ասվում է, թե պահապան հրեշտակը միշտ իր պահպանալի կողքին է («Միշտ սո մեզ է ես տեսանե՛ գործս մեր», Ամստան, էջ 314): Պահապան հրեշտակների մասին տե՛ս նաև Մատթ. ԺԼ 10, Գործք ԺԲ 15, Մ. արք. Օրմանեան, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղեմ, 1985, էջ 140, Ծ. արք. Գալուստեան, Հայագիտ. սուրբեր, Ե., 1997, էջ 414-415:

³⁰ Համեմատիր, օրինակ, ու. Ն. Ընդհակու «Հաստով խոստովանիմ»-ի հետևյալ խոսքերի հետ. «... ջնջեա՛լ գձեռագիր լանցանաց իմոց և գրեա՛ զանուն իմ ի դպրութեան կենաց» («... ջնջիր իմ հանցանքների գիրը և իմ անունը գրիր կյանքի գրքում») (Ժամագիրք, Հանգստյան ժամերգություն):

³¹ Ս. Ընդհակի, Մեկնություն եօթանց թղթոց կաթուղիկեայց, էջ 142:

թյունն ու ս. Հաղորդությունն ստանալու՝ գիտենալով, որ միայն այս կյանքում կարող են իրենց մեղքերին թողություն ստանալ: Ս. Ներսես Շնորհալու հանրահայտ «Հաւատով խոստովանիմ» աղոթքի մեջ մի քանի տուն ներկայացնում է հենց այս մասին խնդրանքներ, որոնցով հայ հավատացյալը շատ հաճախ, գիտակցաբար թե հանգետս, դիմում է Աստծուն:

«Աղբյուր անմահության, իմ սրտից ապաշխարության արտասու՛ւք բխեցրու, ինչպես պոռնիկ կնոջինը, որպեսզի լվամ մեղքերս նախքան այս աշխարհից ելնելը. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Պարգևի՛չ ողորմության, պարգևիր ինձ ուղղափառ հավատով, բարի գործով և Քո սուրբ Մարմնի և Արյան հաղորդությամբ Քեզ մոտ գալու. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Բարերա՛ր Տեր, բարի հրեշտակի՛ն հանձնիր ինձ՝ հոգիս քաղցրությամբ ավանդելու և երկնքի ներքո գտնվող³² չար ոգիների միջով անխռով անցկացնելու. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:


Ճշմարիտ լո՛ւյս Քրիստոս, իմ հոգուն արժանացրու կանչվելուս օրն ուրախությամբ տեսնելու Քո փառքի լույսը և բարիքների հույսով հանգստանալու արդարների օթևաններում մինչև Քո մեծ գալստյան օրը. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս»:

Եվ ուրեմն, քանի որ չգիտենք ոչ Տիրոջ գալստյան ու Մեծ դատաստանի և ոչ էլ այս աշխարհից մեր ելքի օրն ու ժամը, որը ցանկացած օր ու ժամ էլ կարող է լինել, ապա մեր մեղքերի ապաշխարությունը պիտի չհետաձգենք վաղվան՝ Տիրոջ պատմած առակի անմիտ հարուստի պես այսօր անհոգության մեջ կենցաղավարելով ու «Աստծով չհարստանալով» (տե՛ս Ղուկ. ԺԲ 16-

³² Տե՛ս ծխթ. 6:

21): Ապաշխարության, այսինքն՝ մեր մեղքերի զղջման, խոստովանության, թողության, առաքինությունների, մանավանդ՝ ողորմության գործերի համար մեզ այսօրն է տրված:

«Արդ, արթո՛ւն եղեք, որովհետև չգիտեք, թե տանտերը երբ կգա՝ երեկոյա՞ն, թե կեսգիշերին, հավախոսի՞ն, թե առավոտյան: Գուցե հանկարծակի գալով՝ ձեզ քնի մեջ գտնի: Ուրեմն ինչ որ ձեզ եմ ասում, ամենքի՛ն եմ ասում՝ արթո՛ւն եղեք» (Մարկ. ԺԳ 37):



**ՄԵՂՔԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՐԱՍՏՎՈՂՆԵՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐՈՇ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ³³**

- Մինչև 15 տարեկանը գործված մեղքերն ինքնաբերաբար ջնջվում են՝ որպես մանկուկության ու անգիտության շրջանում գործվածներ, ուստի որևէ մեկը պարտավորված չէ դրանք խոստովանելու³⁴:

- Պետք չէ խոստովանել ոչ գիտուն կամ այնպիսի քահանային, ով չգիտի խոստովանողի մեղքերը գաղտնի պահել³⁵:

- Քառասնորդական պահքը պահելուն պատրաստվողները խոստովանում էին նախքան պահքի մեջ մտնելը և նրա ավարտին՝ Զատիկին ս. Հաղորդություն ստանալուց առաջ (մեր հայրերից ոմանց կողմից աշխարհական հավատացյալներին թելադրվել է խոստովանել տարվա բոլոր կիրակի օրերին, ներառյալ և Քառասնորդական պահքի կիրակիները)³⁶:

- Խոստովանությանը պետք է նախապես պատրաստվել՝ խոկալով գործված մեղքերի շուրջ և ըստ անհրաժեշտության նաև գրավոր նշումներ անելով՝ խոստովանության ընթացքում մեղքերը չմոռանալու համար:

- Մեղքերը խոստովանելիս պետք է խուսափել շատախոսությունից ու դատարկաբանությունից, ինքնարդարացումից, ուրիշների մեղքերը բացահայտելուց և խոսել ըստ էության՝ միայն

սեփական մեղքերի կամ տկարությունների մասին:

- Եթե մեկն ինչ-որ մեղք խոստովանում է՝ դարձյալ նույնը գործելու մտադրությամբ, նշանակում է նրա զղջումն անկեղծ չէ, ուստի այսպիսի խոստովանությունն ընդունելի չէ:

- Եթե խոստովանված մեղքը նորից է գործվում, դարձյալ պետք է խոստովանել:

- Ամոթը պատճառ պիտի չդառնա մեղքերի խոստովանությունից խուսափելու. «Մի՛ ամաչիր խոստովանել քո մեղքերը, մի՛ դիմակայիր գետի հոսանքին» (Սիրաք Դ 32):



³³ Բերվող ցանկը կազմված է հիմնականում ըստ «Յայոց կանոնագրքի» և ս. Գ. Տաթևացու՝ խոստովանությանը վերաբերող գրվածքների (տե՛ս «Ամառան» և «Զմեռան» հատորներ, «Գիրք հարցմանց»):

³⁴ Տե՛ս «Կանոնագիրք Յայոց», հտ. Բ, Ե. 1971, «Կանոնք Բասողի», ՃԼԱ, էջ 131- 132:

³⁵ Ըստ եկեղեցական օրենքի՝ խոստովանողի մեղքը հայտնելը մեծ հանցանք է, և այն գործող քահանան ենթակա է կարգալուծման: Տե՛ս «Կանոնագիրք Յայոց», հտ. Ա, Ե. 1964, «Կանոնք Գրիգորի Լուսավորչի», էջ 248, «Կանոնք Ներսեսի և Ներշապիոյ» (Դվինի Բ ժողով, 554թ.), էջ 486:

³⁶ Տե՛ս, օրինակ, Յովհ. Երզնկացի, ըստ Ողոր քրիստոնեաներուն, Անթիլիաս, 1984, էջ 68, և Գ. Տաթևացի, Զմեռան հատոր, էջ 319:

ՄԱՍ Բ

Բացատրություն «Հրաժարիմքի» և մեղքերի ընդհանրական խոստովանության աղոթքի խոսքերի

Մեղքերի ընդհանրական խոստովանությունը՝ «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն» աղոթքը, ամենայն հավանականությամբ, ս. Աթանաս Ալեքսանդրացուն ու ս. Եփրեմ Ասորուն (Դ դ.) վերագրվող և Ե դարում հայերեն թարգմանված նմանատիպ ավելի ընդարձակ մի աղոթքի³⁷ համառոտ տարբերակն է: Հաճախ նրանից առաջ արտասանվում են սատանայից և նրա ամբողջ զորությունից հրաժարման մի բանաձև՝ «Հրաժարիմքը», և ապա մեր Եկեղեցու ուղղափառ հավատքի խոստովանությունը՝ «Խոստովանիմք և հաւատամք»-ը: Այս երեքի խոսքերն էլ, որոնց հեղինակ է համարվում ս. Գրիգոր Տաթևացին³⁸, զետեղված են հայոց «Ժամագրքի» առաջին էջերում՝ Գիշերային ժամերգության բնագրից առաջ:

Հարկ է նշել, որ նմանատիպ «Մեղաները» վանական միջավայրի արդյունք են և սկզբնապես ստեղծված ու նախատեսված են եղել միայն անապատականների կամ վանականների համար: «Մեղան անապատականը ասում էր խոստովանահօրը և միաժամանակ իւր յատուկ յանցանքն ասում», ինչպես նաև՝ «Մեղան ասվում էր ամէն առաւօտ վանքում ծնկաչոք ի լուր ամենքի. որովհետև այն խիստ պահանջները, որ Մեղայում կան՝ ոչ մի կրօնաւոր չէր կարող լրիւ

³⁷ Տե՛ս Գիրք աղօթից ասացեալ սրբոյն Եփրեմի ուրիմ Ասորոյ, Զ տպագր., Երուսաղէմ, 1933, էջ 11-29: Այսպիսի «Մեղայի» մի հին տարբերակ է նաև հայ մատենագրության մեջ ս. Եփազր Պոնտացուն վերագրվող, սակայն հավանաբար նրա գրչին չպատկանող «Խոստովանութիւնը» (տե՛ս Սրբոյ հօրն մերոյ Եւագրի Պոնտացոյ վարք և մատենագրութիւնը, Վենետիկ, 1907, էջ 337): Կա նաև ս. Գրիգոր Նարեկացուն վերագրվող մի խոստովանություն (տե՛ս Գիրք որ կոչի Հարանց վարք, 1720, էջ 558):
³⁸ Տե՛ս Ն. արք. Պողարեան, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 5-6:

կատարել, հետևապէս որևէ մեղք մէկը կ'ունենար: Մեղան այնուհետև մտնում է նաև Եկեղեցու մէջ, և հաղորդուողը պարտաւոր է Մեղան ասել, ապա հաղորդուել»³⁹:

Գրքի այս մասում փորձ է կատարված որոշ բացատրություններ տալու «Հրաժարիմքի» և «Մեղայի» խոսքերի վերաբերյալ:

«ՀՐԱԺԱՐԻՄՔ»

Հավատացյալները, քահանայի գլխավորությամբ, «Հրաժարիմքն» արտասանում են երեք անգամ՝ դեպի արևմուտք շրջված և ձեռքերն իջեցրած՝ ի կոր⁴⁰: Երեք անգամ «Հրաժարիմքն» ասելուց հետո դարձյալ շրջվում են դեպի արևելք:

Հրաժարիմք ի սատանայէ եւ յամենայն խաբէութենէ նորա, ի պատրանաց նորա, ի խորհրդոց նորա, ի գնացից նորա, ի չար կամաց նորա, ի չար հրեշտակաց նորա, ի չար պաշտօնէից նորա, ի չար կամարարաց նորա և յամենայն չար զօրութենէ նորա հրաժարելով հրաժարիմք:

Հրաժարվում ենք սատանայից և նրա ամբողջ խաբեությունից, նրա պատրանքներից, խորհուրդներից, ընթացքից, նրա չար կամքից, չար հրեշտակներից, չար սպասավորներից, չար կամարարներից և նրա ամբողջ չար զորությունից հրաժարվելով հրաժարվում ենք:

Ինչո՞ւ ենք շրջվում դեպի արևմուտք:

³⁹ Գիտ եպս., Արևելեան անապատականը և «Նարեկ»-ը, Երուսաղէմ, 1937, էջ 94-95:
⁴⁰ Ափերն իրար կցած (ձեռնամած) արտասանում են հավատքի խոստովանությունը՝ լինի «Հրաժարիմքին» հետևող հավատամքը, թե «Նիկիական» հանգանակը, իսկ ձեռքերը փոքր-ինչ բարձրացրած ու ասիերը դեպի վեր պարզած (ձեռնարաց)՝ հիմնականում փառաբանական աղոթքները:

Քրիստոնյաներս հավատում ենք, որ մեր Տերն Իր երկրորդ գալստյանը հայտնվելու է արևելքից, ուստի և Նրա գալստյան մշտարթուն սպասումով՝ աղոթելիս հայացքներս ուղղում ենք դեպի արևելք⁴¹: Այս խորհրդով է, որ եկեղեցու խորանը, ուր գետեղված է ս. Սեղանը, գտնվում է եկեղեցու արևելյան կողմում, և հավատացյալները եկեղեցում աղոթելիս կանգնում են դեմքով դեպի խորանը: Այսպես իր միտքն ու սիրտը դեպի արևելք ուղղած հավատացյալին «Թիկունքից» հարվածում է սատանան՝ ջանալով խափանել նրա աստվածահաճո ընթացքը: Սատանայից և նրա ողջ գորությունից հրաժարվելիս դեպի արևմուտք շրջվելով՝ խորհրդանշաբար հակահարված ենք հասցնում՝ «ո՛չ» ենք ասում, մեզ Թիկունքից հարվածողին և ապա դարձյալ շրջվում դեպի արևելք: Ամեն անգամ «Հրաժարիմքն» ասելով՝ մենք դարձյալ ու դարձյալ հրաժարվում ենք սատանայի իշխանությունից և հավաստում Տիրոջ հանդեպ մեր հավատարմությունը:

Ս. Հովհաննես առաքյալը սատանայի հոգին «խաբեության հոգի» է կոչում՝ ի հակադրություն Աստծո Հոգու, Ով «ճշմարտության Հոգի» է (Ա Հովհ. Գ 6): Սատանան մարդուն խաբելով՝ նրա միտքը պատրելով է նրան դրդում մեղանշելու, ինչպես վարվեց և Եվայի հետ: Ինչպես Ինքը մեր Տերն է վկայում, սատանան «ի սկզբանե մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց, քանի որ ճշմարտություն չկա նրա մեջ: Երբ նա սուտ է խոսում, իր էությունից է խոսում, քանի որ սուտ է և ստի հայր» (Հովհ. Ը 44): Նրան հատուկ է չարն իբրև բարի ցույց տալ, բարին՝ իբրև չար, կարող է նաև «լուսո հրեշտակի կերպարանք» առնել, ինչպես ասում է Պողոս առաքյալը (տե՛ս Բ Կորնթ. ԺԱ 14-15), և «արդա-

⁴¹ Տե՛ս Մատթ. ԻԴ 27: Ըստ «Առաքելական կանոնների»՝ աղոթելիս դեպի արևելք շրջվելու հրամանը կարգվել է Տիրոջ առաքյալների կողմից (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, էջ 27):

րության սպասավորների կերպարանքով» հանդես եկող իր սպասավորների միջոցով, խաբեական ու թվացյալ ճշմարտությամբ, արդարությամբ, սրբությամբ ու իմաստությամբ, մարգարեություններով, հրաշագործություններով ու զանազան նրբարվեստներով մոլորեցնել անփորձ հոգիներին և նույնիսկ, եթե հնար է, նաև ընտրյալներին՝ համաձայն Տեր Հիսուսի կանխագուշացման (Մարկ. ԺԳ 22-23):

Սատանան իր հրեշտակների միջոցով մարդու մտքի կամ սրտի⁴² մեջ իր խորհուրդներն (մտածումներ, տՏՎօրսո) ու դրանց միջոցով իր կամքը՝ ցանկություններն է «գցում»⁴³ և երբ մարդ հավանում ու հնազանդվում է դրանց, թույլ է տալիս, որ սատանան իր վրա իշխանություն ձեռք բերի, քանզի «ծառա եք նրան, ում հնազանդվում եք», - ասում է Պողոս առաքյալը (Հռոմ. Զ 16): Սատանայի կամքի համաձայն էլ մարդը նրա չար գործերն է կատարում, նրա ընթացքը բռնում, նրա ճանապարհներով ընթանում խաղալիք դառնալով նրա չար հրեշտակների ձեռքին: Նախքան Վերջին ընթրիքից հետո Տիրոջ մատնությունը, «սատանան արդեն իսկ Սիմոնի որդի Իսկարիոտացի Հուդայի սրտի մեջ դրել էր, որ մատնի Նրան» (Հովհ. ԺԳ 2): Անանիան ու Սափիրան էլ, երբ կեղծիք թույլ տվեցին Պետրոսի առաջ, վերջինս ասաց. «Անա՛նիա, ինչո՞ւ սատանան քո սրտի մեջ դրեց, որ խաբես Սուրբ Հոգուն» (Գործք Ե 3):

Սատանան խաբում ու շեղում է մարդկանց ոչ միայն իր անտեսանելի սպասավորների՝ չար հրեշտակների միջոցով, այլև իր մահկանացու սպասավորների՝ կախարգության զանազան տե-

⁴² Տե՛ս Մատթ. ԺԵ 18-19, Թ 4, ԺԲ 34, Ե 28 ևն, ուր սիրտը չպետք է հասկանալ նյութական իմաստով, այն, կարելի է ասել, ներքին մարդն է, մարդու ներքին ամբողջությունը, «խորհուրդների շտեմարանը» (ս. Գրիգոր Լուսավորիչ):

⁴³ Բարի հրեշտակներն էլ, գերազանցապես յուրաքանչյուր քրիստոնյային Աստծուց տրված պահապան հրեշտակը, մարդու սրտի մեջ բարի խորհուրդներ ու ցանկություններ են «գցում» ներշնչում:

սակներով զբաղվողներին, կռապաշտներին, անհավատներին, Քրիստոսին՝ միակ ճշմարիտ Աստծուն չհավանողներին, ինչպես նաև իր բոլոր կամարարների, այսինքն՝ իր կամքը կատարողներին, իրենից խաբված ու իր ձեռքին գործիք դարձած անձանց միջոցով: Տերը, լավ գիտենալով մի կողմից՝ խաբելու, մոլորեցնելու և այսպիսով իրեն ծառայեցնելու արվեստում սատանայի բազմահնար մեծ վարպետությունը, իսկ մյուս կողմից՝ մեր անփորձությունն ու դյուրագայթությունը, մեզ պատվիրում է միշտ զգուշ, զգոն և «օձի պես խորագետ» (Մատթ. Ժ 16) լինել: «Ձգո՛ւյ՜ եղեք սուտ մարգարեններից, ովքեր ոչխարի հագուստով են ձեզ մոտ գալիս, բայց ներսից հափշտակող գայլեր են» (Մատթ. է 15): Պողոս առաքյալն էլ ասում է. «Ձգո՛ւյ՜ եղեք, չլինի թե մեկը գրավի ձեզ ճարտարամտությամբ ու սնոտի խաբեությունը» (Կորնո. Բ 8):

Մարդու սրտի մեջ սատանայի գցած խորհուրդներից ծնված ցանկությունները խաբում են մարդուն և մեղք ծնում, մեղքն էլ իր հերթին է մարդուն խաբում՝ նրա միտքը թմրեցնելով ու սիրտը կարծրացնելով: «Յուրաքանչյուր ոք փորձվում է հրապուրվելով ու խաբվելով իր ցանկություններից: Այնուհետև ցանկությունը հղանալով՝ մեղք է ծնում», - ասում է Հակոբոս առաքյալը (Հակոբ. Ա 14-15), իսկ Պողոս առաքյալը հորդորում է միջոցներ ձեռք առնել, որպեսզի մեզանից «ոչ ոք չկարծրանա մեղքի խաբեությունը» (Եբր. Գ 13):

Ահա այս «խաբեպատիր ցանկությունները» (Եփես. Դ 22), դրանցից ծնված մեղքերն ու ամենայն մեղսականն է, որ կազմում է այն աշխարհը, որն ատել է հրամայում Ավետարանը. «Մի՛ սիրեք աշխարհը և ինչ որ կա նրանում: Եթե մեկն աշխարհը սիրում է, իր մեջ չունի Հոր սերը, քանզի ինչ որ աշխարհի մեջ կա, մարմնի ցանկություն է, աչքերի ցանկություն և այս կյանքի ամբարտավանություն, որ Հորից չէ, այլ այս աշխարհից» (Ա Հովհ. Բ 16):

կամ՝ «Չգիտե՞ք, որ այս աշխարհի հանդեպ սերը թշնամություն է Աստծո դեմ, քանզի ով ուզում է այս աշխարհը սիրել, իրեն թշնամի է դարձնում Աստծուն» (Հակոբ. Դ 4): Ահա մեղքի այս «աշխարհը» պիտի չսիրենք և ո՛չ թե այն երկիր-աշխարհը, որում բնակվում ենք և որը Տիրոջ ձեռքի գործն է, ուստի և բարի է. «Աստծո բոլոր ստեղծածները բարի են, և չկա մի բան, որ պիտանի չլինի» (Ա Տիմ. Դ 4): Մեղքի այս «աշխարհի» իշխանն է սատանան (տե՛ս Հովհ. ԺԲ 31, ԺԴ 30), և այդ «աշխարհն» է, որ Աստծուն «չի ճանաչում» (Հովհ. Ժէ 25) և «ատում է» Հիսուսին ու Նրա ճշմարիտ հետևորդներին, ովքեր «այս աշխարհից չեն» (Հովհ. ԺԵ 18): Եվ այս «աշխարհից» են փախչում ու «իրենց անարատ պահում» ճշմարիտ կրոնավորները (տե՛ս Հակոբ. Ա 27):

Վերոգրյալից կարող է թյուր տպավորություն ստեղծվել, թե եթե մեր չար խորհուրդները, ցանկություններն ու մեղքերը սատանայի խաբեություն արդյունք են, ապա մարդն ազատվում է դրանց պատասխանատվությունից: Ուրեմն էլ ինչի՞նչ է պետք ապաշխարությունը, կամ ինչո՞ւ պիտի կանգնենք դատաստանի առաջ:

Այս հարցի պատասխանը տանք մեր Եկեղեցու հայրերի խոսքերով. Ներսես Լամբրոնացին (12-րդ դ.) ասում է. «[Սատանան ու նրա դեերը] չեն բռնանում մարդկանց վրա, եթե մեկը կամովին չի ցանկանում չարը», «առանց մեր կամքի նա (սատանան) չի կարող մեզ զցել խորհուրդների մեջ», քանզի մարդու «մշտաշարժ հոգին անձնիշխան է. ինչ կամենում է, այն էլ խորհում է»⁴⁴: Ս. Ներսես Շնորհալին իր «Աշխարհ ամենայն» երգի մի տան մեջ ասում է. «Չարի խորհուրդները խաբում են հոգիս, խորասույզ անում», իսկ հաջորդ տան մեջ՝ «Կամովին կորացա», և մեկ այլ տան մեջ՝

⁴⁴ Տե՛ս Ն. Լամբրոնացի, Յովհաննու Անջման պատմութեան մեկնութիւնը, «Գանձասար» Զ, էջ 534, 511, 537:

«Ընտրեցի չարը, ընդունեցի կամովին՝ հույներ մեղքերի»⁴⁵: Իսկ ս. Գրիգոր Տաթևացին ձևակերպում է. «Մարդու գործած բոլոր մեղքերն արդյունք են չարի խաբեություն և մարդու թույլ ու հեշտասեր կամքի»⁴⁶: Ուրեմն, սատանայի խաբեությունը է մարդը մեղանշում, բայց ո՛չ առանց իր կամակցություն ու հավանություն. մարդը մեղանշում է ոչ թե հարկադրանքի տակ, այլ կամովին: Ինչպես որ փրկություն էլ հասնում է ո՛չ թե միայն Աստծո շնորհով կամ ո՛չ թե միայն իր մարդկային կամավոր ջանքերով (Հիսուսի խոսքն է՝ «Առանց Ինձ ոչինչ անել չեք կարող»։ Հովհ. ԺԵ 6), այլ այս երկուսի համագործակցությամբ: Քանզի Աստված էլ, որ մարդուն Իր պես անձնիշխան է ստեղծել, նրա կամքի վրա չի բռնանում: Այսպես ուրեմն, սատանայի միջոցով մեղանշում ենք ու նրա հետ դատապարտվում, Աստծո միջոցով մեղքից սրբվում ու նրա հետ հավիտյանս թագավորում:

Իսկ ինչպե՞ս փրկվել սատանայի խաբեությունից. հայացքներս միմիայն «արևելք»՝ դեպի մեր ամենագոր Տեր Աստվածն ուղղելով: Սատանայի՝ մեզ հրամցվող խորհուրդներն ու ցանկությունները մերժելու գորավոր զենքեր են Աստծո հանդեպ մեր անսասան հավատքն ու վստահությունը և Աստվածաշնչի, ինչպես նաև Եկեղեցու սրբակյաց հայրերի միջոցով մեզ մատուցվող Աստծո խոսքը: Անսպասում սատանայից փորձություն ենթարկվելիս հենց այս զենքերն էր գործածում մեր Տերը (տե՛ս Մատթ. Դ 1-11)՝ մեզ օրինակ տալով, և սա է հորդորում նաև նրա առաքյալը՝ Պողոսը. «Առե՛ք հավատքի վահանը, որով կկարողանաք մարել չարի բոլոր մխացող նետերը, և առե՛ք փրկության սաղավարտն ու Հոգու սուսերը, որն Աստծո խոսքն է» (Եփես. Զ 16-17):

⁴⁵ «Ստորհուրդը չարին խաբեմ գիտցիս, խորասոյգ առնեմ», «Կամաւ կորացաւ...», «Ընտրեցի զչարն, ընկալալ կամաւ ըզհոյս մեղաց»:

⁴⁶ Գ. Տաթևացի, Ամստան Բատոր, էջ 212 («Ձամենայն մեղս գոր գործէ մարդ, ի խաբեութենէ չարին լինի և ի թոյլ և ի ճեշտասէր կամաց իւրոց»):

Այլև Տիրոջից պատվեր ունենք, ինչպես արդեն նշվել է, միշտ զգուշ ու զգոն լինելու, փորձությունների մեջ չընկնելու կամ դրանք հաղթահարելու համար շարունակ ազդեցություն (տե՛ս Մատթ. ԻԶ 41, 38), իսկ չարի խաբեությունները հասկանալու և ճանաչելու համար՝ նրանց վերջնական արդյունքին նայելու: Սուտ մարգարեների դեմ զգուշացնելուց հետո Տերն ասում է. «Նրանց պտղի՛ց կճանաչեք նրանց. մի՞թե փշից խաղող կամ տատասկից թուղ են քաղում: Այսպես ամեն բարի ծառ բարի պտուղ է տալիս, և չար ծառը՝ չար պտուղ: Չի կարող բարի ծառը չար պտուղ տալ, և չար ծառը՝ բարի պտուղ» (Մատթ. էջ 16-18):

«Հնազանդվե՛ք Աստծուն ու դիմադրե՛ք Չարախոսին [սատանային], և նա կփախչի ձեզանից: Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ: Մեղավորներ՛, մաքրե՛ք ձեր ձեռքերը և ձեր սրտերն ուղի՛ղ դարձրեք, երկմիտներ՛: [Ձեր մեղքերի համար] տառապե՛ք, սգացե՛ք ու լացե՛ք. ձեր ծիծաղը թող փոխվի սուգի, և ձեր ուրախությունը՝ տրտմության: Խոնարհ եղեք Տիրոջ առաջ, և Նա ձեզ կբարձրացնի» (Հակոբ. Դ 7-10), որպեսզի Ի՛ր «ուրախությունը ձեր մեջ լինի, և ձեր ուրախությունը կատարյալ լինի» (Հովհ. ԺԵ 11):

Սատանայի և նրա դեմ մարդու վարած այս պատերազմի մասին լսելուց հետո շատերի մեջ կարող է մի տրամաբանական հարց ծագել. իսկ ո՞րն է պատճառը, որ Աստված, ամենակարող լինելով, միանգամից չի վերացնում սատանային ու թողնում է, որ մարդիկ շարունակ փորձվեն նրանից: Չէ՞ որ Աստված կարող էր դեռևս առաջին մարդկանց՝ սատանայի սաղրանքին ենթարկվելուց հետո՝ պատժել չար «օձին» ու վերացնել, բայց ինչո՞ւ չարեց, ո՞րն է իմաստն այս ամբողջ տառապանքի ու պայքարի:

Պատասխանը տալիս դարձյալ դիմենք մեր Եկեղեցու հայրերին:

Ահա թե ինչ է այս մասին ասում ս. Գրիգոր Տաթևացին. «Եթե այն ժամանակ գեհենի կրակով պատժեր նրան, ահա մարդկանց շատ բարի գործեր կորչելու էին. նաև այն [պետք է գիտենալ], որ փորձելու միջոցով սատանան շատերի պսակների առիթը դարձավ»⁴⁷, այսինքն՝ շատերի փրկության ու մի այնպիսի երանելի անպատում կյանքի, որը որևէ մեկն այս կյանքում երեակայել իսկ չի կարող (տե՛ս Ա Կորնթ. Բ 9): Մարդուն հենց այսպիսի մի կյանք շնորհելու համար Աստված ստեղծեց այս երկիրն ու մարդուն. Աստծո մեծ սերն ու բարուլթյունն էին պատճառը սրանց արարման. «Բնությամբ Բարին, չհանդուրժելով, որ անճառ բարին միայն ինքն ունի, վեցերորդ առավոտյան ստեղծեց մարդուն իր պատկերով»⁴⁸ (ս. Ներսես Շնորհալի)՝ նրան իրեն սեղանակից դարձնելու երկնքի արքայության մեջ՝ մասնակից դարձնելով իր հավիտենական փառքին ու երանությանը: Որպեսզի մարդը կարողանա իրապե՛ս ճաշակել հավիտենական անպատում բարիքների քաղցրությունը և նրա ուրախությունը կատարյալ լինի, նա այս երկրում նեղուլթյունների ու վշտերի դառնության համն էլ պիտի առնի: Եթե դառնություն չես ճաշակել, քաղցրությունն ինչպե՞ս կարող ես զգալ ու վայելել:

«Պատերազմեցի բարի պատերազմը, ասում է ս. Պողոս առաքյալը, ընթացքս ավարտեցի, հավատքը պահեցի: Եվ հիմա ինձ սպասում է արդարության պսակը, որն ինձ կտա Տերը՝ արդար Դատավորը, այն Օրն իբրև Հատուցում. և ո՛չ միայն ինձ, այլև բոլոր նրանց, ովքեր սիրեցին Նրա հայտնությունը» (Բ Տիմ. Դ 7-8):

47 Գ. Տաթևացի, Ձմեռան հատոր, էջ 324:

48 Ս. Ներսես Շնորհալի, «Երգ վասն վեցերորդի ատուր արարչութեան» (ուրբաթ) (Ժամագիրք, Առավոտյան ժամերգություն):

«ԶՂՋՈՒՄՆ»

«Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան»

Մեղքերի ընդհանրական խոստովանության այս աղոթքը (կոչում ենք նաև «Մեղա»՝ ըստ առաջին բառի), որ 10 հատվածից է կազմված, հավատացյալը կամ հավատացյալների խումբն ասում է քահանայի առաջ, ծնրադիր: Քահանան ինքն է այն կարգում կամ հավատացյալների խմբից մեկը, և ամեն հատվածից հետո հավատացյալների խումբը «Մեղայ Աստուծոյ» է արտասանում, որին ի պատասխան քահանան ասում է. «Աստուած թողուլթիւն շնորհեսցէ», այսինքն՝ «Թող Աստված թողուլթյուն շնորհի»: Սակայն պատշաճ է, որ այս խոստովանությունը հավատացյալներն ասեն և ոչ թե քահանան, քանզի խոստովանողները հավատացյալներն են: Երևում է՝ ընդհանրական խոստովանության այսպիսի կարգը շատ վաղուց՝ դարեր առաջ է մտել մեր Եկեղեցի, թերևս ժողովրդի մեծամասնության գրաճանաչ չլինելու կամ անգրագիտության պատճառով, քանի որ այս մասին խոսում է նաև ս. Գ. Տաթևացին.

«Եվ ըստ օրենքի՛ չէ այն, որ նրանք (հավատացյալները) նստում են, քահանաները՝ խոստովանում, իսկ նրանք [ամեն հատվածից] հետո [«Մեղայ Աստուծոյ»] կրկնում. այնպես է ստացվում, կարծես թե քահանան է նրանց խոստովանում»⁴⁹:

Ա. Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ և սրբուհւոյ Աստուածածնին և առաջի քո, հայր սուրբ, զամենայն մեղս, զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ

49 Գ. Տաթևացի, Ձմեռան հատոր, էջ 320 («Եւ չէ այն ըստ կարգի՛ որ Աստիճ Առքա, և քահանայքն խոստովանին, և Առքա ի հետ. ա՛յնպէս է, որպէս թէ քահանայն Առքա խոստովանի»):

և գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ: Մեղայ Աստուծոյ:

Ա. (1) Մեղանչեցի Ամենասուրբ Երրորդութեան՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու դեմ: Մեղանչել եմ Աստծո դեմ: Խոստովանում եմ Աստծո, սուրբ Աստվածածնի և քո առաջ, Հայր սուրբ, գործածս բոլոր մեղքերը: (2) Քանզի մեղանչեցի խորհուրդով, խոսքով և գործով, կամովին և ակամա, գիտութեամբ և անգիտութեամբ: Մեղանչեցի Աստծո դեմ:

Ա1. Քանի որ մարդու ցանկացած մեղք՝ գործված սեփական անձի դեմ, թե իր նման մարդու կամ Աստծո որևէ արարածի, ոտնահարումն է Աստծո կամքի և հաճելի չէ Նրան, ուստի և գործվում է Նրա դեմ: Սա գիտակցելով՝ իր մեղքերը զղջացողը դրանք խոստովանում է Աստծո առաջ՝ որպես իր և Նրա միջև միջնորդ ունենալով քահանային և բարեխոս՝ ս. Աստվածածնին:

Ա2. Մարդը մեղանչում է խորհուրդներով, խոսքերով և գործերով: Այս մեղքերը կարող են գործվել կամովին, երբ մարդ դրանք սեփական հոգևորութեամբ ու առանց որևէ պարտադրանքի է գործում. ակամա, երբ մարդ անզգուշաբար, առանց չար գիտավորութեան, ինչպես նաև արտաքին կամ ներքին պարտադրանքի⁵⁰ տակ է մեղանչում. գիտութեամբ, այսինքն՝ քաջ գիտակցելով, որ իր արածը մեղք է, սակայն չերկյուղելով ու արածի համար ցավ չզգալով. և անգիտութեամբ, այսինքն՝ չիմանալով, որ այն, ինչ գործում է, մեղք է:

Ակամա և անգիտութեամբ գործված մեղքերը համարվում են ներելի մեղքեր, իսկ գիտութեամբ ու կամովին գործվածները՝ մահուլի կամ մահացու: Ներելի մեղքերը կարող են ներվել ու քավվել

նաև առանց քահանայի առաջ կատարվող անհատական խոստովանութեան, միայն զղջմամբ, Աստծուց ներում հայցելով և ընդհանրական խոստովանութեամբ, ինչպես նաև ողորմութեան գործերով, պահարկով, հավատքով կատարվող խաչակնքումներով, «Տերունական» ու այլ աղոթքների արտասանութեամբ և ուրիշ նամաստիպ միջոցներով, որոնցով՝ ակամա մեղանչած անձը հավատքով ու Տիրոջ հանդեպ վստահութեամբ հանգստացնում է իր խիղճը⁵¹:

Յանկացած մեղք, նույնիսկ շատ փոքր կարծվածը, եթե գործվում է կամովին ու գիտութեամբ, և գործողն այնուհետև չի զղջում դրա համար ու չի ապաշխարում, համարվում է մահուլի մեղք⁵² և չի ներվելու: Այս մեղքի մասին է խոսում ս. Հովհաննես առաքյալը Ա Հովհ. Ե 16-17-ում: Եվ հակառակը՝ նույնիսկ ամենածանր մահուլի, այսինքն՝ կամովին ու գիտութեամբ գործված մեղքը դառնում է ներելի և թողութեան արժանանում, եթե այն գործած անձնավորությունն այնուհետև սրտանց զղջում է դրա համար, մեղքը խոստովանում ու ապաշխարում:

«Այն ծառան, որ իր տիրոջ կամքը գիտի և նրա կամքի համաձայն չի վարվում, շատ ծեծ կուտի» (Ղուկ. ԺԲ 47), այսինքն՝ մահացու մեղքի մեջ մնալու և չապաշխարելու պատճառով կարժանանա Տիրոջ դատաստանին ու հավիտենական պատժին: «Իսկ ով չգիտի և ծեծի արժանի բան է գործում, սակավ ծեծ կուտի» (Ղուկ. ԺԲ 48), այսինքն՝ անգիտութեամբ ու ակամա գործած ներելի մեղքի (կամ ճշմարտապես ապաշխարելու հետևանքով ներելի դարձած մեղքի) համար, միայն այս կյանքում, իր խղճատանքի դատաստանին ենթարկվելով կպատժվի:

Բ. Մեղայ հոգևով և զօրութեամբ սորա, մտօքս և շարժմամբ սորա, մարմնով և զգայութեամբ սորա: Մեղայ զօրութեամբ հոգ-

⁵⁰ «Արտաքին պարտադրանք» ասելով նկատի ունենք մեղանչողի վրա մարդկանց կամ չար ուժերի կողմից եղած պարտադրանքը, իսկ «ներքին պարտադրանքը» մեղանչողի բնության կողմից է:

⁵¹ Տե՛ս Գ. Տաթևացի, Ամառան հատոր, էջ 216:

⁵² Տե՛ս Յովհ. Մանդակունի, Ծառք, Վեներտիկ, 1860, էջ 115, Սարգիս Ծնորհալի, Մեկնութիւն..., էջ 592:

ւոյս՝ խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ, շռայլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ և թերամտութեամբ: Մեղայ Աստուծոյ:

Բ. (1) Մեղանչեցի հոգով և նրա զորութեամբ (զորութիւններով), մտքով և նրա շարժմամբ (շարժումներով), մարմնով և նրա զգայութեամբ (զգայարաններով): (2) Մեղանչեցի հոգուս զորութեամբ՝ խորամանկութեամբ և անզգամութեամբ, հանդգնութեամբ և երկչոտութեամբ, շռայլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրավութեամբ, (3) չարահավանութեամբ, հուսահատութեամբ և թերահավատութեամբ: Մեղանչեցի Աստծո ղեմ:

Բ1. Եկեղեցու վարդապետները սովորաբար որպէս մարդ արարածի բաղկացուցիչ մասեր են նշում հոգին, միտքը և մարմինը: Մարդու կազմութեան այսպիսի եռատարր դասակարգումը մեր եկեղեցական գրականութեան մեջ այնքան տարածված է, որ այն կարելի է հանդիպել Եկեղեցու հայրերի կողմից ստեղծված ամեն տեսակ գրվածքների մեջ՝ սկսած «Նիկիոյ դաւանութիւն» անունը կրող «Հաւատամքից», վերջացրած հոգևոր երգերով ու շարականներով: Ընդունված են նաև այն տեսակետները, թե մարդը կազմված է հոգուց, շնչից և մարմնից՝ ըստ Ա. Թեո. Ե 23-24-ի⁵³, այլև՝ որ մարդը կազմված է հոգուց և մարմնից: Այս երեք դասակարգումները համապատասխանում են միմյանց, և առաջին երկու դասակարգումներն ի վերջո հանգում են երրորդին, քանզի թե՛ շունչն է դիտվում որպէս հոգու մաս⁵⁴ և թե՛ միտքը: Մարդը մեղանշում է թե՛ հոգով, թե՛ մտքով և թե՛ մարմնով, ուստի և այստեղ խոստովանում է դրանցով իր գործած մեղքերը:

⁵³ Տե՛ս, օրինակ, Ն. Լամբրոնացի, Յովհաննու Ընչման պատմութեան մեկնութիւնը, էջ 537:
⁵⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Պարզև եպս. Մարտիրոսյանի, «Նս եմ ճանապարհը» գրքում, Ե., 1995, էջ 23:

Բ2. Հոգին նույնպէս բաղկացուցիչ մասերից է կազմված, որոնք կոչվում են «զորութիւններ»⁵⁵: Ըստ մեկ դասակարգման՝ հոգին ունի երկու մաս կամ զորութիւն՝ միտք և կամք⁵⁶, իսկ ըստ մեկ ուրիշ դասակարգման՝ հոգին եռամասնյա է: «Մեղայի» սույն հատվածում հենց այս վերջին դասակարգումն է արտացոլված, ինչը կերևա հետագա շարադրանքից: Այսպիսով՝ հոգու երեք զորութիւններն են՝ բանական (միտք, բանականութիւն), ցասմնական (կամ բարկական. ցասում կամ բարկութիւն) և ցանկական (ցանկութիւն)⁵⁷: Այս երկու դասակարգումները նույնպէս չեն հակասում միմյանց. քանզի միտքն ու բանական զորութիւնը նույնն են, իսկ ցասմնական ու ցանկական մասերը, ըստ առաջին դասակարգման, կամքին վերաբերող զորութիւններ են: Հոգու վերոհիշյալ զորութիւններից յուրաքանչյուրն ունի իր առաքինութիւնները, որոնք Եկեղեցու աստվածաբան հայրերը բաժանել են երկու խմբի՝ աստվածային առաքինութիւններ (կամ՝ աստվածխոսային) և մարդկային⁵⁸ (կամ՝ բարոյական): Այս առաքինութիւններից յուրաքանչյուրն ունի իրեն հակադիր մոլութիւնը կամ խիտը, իսկ «մարդկային» կոչվող առաքինութիւններից յուրաքանչյուրն ունի ևս երկու մոլութիւն, որոնք ներկայացնում են տվյալ առաքինութեան երկու տարբեր շեղումներ: Ահա այս վերջիններն են «Մեղայի» սույն հատվածում թվարկված առաջին 6 մեղքերը, ինչպէս ավելի պարզ երևում է ներկայացվող աղյուսակում:

Ինչպէս երևում է այս աղյուսակից, հոգու բանական զորութիւնն, ի տարբերութիւն մյուս զորութիւնների, ունի ևս մեկ

⁵⁵ Մտքի շարժումների և մարմնի զգայարանների անդրադառնալու ենք այս աղոթքի հաջորդ երկու հատվածների բացատրութեան մեջ:

⁵⁶ Տե՛ս Գ. Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 248, Մկրտիչ վրդ. Արծրունեան, Բացատրութիւն հրաժարման և զղջման բանից սրբոց հարց..., Երուսաղէմ, 1854, էջ 25:

⁵⁷ Տե՛ս Գրիգոր Վարդապետ, էջ 22-32:

⁵⁸ Գ. Տաթևացի, Ամառան ատոր, էջ 50, Գիրք հարցմանց, էջ 571, 578:

Նոգու գորություններ

բանական	ցասմնական	ցանկական
Աստվածային առաքինություններ		
հավատ	հույս	սեր
Մարդկային առաքինություններ		
խոհեմություն արդարություն	արիություն	ողջախոհություն
Մարդկային առաքինությունների հակադիր մոլությունները		
անմտություն անհրավություն	սրտմտություն	բղջախոհություն
Մարդկային առաքինությունների հակադիր մոլությունները		
(աջ) խորամանկություն (ձախ) անզգամություն	(աջ) հանդգնություն (ձախ) երկշոտություն	(աջ) շռայլություն (ձախ) ժլատություն

առաքինություն, որ կոչվում է **արդարություն**⁵⁹. սա ուղղիչն ու կառավարիչն է մարդկային կամ բարոյական մյուս բոլոր առաքինությունների: Մարդու մեջ այս առաքինության առկայությունն է գրավականը մյուս բոլոր առաքինությունների ճիշտ գործունեություն. նա է, որ թույլ չի տալիս, որ առաջանան դրանց հակադիր ու տարբեր մոլությունները: Ուստի և պատահական չէ, որ «արդարութիւն» և «ուղղութիւն» կամ «արդար» և «ուղիղ» բառերը գրաբարում հոմանիշ են: Ինչպես ասվում է Սուրբ Գրքում. «Մի՛ խոտորվիր ո՛չ աջ, ո՛չ ձախ» (Բ Օրենք Ե 32, Առակ. Դ 27)՝ որպես առաջնորդ ունենալով արդարությունը: Սակայն եթե արդարությունն ինքն է խաթարվում, վերածվում է անիրավության

⁵⁹ Հաճախ արդարությունը համարվում է ոչ թե բանական գորության առաքինությունը, այլ «ամբողջ հոգու» («բոլոր անձինն»):

(անարդարություն, անօրենություն) ու դուռ բացում զեխություն համար (ամեն տեսակ անկարգության ու անչափավորության), որոնք էլ «Մեղայի» այս հատվածում թվարկվող հաջորդ մոլություններն են:

Ուրեմն՝ անիրավության ու զեխության (այսինքն՝ արդարության պակասի) հետևանքով **խոհեմությունը**, մարդու մեջ «ավելանալով» (դեպի «աջ» խոտորվելով), վերածվում է խորամանկության, որը մարդուն մղում է կեղծելու, խաբելու ու դավելու, ուրիշներին գիտակցաբար ու շահախնդրորեն մոլորեցնելու՝ ի վնաս նրանց, և այլ սույնպիսի չարիքներ գործելու: Իսկ «պակասելով» (դեպի «ձախ» խոտորվելով)՝ խոհեմությունը վերածվում է անզգամության, որի մեջ գտնվող մարդը, իր խղճի անզգայության պատճառով, կամովին, հոժարություն և թույլատրելին ու անթույլատրելին գիտենալով հանդերձ, համառորեն անթույլատրելին, այսինքն՝ չարիք է գործում՝ արհամարհելով բարին ու ճշմարտությունը:

Արիությունը հոգու այն գեղեցիկ առաքինությունն է, որով մարդ հանուն Աստծո և ճշմարտության համբերում ու տոկում է ամեն նեղության, Տիրոջ պատվերի համաձայն չի վախենում «նրանցից, ովքեր մարմինը սպանում են, բայց հոգին սպանել չեն կարող» (Մատթ. Ժ 28), մարդկանց երկյուղից երեսպաշտություն ու խարդախություն չի անում: Սակայն այս առաքինությունն արդարության պակասի պատճառով կարող է վերածվել հանդգնության կամ երկշոտության: Հանդգնությունը, մարդու սրտից հանելով Աստծո հանդեպ երկյուղն ու մարդկանց հանդեպ ամոթը, կարող է մղել դեպի ամեն տեսակ մեղքեր, որոնք կատարվում են ամբարտավանորեն ու ինքնավստահորեն: Հանդգնությունն են նաև Աստվածությունը վերաբերող բաները մարդկային տկար մտքով չափից դուրս քննելը, աստվածային հայտնի ճշմարտությունների ոտնահարումը, ինքնաստեղծ «ճշմարտությունների» հաստատումը

և այլն: Իսկ երկչոտություն արդյունքն այն է, որ մարդ ո՛չ թե Աստուծոց է երկնչում՝ որդիաբար կամ ծառայաբար (տե՛ս Մատթ. Ժ 28, Ղուկ. ԺԲ 5)⁶⁰, այլ մարդկանցից, սատանայից ու դևերից: Ընկրկում է դժվարությունների առաջ, ուստի կաղում առաքինությունների ճանապարհին: Իր մարմինն ու այս երկրային կյանքը կամ որևէ երկրային բարիք կորցնելու ահից ընդունակ է դառնում մարդահաճություն ու ամեն տեսակ անազնվություն, նույնիսկ իր Տիրոջն ու հավատն ուրանալուն կամ եղբայրներին ու ազգակիցներին դավաճանելուն:

Ողջախոհությունը հոգու ցանկական մասի առաքինությունն է և ցույց է տալիս մարդու մաքուր, անախտ սերն ու ցանկություններն Աստծո և իր նմանների հանդեպ, այլև չափավորությունն ու խելամտությունը նյութական բարիքների գործածություն մեջ: Սակայն արդարություն պակասի դեպքում կարող է վերածվել շռայլության և ժլատության⁶¹: Շռայլությունը մարդուն մղում է անխոհեմաբար վատնելու Աստծուց տրված բարիքներն իր մարմնի ցանկությունների կամ սնափառության բավարարման համար, իսկ ժլատությունը մարդու մեջ մեռցնում է ցանկությունը Աստծուց իրեն տրված բարիքներից կարոտյալներին բաժին հանելու՝ տվյալ անձի սրտում աճեցնելով նյութի հանդեպ ցանկությունն ու հիվանդագին կառչածությունը նրանից: Եվ այս ամենը բխում է Աստծո հանդեպ եղած մաքուր սիրո ու ցանկության պակասից, քանզի Աստծուն ճշմարտապես սիրողը կարոտյալից իր ձեռքը չի պահում, նաև իրեն տրված բարիքները չի գործածում մարմնի մեղսական ցանկությունների բավարարման

⁶⁰ Որդիակամ երկյուղը արգասիքն է Հոր հանդեպ սիրո ու պատկառանքի, այսինքն՝ Հոր սերը կորցնելու երկյուղն է, իսկ ծառայակամ երկյուղը գործված մեղքի դիմաց պատժվելու ահն է:

⁶¹ «Ցանկակամն անելի է արքշտութիւնն [շռայլությունը], և պակաս՝ ոչտութիւնն [ժլատությունը]» (Վիրակոս Երզնկացի (ԺԳ-ԺԴ դդ.), տե՛ս Եւագրի Պոնտացոյ վարք և մատենագրութիւնք, էջ 194):

ու իր փառքի համար, այլ բարի գործերի և Աստծո փառքի:

Բ3. Ինչպես արդեն նշվեց, բացի մարդկային առաքինություններն, մարդու հոգին ունի ևս 3 առաքինություն, որոնք «աստվածային» են կոչվում. դրանք են հավատը, հույսը և սերը: Հավատը հոգու բանական մասին կամ գործությանն է հատուկ, հույսը՝ ցասմանականին, և սերը՝ ցանկականին: «Մեղայի» այս հատվածում ներկայացվող վերջին երեք մեղքերը կամ ախտերը հենց սրանց են վերաբերում. չարահավանությունը՝ սիրուն, հուսահատությունը՝ հույսին, և թերահավատությունը (կամ թերամտությունը, ինչպես զրաբար բնագրում)⁶² հավատին:

Չարահավանությունը չարը հավանելը կամ սիրելն է, ինչը նշան է Աստծո հանդեպ սիրո պակասի: Քանի որ Աստված է միակ ճշմարիտ Բարին ու ամենայն բարու աղբյուրը, ուստի մեր մեջ ամեն բարու և առաքինության աղբյուրն աստվածասիրությունն է: Իսկ սա նշանակում է, որ չարահավանությունից էլ բխում են ամեն մեղք ու չարիք. որովհետև ցանկացած մեղք արդյունքն է մեր մեջ աստվածային սիրո պակասի: Ում սիրում կամ հավանում ենք, նրա կամքն էլ կատարում ենք: Ուրեմն որքանով չարի կամքն ենք կատարում, այնքանով պակասում է մեր մեջ Բարու հանդեպ սերը: Ինչպես մեր Տերն է ասում. «Ով ինձ սիրում է, իմ խոսքը կպահի...: Իսկ ով ինձ չի սիրում, իմ խոսքը չի պահում» (Հովհ. ԺԴ 23-24):

Հուսահատությունը կյանքի տարբեր դիպվածներում դժվարությունների, փորձությունների ու վշտերի հանդիպելիս արագ վհատվելն է կամ սեփական մեղքի ու անարժանության գիտակցությունից ընկճվելը, ինչ պատճառով մարդ հոգեպես թուլանում և անկարող է դառնում բարիք գործել:

Իսկ թերահավատությունը թերի հավատն է Սուրբ Գրքի և Եկեղեցու սրբակյաց հայրերի միջոցով մեզ հայտնված աստվածային ճշմարտությունների հանդեպ, մանավանդ Աստծո մարդասիրության,

սակայն նաև արդարություն հանդեպ, որը գիտի ամենքին ըստ արժանվուն հատուցել՝ պարզեցնել և բաշխելով կամ պատժելով:

Գ. Մեղայ չար խորհրդով մտացածնենգութեամբ, ատելութեամբ, խեղճիւ, մախանօք, յաչաղանօք, թուլութեամբ, պոռնկական խորհրդով՝ արուական, իգական, անասնական, գրաստական, գազանական, ի գիշերի և ի տուրնջեան երազական գիշութեամբ և անըջական գարշ աղտեղութեամբ: Մեղայ Աստուծոյ:

Գ. (1) Մեղանչեցի մտքիս չար խորհուրդներով՝ նենգութեամբ, ատելութեամբ, հիշաչարութեամբ, (2) մախանքով, չարակնութեամբ, (3) թուլութեամբ, պոռնկական խորհուրդով՝ արվամուղական, իգամուղական, անասնական, գրաստական, գազանական, գիշերն ու ցերեկը երազական գիշութեամբ և անըջական գարշելի աղտեղութեամբ: Մեղանչեցի Աստծո դեմ⁶²:

Գ1. Մտքի «չարժողութիւնները», ինչպես ներկայացված է այս խոստովանութեան նախորդ՝ Բ հատվածում, նշանակում են մտքի (կամ, ինչպես ասվում է, սրտի) խորհուրդները: Այստեղ ներկայացվող չար խորհուրդներին շարքում դասված մեղքերը սրտի չար զգացումներ են և մտքում գործվող մեղքերը: Սակայն պետք է գիտենալ, որ ցանկացած մեղք էլ՝ «Մեղայի» որ հատվածում էլ ներկայացվի, նախ խորհուրդներով է գործվում և ապա՝ միայն արտաքին գործով:

⁶² Ղևոնդ արք. Չեպելյանն իր «Միսական գիտելիքներ»-ում (Անթիլիաս 1986, էջ 20) գրում է. «Մեղայ. երկու մասերու բաժնուած է, սկիզբ և վերջ, որոնք ընտիր գրուածքներ են. իսկ միջին մասը խաժամուծ «գոեհիկ» պարունակութիւն մը: Նախապէս իւրաքանչիւր խոստովանող մեղքերու ցուցակ մը կը բերէր և «վայ ինձ»-էն վերջ կը կարդար, հաւանաբար մեղքերու պոչիսի ցուցակ մըն է, որ մտցուած է միջին բաժնի մէջ»: Ենթադրելի է, թէ «գոեհիկ» պարունակութիւն ունեցող մասը մանավանդ այս՝ Գ հատվածի վերջին մասն է (3) և հաջորդ՝ Դ հատվածը: Սակայն, նկատի ունենալով այն, որ ս. Եփրեմի «Մեղայի» մէջ նույնպէս կա համանման և ավելի ծավալուն մաս (էջ 26-27), կարծում ենք, որ «Մեղայի» «միջին մասն» ինչ-որ մեկի կողմից կամայականորէն մտցված հավելված չէ, այլ սրա գոյությունը բացատրվում է «Մեղայի» ծագմամբ, այսինքն՝ նրա՝ վանական միջավայրի ծնունդ լինելու հանգամանքով:

Նենգութիւնը ատելութեան ու կեղծավորութեան մի խառնուրդ է, որ գիտի արտաքին բարեկրթութեան ու բարեկամութեան քողի տակ դավեր նյութել, իսկ ատելութիւնը, պարզ է, որ սիրո հակադիր մոլութիւնն է: «Ամեն ոք, ով ատում է իր եղբորը, մարդասպան է» (Ա. Հովհ. Գ 15), մինչդեռ մեր Տերը մեզ պատվիրել է սիրել անգամ մեր թշնամիներին (տե՛ս Մատթ. Ե 44):

Հիշաչարութիւնը (կամ խեղճը, ինչպէս գրաբար բնագրում) մարդու սրտում թաքնված ոխն է, որի դեղը սրտանց ներելն է. «Եթե դուք մարդկանց չնեղեք նրանց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեր հանցանքները չի ների» (Մատթ. Զ 15):

Գ2. Մախանքն ու չարակնութիւնը (հաչաղանք) ըստ էութեան նույն բանն են. մախանքը նախանձն է, իսկ չարակնութիւնը՝ մեկին չար ու նախանձոտ աչքով նայելը՝ ասես նրան չարիք մաղթելով:

Գ3. Թուլութիւնը և սրան հաջորդող մեղքերը պոռնկութեան տարատեսակներ են: Զգոնութեան ու ժուժկալութեան մեջ թուլանալը և անմաքուր ցանկական զգացումներին ու խորհուրդներին տրվելը հենց այս հատվածում նշվող թուլութիւնն է, որի արգասիքն են ամեն տեսակ պոռնկական խորհուրդները՝ արվամուղական, իգամուղական, ինչպէս նաև անասնական, գրաստական ու գազանական, որոնք միևնույն բանն են նշանակում, միայն այն տարբերութեամբ, որ անասնական ու գրաստական պոռնկական խորհուրդներն ընտանի կենդանիների հետ խառնակումն են ցույց տալիս, իսկ գազանականը՝ վայրի գազանների հետ: Այս խորհուրդները մարդ կարող է ունենալ թե՛ գիշերը և թե՛ ցերեկը՝ ընկնելով երազային անսթափ ու անմաքուր վավաչոտ վիճակի՝ գիշութեան, և անըջական (դարձյալ նշանակում է երազային) գարշելի աղտեղութեան (աղտեղութիւն=կեղտոտութիւն, անմաքրութիւն) մեջ:

Դ. Մեղայ ցանկութեամբ մարմնոյս՝ հեշտութեամբ, պղերգութեամբ, յօրանջմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս և զագրագործութեամբ ի պէսպէս ախտս, հեշտալրութեամբ լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, իգութեամբ ռնգացս, պագչոտութեամբ բերանոյս, անժուժկալրութեամբ, շուայտութեամբ և արբեցութեամբ: Մեղայ Աստուծոյ:

Դ. (1) Մեղանչեցի մարմնիս ցանկությամբ՝ (2) հեշտասիրությամբ, պղերգությամբ, քնի հորանջմամբ, (3) մարմնի շարժումներով ու պէս-պէս ախտերով զագրագործությամբ, ականջներովս ցանկասիրությամբ լսելով, աչքերիս անմաքրությամբ, սրտիս ցանկությամբ, ռուճակներիս մեղկությամբ, բերանիս անպարկեշտությամբ, (4) անժուժկալրությամբ, շվայտությամբ և հարբեցողությամբ: Մեղանչեցի Աստծո ղեւ:

Դ1. Տեր Հիսուսն ասում է. «Հոգին է կենդանարար, մարմնից ոչ մի օգուտ չկա» (Հովհ. Զ 64), իսկ Պողոս առաքյալը հորդորում է. «Հոգով՝ ընթացեք և մարմնի ցանկությունը մի՛ կատարեք, քանի որ մարմինը հոգու հակառակն է ցանկանում, իսկ հոգին՝ մարմնի» (Գաղատ. Ե 16-17): Ապա ասում է. «.....մարմնի գործերը հայտնի են. դրանք են՝ շնություն, պոռնկություն, պղծություն, վավաչոտություն, կռապաշտություն, կախարդություն, թշնամություն, կռիվ, նախանձ, բարկություն, հակառակություններ, երկպառակություններ» և այլն (տե՛ս Գաղատ. Ե 19-21): Այս նույն «գործերի» մասին մեր Տերն Ավետարանում ասում է. «Սրտից են ելնում չար խորհուրդներ, սպանություններ, շնություններ, պոռնկություններ, գողություններ, սուտ վկայություններ և հայհոյություններ» (Մատթ. ԺԵ 19-20), և սիրան այստեղ անշուշտ նյութական սիրտը չէ, այլ հոգևորը՝ ներքին մարդը: Ուրեմն, ինչպես արդեն ասվել է, ցանկացած մեղք նախ խորհուրդներով է գործվում և ապա՝ մարմնի անդամներով, և մարդու մարմնի ցանկությունների աղբյուրն էլ հոգու

մեջ է թաքնված, իսկ մեր նյութական մարմինն ինքը՝ առանց հոգու մասնակցության, բնականաբար մեղանչել չի կարող, և նրա բնական ցանկություններն ու կրքերը (ինչպես, օրինակ, սնվելու կամ հագնվելու պահանջը) մեղք չեն: Մեր մարմինը միջոց է, որով մարդու հոգում ծնված ցանկություններն ի կատար են ածվում: Սակայն մարմինն էլ նպաստում է, որ հոգին ցանկություններ ծնի, քանի որ իր զգայարաններով հաղորդակցվելով արտաքին աշխարհի հետ՝ հոգուն «նյութ» է մատակարարում՝ բարի կամ չար խորհուրդներ ու ցանկություններ ծնելու համար: Այսպիսով՝ հոգին ու մարմինը գործում են փոխշողկապված, սակայն գլխավոր թե՛ «բարեգործը», թե՛ «չարագործը» և թե՛ «պատասխանատուն» մնում է հոգին, և ուրեմն մարմնով գործվող բոլոր մեղքերը նախևառաջ հոգու մեղքեր են: Ուստի երբ ասվում է «մարմին» կամ «մարմնական» գործեր, ընդհանուր իմաստով նկատի է առնվում մեղքը՝ ի հակադրություն «հոգու» կամ «հոգևորի», որով ցույց է տրվում այն ամենն, ինչ բարի է, առաքինի ու աստվածային: Եվ երբ Պողոս առաքյալն ասում է. «Սպանե՛ք ձեր երկրավոր անդամները» (Կողոս. Գ 5), և Տերն էլ պատվիրում է դրանք կտրել-դեն նետել (Մատթ. Ե 29-30), նկատի են առնվում այն չար ցանկություններն ու նրանցից ծնված մեղքերը, որոնք գործվում են թե՛ մարդու խորհուրդներում և թե՛ մարմնի զգայարանների ու անդամների միջոցով:

Մեր նյութական մարմինը կարիք ունի խնամքի՝ կենդանի մնալու և մեր հոգու փրկությանը ծառայելու համար, քանի դեռ այս աշխարհում ենք: Սակայն այդ խնամքը պիտի չափավոր լինի, այլապես մարդու հոգին ու մարմինը կարող է տանել դեպի անմաքուր ցանկություններ ու մեղքեր: Ահա սա նկատի ունի առաքյալը, երբ ասում է. «Մարմնին խնամք մի՛ տարեք ցանկությունների համար» (Հռոմ. ԺԳ 14):

Մարմինն արտաքին աշխարհի հետ հաղորդակցվում է իր զգայարանների միջոցով, որոնք հինգն են: Սրանք պատկերավոր կեր-

պով կոչվում են «մեր մարմնի տան դռներ՝ լավ և վատթար ամեն ինչի՝ դրսից ներս և ներսից դուրս գալու»⁶³: Այդ «դռները» հինգն են՝ տեսանելիք (աչքերը), լսելիք (ականջները), հոտոտելիք (քիթը), ճաշակելիք (բերանը) և շոշափելիք (գերազանցապես՝ ձեռքերն ու ոտքերը):

Մարդն իր այս զգայարաններով է գործում թե՛ բարին և թե՛ չարը:

Մարմնի մաքրության պահպանումը շատ կարևոր է քրիստոնյայի համար. իհարկե այստեղ խոսքը մեղքից ու արատավոր ցանկություններից, հիմնականում պոռնկությունից, մարմինը մաքուր պահելու մասին է: Մեր մարմինը պոռնկության համար չի ստեղծված, այլ Տիրոջ: Այն Սուրբ Հոգու տաճարն է, քանզի Աստծո Հոգին իր շնորհներով մեր մարմնի ներսում է հանգրվանում, սակայն անմաքուր, անսուրբ մարմնի մեջ Սրբության համար տեղ լինել չի կարող: «Փախե՛ք պոռնկությունից: Մարդու գործած բոլոր մեղքերը մարմնից դուրս են, բայց պոռնիկն իր մարմնի դեմ է մեղանշում: Չգիտե՞ք, որ ձեր մարմինները տաճար են Հոգու, որ ձեր մեջ է և որն ընդունել եք Աստուծոց. և դուք ձեր անձի տերը չեք, որովհետև գնո՛վ գնվեցիք: Փառավորե՛ք Աստուծուն ձեր մարմինների մեջ» (Ա. Կորնթ. 2 18-20):

Այժմ անդրադառնանք «Մեղայի» այս հատվածում ընդգրկված մարմնական մեղքերին:

Դ2. Հեշտասիրություն նշանակում է հաճույքասիրություն, փափկալից ու հաճելի վիճակի, մարմնավոր վայելքների հանդեպ սեր: Հեշտասերին սովորաբար հատուկ է նաև պղերգությունը, որը մարմնավոր ծուլություն է նշանակում: Հեշտասերը, ավելի հետամուտ լինելով իր մարմնի հաճույքների բավարարմանն ու հանգստավետ կյանքին, պղերգ կամ ծուլ է լինում առաքինություններ գործելու մեջ՝ վնասելով իր հոգուն:

⁶³ Գրիգոր Վարդապետ, էջ 33:

Աստված օրը ստեղծել է գործելու համար, իսկ գիշերը՝ քնով հանգստի: Բնականաբար քունը, որն անհրաժեշտություն է մարմնի համար, ուստի նաև քնի պահանջից ծնված հորանջումը մեղք չեն: Սակայն քանի որ ցանկացած բնական պահանջի բավարարման մեջ անհավասարակշռությունն ի վերջո վերածվում է մեղքի, այդպես էլ քնով հագեցումը, որն արգասիք է մարդու պղերգությունն ու դատարկակեցություն, այսինքն՝ պարապ ու անգործ կենսակերպի, չի կարող բնական ու բարոյական երևույթ համարվել, ուստի այստեղ հենց այդպիսի «հորանջական» վիճակն է ներկայացվում որպես մեղք:

Դ3. Մարդու մեջ հեշտասիրության հակումը, ինչպես նաև պղերգությունն ու ավելորդ քնի, հանգստի ու կերակուրների հանդեպ սերը մարմինն ավելի դյուրամետ են դարձնում դեպի անմաքուր ցանկական կրքերը կամ ախտերը, որոնք ծնում են մարմնի ցանկական շարժումներ և մարդուն ստիպում մարմնի անդամներով, հիմնականում վերը ներկայացված հինգ զգայարաններից մեկով՝ շոշափելիքներով, կատարելու պոռնկության պես-պես զագրելի (գարշելի, զզվելի) գործեր, ինչն էլ այստեղ զագրագործություն է անվանվում: Եթե այս խոստովանության աղոթքի նախորդ՝ Գ հատվածում ներկայացված են պոռնկական խորհուրդները, մտածումներն ու երազային վիճակները, ապա այստեղ ներկայացվում է մարմնով կամ, ինչպես ասվում է, «գործով» կատարվող պոռնկությունը կամ շնուկությունը⁶⁴, որին է վերաբերում Սինա լեռան վրա

⁶⁴ Թեև «պոռնկություն» և «շուկություն» բառերի իմաստների միջև կա տարբերություն, ինչը երևում է, օրինակ, Մատթ. ԺԵ (15) 19, Գաղատ. Ե 19 համարներից, սակայն քանի որ այս բառերն ավելի հաճախ գործածվում են միևնույն իմաստով, այստեղ նույնպես նրանց իմաստների միջև տարբերակում չի դրված: Օրինակ՝ ըստ մեկ բացատրության՝ շուկությունը ծածուկ է գործվում, իսկ պոռնկությունը՝ հայտնապես (տե՛ս Վարդան Այգեկցի, Խրատ բոլոր քառամասերին և ժողովողին, Ս. Էջմիածին, 2001, էջ 56): Տե՛ս նաև Մեկնություն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթեոսի (Յօհաննու Ծործորեցու), Կ. Պօլիս, 1825, Ե 31, էջ 120:

Աստծուց Մովսեսին տրված տասը (տասնաբանյա) պատվիրաններից յոթերորդը. «Մի՛ շնացիր» (Ելք Ի 14):

Ականջներն ու աչքերը, ինչպես վերը նշվեց, նույնպես պատկանում են մարմնի հինգ զգայարանների թվին: Եթե սրանք ճիշտ չեն գործածվում, մեղք են ծնում: Այդպիսի մեղք է համարվում անմաքուր ցանկություններ առաջացնող բաներ լսելը կամ որևէ ձայն ցանկասիրությամբ ունկնդրելը:

Այսպես և մեղք են համարվում անմաքուր ցանկություններ առաջացնող բաներ դիտելը, որևէ մեկին ցանկասիրությամբ նայելը, ինչպես նաև դիմացինին գայթակղեցնելու նպատակով անմաքուր հայացքներ գցելը: Տիրոջ խոսքով՝ «Ամեն մարդ, որ կնոջը ցանկասիրությամբ է նայում, իր սրտում արդեն իսկ շնացավ նրա հետ» (Մատթ. Ե 28), և սա հավասարապես վերաբերում է նաև ցանկասիրությամբ նայող կնոջը: Այդպես էլ, ոչ միայն կինն է «իր աչքերի հայացքով ու արտևանունքներով» պոռնկություն գործում (տե՛ս Սիրաք ԻԶ 12)՝ գայթակղեցնելով սղամարդուն, այլև սղամարդը:

Միտը կարող է ունենալ թե՛ հոգևոր և թե՛ մարմնական ցանկություններ: Անշուշտ «Մեղայի» այս հատվածում խոսվում է մարմնական այն ցանկությունների մասին, որոնք մեղսական են, քանզի կան նաև ոչ մեղսական, այլ բնական ցանկություններ՝ սնվելու, մարմինը ցրտից պաշտպանելու համար այն հագուստով ծածկելու և այլն, որոնք անհրաժեշտ են մարմինն առողջ ու կենդանի պահելու համար: Սակայն եթե այս բնական ցանկությունների բավարարումը չափավորության սահմաններում չի մնում, ծնում է հոգևոր ախտեր՝ որկրամոլություն, պճնասիրություն և այլն, որոնք այլևս չեն կարող լինել սրտի բնական ու մաքուր ցանկություններ: Սրտի մեղսական ցանկությունները բազմապիսի են. մարդու բոլոր չար ցանկություններն էլ, ի վերջո, «սրտի» ցանկություն են, սակայն «Մեղայի» այս հատվածի ընդհանուր բովանդակությունը հուշում է, որ այստեղ նկատի է առն-

ված նախևառաջ սրտի տուփալից, պոռնկական ցանկությունը: Այս ցանկության արդյունք են նաև հինգ զգայարաններից մնացած երկուսի ախտավոր գործառնությունները՝ ուռնգների (քթի) մեղկությունն ու բերանի անպարկեշտությունը: Մեղկությունը կամ, ինչպես գրաբարում, իգությունը թուլություն են նշանակում, սակայն ոչ թե ֆիզիկական ուժի պակասի արդյունք հանդիսացող թուլությունը, այլ այն, որի պատճառով մարդ թույլ է գտնվում ինքնակառավարման մեջ՝ տուրք տալով իր մեղսական կրքերին: Եթե ուռնգներով որևէ հաճելի հոտ առնելով՝ մարդը մարմնական ցանկությամբ է լցվում, սա որպես մեղք է դիտվում ճիշտ նույն սկզբունքով, որով մեղք են համարվում ցանկասիրությամբ նայելն ու լսելը: Իսկ բերանի անպարկեշտություն են համարվում բերանից ելած այն անպարկեշտ խոսքերն ու զրույցները, որոնք կարող են դեպի մեղքը գրգռել թե՛ դրանք ասողին, թե՛ ունկնդիրներին: Բերանի անպարկեշտություն է նաև ձայնին ցանկասիրական երանգ հաղորդելը՝ դիմացինին գայթակղեցնելու նպատակով:

Դ4. Ինչպես սրտի ցանկության մասին խոսելիս արդեն նշվել է, անժուժկալությունն անչափավորությունն է, և այն վերաբերում է թե՛ սնվելուն, թե՛ հագնվելուն, թե՛ օրինավոր ամուսինների՝ անշուշտ մեղք չհամարվող մարմնական մերձեցմանը, թե՛ ունեցվածքի ձեռքբերմանը և թե՛ այլ կարգի բնական պահանջների բավարարմանը: Այս ամենը միայն չափավորության գործածվելիս է օգտակար մարդուն, իսկ չափի սահմաններն անցնելիս վնասակար է թե՛ մարմնին, թե՛ հոգուն: Անժուժկալության տարատեսակ է շվայտությունը, որը գործում են նրանք, ովքեր օրերն անցկացնում են ուտել-խմելու, գինարբուքների ու անառակությունների մեջ: Եվ սրան հարող մոլություն է հարբեցողությունը, որն, ինչպես հայտնի է, ոգելից խմիչքների անչափավոր գործածումն է՝ դժբախտաբար հաճախ լուրջ ու դժվարբուժելի ախտի վերածվող:

Ե. Մեղայ չարաբանութեամբ լեզուիս՝ ստախոսութեամբ, սուտ երզմամբ, երզմանազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանասարկութեամբ, շոգմոգութեամբ, քսու⁶⁵, դատարկաբանութեամբ և ծաղու⁶⁶, զրախոսութեամբ, հերձախոսութեամբ և անիծաբանութեամբ, տրտնջելով, դժգոհելով, բամբասելով և հայհոյելով: Մեղայ Աստուծոյ:

Ե. (1) Մեղանչեցի լեզվիս չարաբանությամբ՝ (2) ստախոսությամբ, սուտ երզմամբ, երդմանազանցությամբ, (3) հակաճառությամբ, վիճաբանությամբ, (4) չարախոսությամբ, շոգմոգությամբ, քսությամբ, (5) դատարկաբանությամբ, ծիծաղով ու ծաղրով, զրախոսությամբ, հերձախոսությամբ, անիծելով, տրտնջալով, դժգոհելով, բամբասելով և հայհոյելով: Մեղանչեցի Աստուծոյ դեմ:

Ե1. «Եթե մեկը խոսքով չի մեղանչում, կատարյալ մարդ է՝ ընդունակ սանձահարելու իր ողջ մարմինը», - ասում է ս. Հակոբոս առաքյալը: Ապա ասում է. «Լեզուն մի փոքրիկ անդամ է, բայց մեծ-մեծ բաներ է խոսում: Ահա մի փոքր կրակը ինչպիսի՜ անտառներ է հրդեհում: Լեզուն էլ է կրակ, անիրավության մի աչ-

⁶⁵ Սա սովորաբար առանձին չգործածվող «քուս» արմատի (=բամբասանք, չարախոսություն) գործիական հոլովն է, քանի որ թվարկվող մնացած մոլությունները կամ մեղքերը նույնպես գործիական հոլովով են դրված («քուս»-ը սովորաբար միայն ածանցավոր ու բարդ բառերում է հանդես գալիս, ինչպես օրինակ՝ քսություն, փապքուս ևն): Որոշ հրատարակություններում «Մեղայի» Ե հատվածի այս մասը՝ «քուս, դատարկաբանությամբ», հանդես է գալիս առանց այս երկու բառերի միջև դրված ստորակետի, ինչը ենթադրել է տալիս, թե այստեղ «քուս»-ն վերաբերում է «դատարկաբանությամբ» բառին և գրաբարում գործածական «քուս» ածականն է:

⁶⁶ Քանի որ գրաբարյան «ծաղր» բառի (որի գործիական հոլովն է «ծաղր»-ն) բուն իմաստն է «ծիծաղ», բայց այն գործածվում է նաև այսօրվա «ծաղր» իմաստով, ուստի, այս կամ այն իմաստին նախապատվություն չտալու և իմաստներից որևէ մեկը չբացատրելու դիտարկությամբ, «ծաղր»-ը երկու բառով թարգմանվեց՝ երկու իմաստներն էլ արտահայտելու համար: Այլապես, ընտրություն կատարելու պարագային, պիտի ընտրվեր բուն «ծիծաղ» իմաստը, ինչպես և վարվել է, օրինակ, Մկրտիչ վրդ. Արծրունյանը «Մեղայի» իր մեկնության մեջ (տե՛ս նրա «Բացատրություն հրաժարման և զղջման բանից արքոց հարց...», էջ 73):

խարհ...» (Հակոբ. Գ 2, 5-6):

Մեր լեզուն՝ «այդ փոքրիկ անդամը», գործածելիս մեծ զգուշութեան ու զգոնութեան կարիք ունենք, որովհետև նրանով՝ որպես գործիքով, կարող ենք շատուշատ և՛ բարի, և՛ չար գործեր կատարել. թե՛ վերքեր բուժել և թե՛ վիրավորել, թե՛ կենդանացնել և թե՛ սպանել, թե՛ մարդկանց մեղքից հետ պահել ու դեպի առաքինութեանն հանել և թե՛ դեպի մեղքը գայթակղեցնել, ինչպես նաև թե՛ մեր փրկութեանն ապահովել և թե՛ ինքներս մեզ դատապարտել: Քանզի լեզուն ինքնագլուխ՝ առանց հոգուն հնազանդվելու, չի գործում, ինչպես Տեր Հիսուսն է ասում. «Բերանը սրտի լիութեանից է խոսում: Բարի մարդն իր սրտի բարի գանձերից բարին է հանում, իսկ չար մարդն իր սրտի չար գանձերից չարն է հանում: Ասո՛ւմ եմ ձեզ, մարդիկ իրենց ասած ամեն դատարկ խոսքի համար պատասխան պիտի տան դատաստանի օրը, որովհետև քո խոսքերով ես արդարանալու և քո խոսքերով դատապարտվելու» (Մատթ. ԺԲ 34-37):

Ուրեմն՝ «Մեղայի» այս հատվածում ներկայացված են մեր սրտի չար գանձերից ելած չար խոսքերը՝ չարաբանութեանները, որոնք վերաբերում են մարմնի հինգ զգայարաններից մեկին՝ բերանին, և չարաբանութեանների շարքում առաջինը դասվել են ստախոսութեանն ու նրա տարատեսակներ սուտ երզումը և երզմանազանցութեանը:

Ե2. Ստախոսութեամբ էր, որ «սուտ և ստի հայր» (Հովհ. Ը 44) սատանան խաբեց Եվային: Ինչպես ասվում է Սուրբ Գրքում, «ստախոս բերանը սպանում է հոգին» (Իմաստ. Ա 11): Ստախոսութեանը թուլատրելի է միայն այն ծայրահեղ պարագայում, երբ մարդ գիտի, որ ստելով կարող է մեկ ուրիշին փրկել լուրջ վտանգից, այսինքն՝ երբ մարդ ստում է եղբայրական սիրուց դրդված: Այլապես, նույնիսկ եթե գիտի, որ ճշմարտութեանն ասելով անձնական վնաս է կրելու, աստվածասիրութեանից դրդված՝ պիտի

չստի՝ իր անձը հանձնելով «ճշմարտությունը սիրող» (տե՛ս Սաղմ. 29 12) Աստծուն, «Ով փրկում է նրանց, ովքեր իրենց հույսն իր վրա են դնում» (Հմմտ. Սաղմ. ԺԶ 7), և «կորստյան մատնում բռնոր նրանց, որ սուտ են խոսում» (Հմմտ. Սաղմ. Ե 7): Իսկ ինչպես ժողովրդական առածն է ասում, «Ստի ոտքերը կարճ են»։ մի օր սուտը կբացահայտվի, և գուցե հետին չարիքն առաջինից, որից կամենում էիր ստով գերծ մնալ, ավելի մեծ լինի:

Ստախոսության մի տեսակ է **երկբանությունը** կամ **երկկեզվությունը**, երբ մարդ նույն նյութի մասին մեկին մի բան է ասում, մյուսին՝ մի ուրիշ (կամ միևնու՛յն մարդուն նույն նյութի մասին մեկ մի բան է ասում, մեկ՝ ուրիշ)՝ այսպիսով չփոթեցնելով ու խաբելով ունկնդիրներին: «Մի՛ ենթարկվիր ամեն քամու և մի՛ գնա ամեն շավղով, քանզի այդպիսին է երկկեզու մարդը», որի բաժինն են «չար պարսավանքը», «ամոթն ու նախատինքը» (տե՛ս Սիրաք Ե 11, 17):

Մեկի մասին վկայություն տալիս ստեղն էլ արգելված է տասնաբանյա պատվիրաններից իններորդով. «Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր» (Ելք Ի 16):

Ստախոսություն է նաև սուտ երդումը: Արդեն իսկ երդվելը հակառակ է Տիրոջ կամքին, Ով պատվիրում է ամենևին՝ չերդվել (տե՛ս Մատթ. Ե 34, նաև՝ Սիրաք ԻԳ 9) (երդումը պետք է չփոթել ուխտի հետ, երբ մեկն Աստծուն ինչ-որ բան է խոստանում և պարտավորվում այն կատարել⁶⁷): Ուրեմն որքան ավելի մեծ մեղք է սո՛ւտ երդվելը. «Իմ անունով սուտ երդում մի՛ տվեք և ձեր Տեր Աստծո անունը մի՛ պղծեք» (Ղևտ. ԺԹ 12), այլպես «Իմ անեծքը կմտնի նրանց տունը, ովքեր սուտ երդում են անում Իմ անունով» (Հմմտ. Զաքար. Ե 3-4): Իսկ եթե պատահմամբ երդվել ես կամ, մանավանդ, Տիրոջ առաջ ուխտ արել, ապա «մի՛ հապաղիր այն կա-

⁶⁷ Ովստի մի տեսակ է նաև քաղաքացիական պարտականությունների ժամանակ կատարվող երդման արարողությունը:

տարել, որովհետև քո Տեր Աստվածը պահանջելով պահանջելու է քեզանից, և դա մեղք կհամարվի քեզ» (Բ Օրենք ԻԳ 21), այսինքն՝ գործած կլինես այն մեղքը, որ երգմնագանցություն կամ ուխտագրծություն է կոչվում: Քանի որ Աստված երբեք չի մոռանում իր՝ մեզ տրված խոստումները և հավատարիմ է մեր հանդեպ (տե՛ս Եբր. Ժ 23), նույն հավատարմությունն էլ մեզանից է պահանջում: «Ավելի լավ է ուխտ չանել, քան անել ու չկատարել» (Ժողով. Ե 4), և որևէ ուխտ անելիս էլ պետք է չչտապել ու զգուշ լինել, քանզի «մարդու համար որոգայթ է հապճեպ ուխտ անելը և հետո զղջալը» (Առակ. Ի 25), իսկ ուխտը կամ երդումը չկատարելով՝ արդյունքում ստախոս ու խաբեբա ես դառնում:

ԵՅ. Տիրոջ ընտրյալ արքա Դավիթն ասում է. «Ասացի, թե ուշադիր լինեմ ճանապարհներիս, որպեսզի լեզվովս չմեղանչեմ. բերանիս պահապան դրեցի, երբ մեղավորը հակառակեց ինձ» (Սաղմ. ԼԸ 2): Նա գիտեր, որ եթե մեղավորին հակաճառեր՝ պաշտպանելով կամ արդարացնելով իր անձը, գուցե լեզվով սայթաքեր ու մեղանչեր: Ուստի բերանին «պահապան դրեց»՝ լռեց, թեև դրանից իրեն պարտված զգաց, սիրտը ցավեց, միտքը խռովվեց, և այնուհետև ստիպված եղավ իր ցաված սիրտը Տիրոջ առաջ բանալու (տե՛ս Սաղմ. ԼԸ 3-5): Դավիթ արքան իր օրինակով ուսուցանում է մեզ լեզուն զսպել և հակաճառությունից խուսափել, նույնիսկ եթե դրանից մեր ինքնասիրությունը վնաս կրի: Այդ «վնասից» մեծ օգուտ կա մեր հոգուն, մինչդեռ հակաճառությունը, վերածվելով վիճաբանություն, այսինքն՝ երկկողմանի հակաճառություն, կարող է ծնել «նախանձ, կռիվ, հայհոյանքներ, չար կասկածներ» (Ա Տիմ. Զ 4) և այլն՝ վնասելով թե՛ մեր անձին և թե՛ ուրիշներին: «Իսկ Տիրոջ ծառան չպետք է կռվի, այլ ամենքի հանդեպ հեզ պիտի լինի» (Բ Տիմ. Բ 24)՝ նմանվելով իր Տիրոջը, Ով «չհակառակեց ու չաղաղակեց» (Հմմտ. Մատթ. ԺԲ 19): Սակայն

մեղք են համարվում անձնական պատճառներով հակաճառու-
թյունն ու վիճաբանությունը, իսկ եթե այս միջոցներով պաշտպա-
նում են Աստծուն, Եկեղեցին, սեփական ազգը և այլ բարձրագույն
արժեքներ՝ ոչ թե անձնական որևէ շահի կամ սեփական կարծիքի
հաստատման, այլ սրբություններն անարգված չտեսնելու համար,
ապա չեն մեղանչում: Մեղք չեն նաև այն հակաճառությունն ու
վիճաբանությունը, որոնք կատարվում են գործնական խնդիրների
պարզաբանման ու լուծման համար: Սակայն այս ամենի մեջ նույն-
պես զգուշություն, խոհեմություն ու չափավորություն է հարկա-
վոր՝ ավելորդ ու անտեղի կրթեր չբորբոքելու և արդյունքում չմե-
ղանչելու համար:

ԵԿ. Չարախոսությունը կամ, ինչպես գրաբար բնագրում, բան-
սարկուծությունը⁶⁸ սատանային բնորոշ մեղքերից է, որովհետև նրան
տրվող անուններից մեկը հենց «բանսարկուն» է (տե՛ս Իմաստ. Բ
24, Հուդա 9, Հայտ. ԺԲ 12, Ի 2): Սրա պատճառն այն է, որ սատա-
նան Աստծո առջև չարախոսում ու զրպարտում է մարդկանց⁶⁹,
ինչպես նույնն անում էր երկնքից վտարվելուց առաջ՝ չարախոսե-
լով բարի հրեշտակներից (տե՛ս Հայտ. ԺԲ 10): Հրեաներն էլ
Տիրոջից էին չարախոսում (Ղուկ. ԻԳ 2), մինչև Նրան մահվան
մատնեցին: Այսպիսով պարզ է դառնում, թե որքան դատապարտե-
լի է չարախոսությունը, որը կատարվում է ոչ այլ նպատակով, եթե
ոչ սեփական ատելության պատճառով ուրիշին վնասելու,
վրեժխնդրության կամ ուրիշին նսեմացնելով սեփական անձը
բարձրացնելու համար և այլ նմանատիպ նպատակներով: Չարա-
խոսություն են մարդու բերանից ելած այն բոլոր խոսքերը մի ու-

⁶⁸ «Բանսարկություն»-ը, կազմված լինելով գրաբարյան «բանս» (=խոսքեր՝ հայց. հոլով)
և «արկանել» (=զգել) բառերից, նշանակում է մեկի մասին չար խոսքեր գցել մի ուրիշի
սկանջը:

⁶⁹ Տե՛ս, օրինակ, Հոբ Ա 9, 11, Գ. Տաթևացի, Ամառան հատոր, էջ 433, Ն. Լամբրոնացի,
Յովհաննու նշման պատմությունը, էջ 545:

րիչ անձի վերաբերյալ, որոնք միտված են վերջինիս վնաս հասցնե-
լու: Ուստի չարախոսություն են նաև զրպարտությունը, որը սուտ
չարախոսությունն ու անհիմն մեղադրանքն է, բամբասանքը, խոս-
քով դատելը, շղթմոգությունը և նմանատիպ այլ մեղքեր:

Բամբասելը նույնն է, ինչ չարախոսելը, միայն թե բամբասան-
քը կարող է լինել նաև առանց մեկին վնաս հասցնելու հատուկ
դիտավորության: Սակայն քանի որ արդյունքում, միևնույն է, այդ
վնասը հասցվում է, ապա բամբասանքն ամեն դեպքում, լինի չար
դիտավորության, թե խոռովված ու նեղված սրտի կամ անզգուշու-
թյան արդյունք, չարախոսություն է, բամբասասիրությունը՝ տգեղ
սովորություն, և «բամբասողներն Աստծո արքայությունը չեն
ժառանգելու» (Հմմտ. Ա Կորնթ. Զ 10): Բամբասանքը մոլախոտի
պես տարածվելու սովորություն ունի և վարակիչ է, ուստի հաճախ
զրուցակիցներից մեկի բամբասանքին հետևում է և մյուսինը. մի
բան մեկն է ասում, մի ուրիշ բան՝ մյուսը, և բամբասանքը նաև այս
իմաստն արտահայտող չարախոսություն է նշանակում, ինչը հուշ-
ում է նաև «բամբասել» բառի կազմությունը. նրա «բամբաս» հիմ-
քի զրաբարյան «բամ»-ը նշանակում է «ասում եմ», և «բաս»-ը՝
«ասում ես»⁷⁰:

Եթե մեկից բամբասում ու չարախոսում են լեզվով և մեկ ուրիշի
ներկայությանը, ապա դատում են թե՛ լեզվով և թե՛ մտքով՝
բոլորից (բայց ո՛չ Աստծուց) ծածուկ՝ սրտում իրենց կողմից դատ-
վողին արհամարհելով կամ ատելով: Այսինքն՝ «դատել» բառն
ավելի լայն իմաստ ունի, քան չարախոսությունն ու բամբասանքը,
և դատումը պարտադիր մասն է ամեն տեսակ չարախոսության.
Քանզի եթե սրտումդ չդատես ու չարհամարհես մարդուն, նրանից
չես բամբասի ու չարախոսի: «Մի՛ դատեք, որպեսզի չդատվեք,-
ասում է Տեր Հիսուսը.- որովհետև ինչ դատաստանով որ դատում

⁷⁰ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Ա, Ե. 1971, էջ 385:

եք, նրանն՝վ եք դատվելու, և ինչ չափով որ չափում եք, ձե՛զ համար կչափվի» (Մատթ. է 1-2):

Հատկապես մեծ մեղք է սեփական ծնողներից, ինչպես նաև հոգևորականներից չարախոսելը, բամբասելը և նրանց դատելը: Իր հորից ու մորից չարախոսողը, ըստ Մովսիսական օրենքի, ենթակա էր մահապատժի (տե՛ս Ելք ԻԱ 17): Իսկ հոգևորականների մասին չչարախոսելու և չբամբասելու մասին ս. Հովհան Մանդակունի հայոց կաթողիկոսն (Ե դ.) ասում է, որ եթե բամբասում ես հոգևորականից նրա անվայել վարքի, օրինակ՝ շնություն գործած լինելու համար, ապա բամբասելովդ հավասարվում ես նրան, քանզի բամբասանքը պակաս մեծ մեղք է, քան շնությունը. «Եթե շնությունից գարշում ես, գարշի՛ր և բամբասանքից»⁷¹, և հոգևորականներին մի՛ արհամարհիր, որովհետև դրանով մեղանշում ես Աստծո հանդեպ, Ով նրանց միջոցով է կատարում Եկեղեցու խորհուրդները: Նույնիսկ եթե նրանք արժանավոր անձինք չեն, միևնույն է՝ Սուրբ Հոգու շնորհները նրանց միջոցով գործում են ժողովրդի փրկության համար⁷²: «Քո վա՛րքը միայն քննիր ու դատիր և ո՛չ թե առաջնորդների», սակայն՝ եթե հոգևորականը «հավատքի մեջ անպիտան լինի և թյուր կերպով սովորեցնի, փախի՛ր նրանից... Քանզի եթե հավատքի մեջ թերի է և թյուր կերպով է սովորեցնում, եթե նույնիսկ Պողոսը կամ մի հրեշտակ լինի, նրա հետ մի՛ հաղորդակցվիր [հմտ. Գաղատ. Ա 8]», որպեսզի չլինի թե ինքդ էլ շեղվես ճշմարտության ճանապարհից և կործանես հոգիդ: Հայոց կաթողիկոսի այս խիստ զգուշացման պատճառը հասկանալու համար արժե հիշել, որ շատուշատ հերձվածների, աղանդների կամ Եկեղեցու կողմից մերժված վարդապետությունների հիմնադիրներ հենց հոգևորականներ էին, ինչպես օրինակ՝ Արիոսը, Մակեդոնը, Նեստորը և այլն: Եվ ուրեմն՝ «Հավատքը դո՛ւ պիտի քննես, իսկ

⁷¹ Յովհ. Մանդակունի, Ծանոթ, էջ 90:

⁷² Տե՛ս անդ, էջ 92:

վարքն Աստվա՛ծ պիտի դատի»⁷³: Դատելու մասին այս կարևոր դիտողությունն անում է նաև ս. Հովհան Ոսկեբերանը (Դ դար)՝ ասելով. «Եվ «Մի՛ դատիր» խոսքը վարքի համար ասվեց և ո՛չ թե հավատքի»⁷⁴: Իսկ եթե հոգևորականը «հավատքով առողջ է, միայն հնազանդվի՛ր նրան և վարքի պատճառով մի՛ հայհոյիր»⁷⁵:

Շոգմոգությունը անձնական շահի համար շողոքորթությունամբ ու մարդահաճությունամբ ուղեկցվող չարախոսությունն է: Շոգմոգներին հատուկ են գաղտնի փսփսուքներն ու տրտուկները, նրանք «հետամուտ են իրենց անձերի ցանկություններին, իրենց բերաններով ամբարտավանությունամբ են խոսում և իրենց շահի համար երեսպաշտություն անում» (Հուդա 16):

Փսփսուքները բնորոշ են նաև չարախոսության մի այլ տեսակի՝ քսությունը, որը կատարվում է այստեղ-այնտեղ, սրա-նրա ականջին, հաճախ երկկեզվությամբ⁷⁶՝ նպատակ ունենալով թշնամություն գցել մարդկանց միջև՝ թերևս ստեղծված «պղտոր ջրում» սեփական շահին հասնելու համար: Քսու (այսինքն՝ քսությունը զբաղվող) մարդիկ խառնակիչ ու հասարակության ամբոխիչ են, և նրանց պատճառած վնասը հաճախ այնքան մեծ է լինում, որ աստվածաշնչյան «Սիրաքի իմաստությունը» գրքի հեղինակն ասում է. «Քսուն ու երկբանն առհասարակ թող անիծվեն, քանզի խաղաղության մեջ գտնվող շատ մարդկանց կործանեցին.... ամուր քաղաքներ ավերեցին և մեծամեծների ապարանքները քանդեցին» (Սիրաք ԻԸ 15-17):

«Լսեցի՞ր որևէ խոսք, թող այն մեռնի՛ քո սրտում» (Սիրաք ԺԹ 9):
«Բանասարկությունները (չարախոսությունները) շատ են, բայց

⁷³ Անդ, էջ 93:

⁷⁴ Երանելույն Յովհաննու Ոսկեբերանի, Յառ երրուցիս թուղթն Պողոսի, ԺԳ 17, Ծան ԼԳ, Վիեննա, 1855, էջ 5:

⁷⁵ Յովհ. Մանդակունի, Ծանոթ, էջ 93:

⁷⁶ Երկկեզվության մասին տե՛ս Ե2-ում:

դուռ ամեն խոսքի մի՛ հավատա» (Սիրաք ԺԹ 15):

«Պահապան դիր, Տե՛ր, իմ բերանին և ամուր դուռ՝ իմ շուրթերին, որպեսզի սիրտս չար խոսքով չխոտորվի» (Սաղմ. Ճն 3):

Ե 5. Դատարկաբանությունը դատարկ ու անիմաստ գրույցներն ու շատախոսությունն է: Շատախոսությունը ոչ միայն վատ սովորություն է, այլև դասավել է մեղքերի շարքը, քանի որ «շատախոսությունը չես խուսափի մեղքից. իսկ եթե շուրթերդ զսպես, իմաստուն կլինես» (Առակ. Ժ 19), և «խոսքերի շատության մեջ ունայնություն կա» (Ժողով. Ե 6): Սովորաբար դատարկաբաններին բնորոշ են նաև բամբասասիրությունը, ստախոսությունը և լեզվի այլ մեղքեր: Այդ իսկ պատճառով «թող ամեն մարդ արագ լինի լսելու մեջ և ծանր՝ խոսելու» (Հակոբ. Ա 19)՝ հիշելով, որ «իր ասած ամեն դատարկ խոսքի համար պատասխան պիտի տա դատաստանի օրը» (Հմմտ. Մատթ. ԺԲ 12) 36):

Ընդունելի չէ նաև Աստծո առջև կատարվող դատարկաբանությունը. «Երբ աղոթում եք, հեթանոսների պես շատախոս մի՛ եղեք» (Մատթ. 2 7): Այս շատախոսությունը վերաբերում է ոչ թե աղոթքի քանակին, այլ որակին, այսինքն՝ մի՛ դատարկաբանեք ու ճոռոմաբանեք, երկար-բարակ անիմաստ խոսքեր մի՛ արտաբերեք և ո՛չ թե քիչ աղոթեք, քանի որ մեկ այլ տեղ Հիսուսն ինքն է ասում. «Ամեն ժամ աղոթե՛ք» (Ղուկ. ԻԱ 36), և ինքն էլ հաճախող զիշեր աղոթում էր: Պողոս առաքյալը նույնպես ասում է. «Անդադար աղոթե՛ք» (Ա Թեսաղ. Ե 17):

Ծիծաղն ըստինքյան մեղք չէ, սակայն եթե այն անդեպ (անհարկի, ոչ տեղին) ու անչափ է, կարող է մեղք ծնել: Անչափ ու ավելորդ ծիծաղն ու կատակաբանությունը մարդու սրտից հանում են Աստծո երկյուղն ու զգոնությունը՝ այսպիսով մարդուն ընդունակ դարձնելով մեղանչելու: Թերևս սա է պատճառը, որ Աստվածաշնչում ծիծաղը հաճախ որպես բացասական երևույթ է

ներկայացվում և ուղեկցում մեղքին և ո՛չ թե առաքինությունը (տե՛ս, օրինակ, Ծննդ. ԺԸ 12-16, Առակ. Ժ 23, Ժողով. Է 4, Սիրաք ԻԷ 14), և Տեր Հիսուսն էլ ասում է. «Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում եք, քանզի կազաք ու լաց կլինեք» (Ղուկ. 2 25)՝ մեղք համարելով ոչ թե անմեղ ու չափավոր ծիծաղը, այլ ամբարտավան, ինքնազոհ ու անմաքուր սրտից ծնված անպատկառ ծիծաղը, երկրային ցոփ կյանքով ապրող, իրեն ամենակարող կարծող, Աստծո երկյուղն ու սերը չունեցող և իր մեղքերի համար չսագացող մարդու ծիծաղը:

Իսկ մեկի վրա ծիծաղելը, այսինքն՝ նրան ծաղրի ենթարկելը, մանավանդ նրա որևէ բնական թերությունը, վիշտը կամ դժբախտությունը ծաղրի առարկա դարձնելը այնքան զարչելի մեղք է, որ այն գործողը նմանվում է նրանց, ովքեր Տեր Հիսուսին ծաղրեցին (տե՛ս Մատթ. ԻԶ 68, ԻԷ 27-31, 41): Եվ Աստծո պատկերով ստեղծված մարդուն ծաղրելով ու անարգելով՝ ծաղրում ենք հենց այդ պատկերը, նույնն է թե՛ Աստծուն:

Զրախոսություն նշանակում է գուր, անտեղի ու անպատշաճ խոսքեր արտասանել: Հաճախ նույն իմաստն է արտահայտում, ինչ դատարկաբանությունը: Սակայն այստեղ նկատի են առնված այն անպատշաճ խոսքերը, որոնք վերաբերում են հավատքին, Աստծուն, Եկեղեցուն և այլ սրբություններին, երբ մեկն այս մասին հանդուգն տեսակետներ է արտահայտում, որոնք հակասում են Եկեղեցու հավատքին ու վարդապետությանը: Այսպիսի զրախոսությունը կարող է վերածվել հերձախոսության, երբ մեկն արդեն համոզված կերպով քարոզում-ուսուցանում է Եկեղեցու հավատքին ու վարդապետությանը հակասող իր հայտնաբերած «ճշմարտությունները», համախոհներ ձեռք բերում, ինչը կարող է հերձված, այսինքն՝ բաժանում, պառակտում մտցնել Եկեղեցու անդամների մեջ:

Անիծելը մեկին չարիք մաղթելն է՝ ի տարբերություն օրհնություն, որով մեկին բարիք ես կամենում: Մեր Տերը պատվիրում է

մեզ. «Օրհնեցե՛ք ձեզ անիծողներին» (Մատթ. Ե 44), ուստի Նրա առաքյալ Պետրոսն ասում է. «Չարի փոխարեն չար մի՛ հատուցեք կամ բամբասանքի փոխարեն՝ բամբասանք, այլ ընդհակառակը՝ օրհնեցե՛ք» (Ա Պետ. Գ 9), իսկ Պողոս առաքյալն ասում է. «Մեզ բամբասում էին, իսկ մենք օրհնում էինք, հալածում էին, դիմա- նում էինք, հայհոյում էին, աղոթում էինք» (Ա Կոր. Դ 12):

Ուրեմն՝ եթե մեզ չարիք մաղթողներին ու հալածողներին անգամ պարտավոր ենք օրհնել և ոչ թե անիծել՝ ըստ Տիրոջ պատ- վերի, որի համաձայն չվարվելու դեպքում մեղանչում ենք, ապա որքան մեծ մեղք ենք գործում, երբ անիծում ենք մեր եղբայրնե- րին, բարեկամներին, հաճախ նույնիսկ ընտանիքի անդամներին: «Նրանով [լեզվով] օրհնում ենք Տիրոջն ու Հորը և նրանով անի- ծում մարդկանց, ովքեր ստեղծվեցին Աստծո նմանությամբ: Միևնույն բերանից ելնում են օրհնություններ և անեծքներ: Եղ- բայրեն՛ք իմ, չպե՛տք է այդպես լինի» (Հակոբ. Գ 9-10):

Տրտնջալու սովորությունն արդյունք է անհամբերության և Աստծուց շնորհակալ լինել չկարողանալու: Տրտունջը ծնվում է Աստծո տվածից գոհ չլինելուց՝ դժգոհելուց: Եթե առանց Աստծո կամքի մի ճնճուկ իսկ գետնին չի ընկնում, և մեր գլխի բոլոր մազերն իսկ հաշվված են (տե՛ս Մատթ. Ժ 29-30), ուրեմն առանց Տիրոջ կամքի կամ թողտվության մեզ հետ ոչ մի վատ բան պատա- հել չի կարող. իսկ Աստված մեր օգուտն ու փրկությունն առավել է կամենում, քան մենք ինքներս: Այդ իսկ պատճառով Աստծուց, որևէ մարդուց կամ որևէ տհաճությունից ու ձախորդությունից դժգոհելն ու տրտնջալն ուրիշ բան չէ, եթե ոչ գիտակցված կամ չգիտակցված ըմբոստություն Աստծո դեմ: Մարդն իրավունք ունի դժգոհելու, տրտնջալու և բողոքելու միայն սեփական անձից. «Բա- ցում եմ շուրթերս, լեզվովս խոսում, բողոքում իմ անձից», - ասում է ս. Ներսես Շնորհալին իր «Աշխարհ ամենայն» երգում: Իսկ Աստ- ծուն «ամեն ժամ և ամեն ինչի համար պետք է գոհուլություն հայտ-

նել» (Հմմտ. Եփես. Ե 20). «ամեն ինչի», այսինքն՝ ոչ միայն ուրա- խությունների ու բարիքների, այլև վշտերի ու ձախորդություննե- րի: Ինչպես տրտունջը թե՛ տրտնջացողին և թե՛ այն լսողներին տրտմություն ու ծանրություն է բերում, այդպես էլ ամեն ինչի հա- մար Աստծուց սրտանց շնորհակալ լինելը՝ ուրախություն ու թեթևություն:

«Մեղայի» այս հատվածում ներկայացված հաջորդ մեղքերն են բամբասելն ու հայհոյելը: Բամբասելու մասին խոսվել է ԵԿ-ում: Իսկ հայհոյելը մեկի հասցեին անարգական խոսքեր ասելն է ու անպատվելը. «Ամեն դառնություն, բարկություն, գայրույթ, աղաղակ և հայհոյություն, ամբողջ չարությամբ հանդերձ, թող վերանա ձեզանից» (Եփես. Դ 31): Հայհոյանք են համարվում նաև այն խոսքերը, որոնք որևէ կերպ անպատվում ու անարգում են Աստծուն և սրբությունները: Այդպես հրեաները, չհավատալով, որ Քրիստոսն Աստծո Որդին է, Նրա խոսքերն աստվածհայհոյություն էին համարում՝ կարծելով, թե Նա, իրենց նման մարդ լինելով, Իրեն Աստծո տեղ է դնում (տե՛ս Մատթ. Թ 3, ԻԶ 65):

2. Մեղայ գողութեամբ ձեռացս, ազահելով, զրկելով, հարկա- նելով, սպանանելով և ընդ գարչս ածելով⁷⁷: Մեղայ Աստուծոյ:

2. Մեղանչեցի ձեռքով գողանալով, ազահելով, զրկելով, հար- վածելով, սպանելով և գարչելի գործեր կատարելով: Մեղանչեցի Աստծո դեմ:

⁷⁷ «Ընդ գարչս ածել (ածիլ)» արտահայտության «գարչք»-ը նշանակում է գարշելի բաներ, գարշություն, պղծություն (տե՛ս Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հտ. Ա, Վե- նետիկ, 1836, էջ 531), իսկ «ածել»-ը, որ բազմաթիվ իմաստներ ու կիրառություններ ունի, կրավորաբար գործածվելիս կարող է նշանակել «հաճել, իրեն այստեղ-այնտեղ պահել, թավալ տալ, տարուերվել»: Հետևաբար «ընդ գարչս ածել (ածիլ)» դարձվածը բառացի նշանակում է «գարշելի բաների մեջ հաճել» և ըստ իմաստի թարգմանեցինք «գարշելի գործեր կատարել» (հմմտ. նույնատիպ կազմությամբ «ընդ բանս ածիլ» դարձվածի հետ. Նոր բառգիրք Հայկազգեան լեզուի, հտ. Ա, էջ 21):

Այս հատվածում ներկայացված են մարմնի հինգ զգայարան-ներինց մեկի՝ շոշափելիքի միջոցով գործվող որոշ մեղքեր:

Տասնաբանյա պատվիրաններից ութերորդը վերաբերում է գողությանը. «Մի՛ գողացիր» (Ելք Ի 15): Գողությունը պատկանում է այն մեղքերի թվին, որոնց թողությունն ստանալու համար միայն զղջումն ու խոստովանությունը բավական չեն. անհրաժեշտ է նաև գործով փոխհատուցում՝ կամ գողացվածը վերադարձնել տիրոջը, կամ, եթե վերադարձնելն այլևս անհնար է, հասցված վնասը որևէ այլ կերպ հատուցել: Մովսիսական օրենքը խիստ պատիժներ էր սահմանել գողերի համար. նրանք պետք է վերադարձնեին իրենց գողացածից մի քանի անգամ ավելին և եթե հատուցելու ոչինչ չունեին, ապա հենց իրենք պիտի վաճառվեին (Ելք ԻԲ 1-4), և մարդագողերը մահվան էին դատապարտվում (Ելք ԻԱ 16, Բ Ծրենք ԻԴ 7): Իսկ Պողոս առաքյալն ասում է. «Նա, ով գողանում էր, թող այլևս չգողանա, այլ մանավանդ աշխատի իր ձեռքերով բարիք արտադրել, որպեսզի կարողանա տալ կարիքի մեջ գտնվողին» (Եփես. Դ 28), քանի որ «ո՛չ գողերը, ո՛չ ազահները.... Աստծո արքայությունը չեն ժառանգելու» (Ա Կորնթ. Զ 10):

Գողության մի տեսակ է կորստագյուտի գողությունը, երբ մեկը կորած իր է գտնում և իրի տիրոջը ճանաչելով հանդերձ՝ այն չի հանձնում նրան (Ղևտ. Զ 3-4):

Ազահելն ազահությունը լցվելն է, և թեպետ սա չի պատկանում մարմնի անդամներով կատարվող մեղքերի թվին, սակայն ծնում է դրանք՝ գողություն, զրկողություն, սպանություն և այլն:

Զրկելու կամ զրկողության մեղքն են գործում նրանք, ովքեր իրենց իշխանությունից ու դիրքից օգտվելով՝ ուրիշներին զրկում են նրանց արդար վաստակից, աշխատանքի դիմաց չեն վճարում կամ պակաս են վճարում, անիրավ միջոցներով հափշտակում են նրանց ունեցվածքը և այլն: «Մի՛ զլացիր վարձ տալ քո աղքատ ու կարիքավոր եղբորը կամ քո քաղաքներում գտնվող եկվորին:

Նույն օրը տո՛ւր նրա վարձը, քանի դեռ արևը մայր չի մտել, որովհետև նա տնանկ է, և դա է նրա հույսը: Որպեսզի նա քեզանից չբողոքի Տիրոջը, և քեզ համար դա մեղք չհամարվի» (Բ Ծրենք ԻԴ 14-15): Երբ հարուստ Զակեբոսը Տեր Հիսուսին ասաց. «Տեր, ահա ունեցվածքիս կեսն աղքատներին կտամ, և եթե որևէ մեկին զրկել եմ, քառապատիկը կհատուցեմ», որպես պատասխան լսեց. «Այսօր այս տան մեջ փրկություն եղավ» (տե՛ս Ղուկ. ԺԹ 8-9): Ուրեմն՝ զրկողները նույնպես միայն զղջմամբ ու խոստովանությունամբ իրենց մեղքերին թողությունն ստանալ չեն կարող, եթե զրկանքի դիմաց հատուցելու, բարիք գործելու հնարավորությունն ունեն, սակայն զլանում են սա կատարել:

Զրկողության մի տեսակ է վաշխառությունը, երբ փոխատուն փոխառուի վրա մեծ տոկոսներ է դնում: Աստվածաշունչն ընդհանրապես տոկոսով փոխատվությունն ազգակիցներին, մանավանդ աղքատներին, անօրինություն է համարում (Ելք ԻԲ 25, Ղևտ. ԻԵ 35-37, Բ Ծրենք ԻԳ 19-20, Սաղմ. ԺԴ 5): Եթե Տեր Հիսուսը մեզ նույնիսկ պատվիրում է փոխ տալ առանց հատուցման ակնկալիքի (Ղուկ. Զ 35), և այս արդարությունը շատերիս կարող է անարդարություն թվալ, ապա պարզ է, թե մամոնապաշտ աշխարհում այնքան սիրված վաշխառությունը որքան հեռու է այն արդարությունից, որ պահանջում է մեզանից Աստված:

Հարվածելու մեղքը ծնվում է բարկությունից, և պարզ հարվածն անգամ կարող է վերածել ծեծկռտուքի, իսկ երբեմն էլ պատճառ դառնալ դիմացինի մահվան՝ այսպիսով վերածվելով սպանություն: Որևէ կենդանու անգթաբար հարվածելը կամ ծեծելը նույնպես մեղք է, քանի որ արդար մարդուն հատուկ է գուլթ ունենալ ոչ միայն մարդկանց, այլև Աստծո բոլոր արարածների, մանավանդ այն կենդանիների հանդեպ, որոնք օգուտ են տալիս մարդուն և հանձնված են նրա խնամքին. «Արդար մարդը ողորմում է իր անասունին» (Առակ. ԺԲ 10):

Կարիք չկա բացատրելու, թե որքան մեծ մեղք է սպանությունը, որն արգելված է տասնաբանյա պատվիրաններից վեցերորդով. «Մի՛ սպանիր» (Ելք Ի 13): Իսկ Տեր Հիսուսն այս պատվիրանը լրացրեց հետևյալ կերպ. «Բայց ես ձեզ ասում եմ, որ ամեն ոք, ով զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի, ով իր եղբորն ասի՝ հիմար, ենթակա կլինի ատյանի, և ով իր եղբորն ասի՝ ապուշ, ենթակա կլինի գեհենի կրակին» (Մատթ. Ե 22): Սրանով Տերը եղբոր վրա զուր տեղը բարկացողին ու անպատվողին հավասարեցնում է մարդասպանին, ինչպես Նրա առաքյալ Հովհաննեսն էլ ասում է. «Ով ատում է իր եղբորը, մարդասպան է» (Ա Հովհ. Գ 15):

Սպանության մեղք են գործում թե՛ ուրիշին կյանքից զրկողները, թե՛ ինքնասպանները և թե՛ իրենց արգանդի պտուղը ոչնչացնող կանայք⁷⁸:

Իսկ ինչ վերաբերում է պատերազմների ժամանակ գործվող սպանություններին, ապա այսպիսի սպանությունը մեղք չի համարվում, քանի որ կատարվում է հայրենասիրությունից ու ազգասիրությունից մղված: Այս մասին է խոսում «Հայոց կանոնադրքում» տեղ գտած կանոններից մեկը⁷⁹:

Գարչելի գործեր ասելով կարող ենք հասկանալ մարմնի անդամներով, մանավանդ ձեռքերի ու ոտքերի միջոցով կատարվող մնացած բոլոր գարչելի գործերը, որոնք մարդ կարող է կատարել, ինչպես օրինակ՝ կաշառք տալ կամ պահանջել, խաբեբայությունը զբաղվել, մեկին տանջել, չարչարել, բռնաբարել, ծաղրուծանակի ենթարկել և այլն:

Է. Մեղայ ամենայն յօդուածովք շինուածոյս և ամենայն անդամօք մարմնոյս, հնգեակ զգայարանօքս և վեցեկի շարժմամբս՝ վե-

⁷⁸ Վերջինի մասին տե՛ս «Կանոնագիրք Ռայոց», հտ. Բ, էջ 151, 158 («Կանոնք Բաաղի Կեսարացոյ, ՄԶԸ, ՄԺԲ»):

⁷⁹ Անդ, հտ. Ա, էջ 341 («Կանոնք Բաաղի Կեսարացոյ, Ը»):

րամբարձ ոտնահարութեամբ և վայրաքարչ մեղկութեամբ, յաջ և յահեակ խոտորելով, զառաջնոցն մեղանչելով և վերջնոցն չար նշաւակ գոլով: Մեղայ Աստուծոյ:

Է. Մեղանչեցի մարմնիս բոլոր մասերով ու բոլոր անդամներով, հինգ զգայարաններով և վեցյակ շարժումներով՝ վերամբարձ ոտնահարութեամբ, վայրաքարչ մեղկութեամբ, աջ և ձախ խոտորվելով, նախկինների մեղքերը գործելով և գալիք սերունդներին չար օրինակ թողնելով: Մեղանչեցի Աստծո դեմ:

Միջնադարյան գիտնականների հաշվարկով՝ մարդու մարմինն ունի 248 ոսկոր, 12 անդամ և 5 զգայարան, և այս ամբողջի հանրագումարը կազմում է 365 մաս⁸⁰ (կամ՝ զոդված, հոդված): Ս. Գրիգոր Նարեկացին, գիտենալով այս մասին, իր «Մատյան ողբերգություն» աղոթագրքի ԽԶ գլխում, սեփական անձին դիմելով, գրում է. «Երեք հարյուր վաթսուն հոգերով շողկապվեցիր՝ նրանց միացնելով նաև 5 զգայարանների ազդողական պատշաճ մասերը»⁸¹:

Մարդու տաներկու անդամներն են՝ 1. գլուխ, 2. վրդ, 3. ուսերից մինչև ձեռքերը ներառյալ, 4. կուրծք, 5. կողեր, 6. որովայն, 7. մեջք, 8. երանք (երկկամների հատվածը), 9. սեռական անդամներ, 10. ազդերը, 11. սրունքներ և 12. ոտնաթաթեր⁸²:

Հինգ զգայարանների ու նրանց մեղքերի մասին արդեն խոսվել է Դ1-ում և դրան հաջորդած մասերում:

Մարդու վեցյակ կամ վեց շարժումները (վերև, ներքև, աջ, ձախ, առաջ, հետ) տարբեր հայրերի կողմից մեկնվել են տարբեր կերպ: Այստեղ դեպի վեր շարժումը վերամբարձ ոտնահարումն է, այսինքն՝ ոտքով դեպի վեր հարված հասցնելը, որը կարելի է հասկանալ որպես արհամարհանք կամ թշնամություն Աստծո և աստվածային ամեն ինչի հանդեպ: Իսկ սա ոչ այլ ինչ է, եթե ոչ հպար-

⁸⁰ Գ. Տաթևացի, Գիրք Բարցմանց, էջ 244, Եփրեմ Ասորի, Գիրք աղօթից, էջ 13:

⁸¹ Տե՛ս Գ. Նարեկացի, Մատենա ողբերգութեան, Ե., 1985, էջ 424:

⁸² Գ. Տաթևացի, Գիրք Բարցմանց, էջ 241:

տուլթյունն ու ամբարտավանությունն: Ուրեմն՝ վերամբարձ ոտնա-
հարուժը համապատասխանում է **Հպարտությանը**, ինչը հիրավի
տեսնում ենք ս. Եփրեմ Ասորու և ս. Գ. Տաթևացու կողմից վեցյակ
շարժումների բացատրություն մեջ⁸³: Դեպի վար շարժումը՝ վայրա-
քարչ մեղկությունը, նշանակում է երկրի վրա քարչ եկող, երկրա-
հակ մեղկություն⁸⁴, այսինքն՝ տրտմության կամ ձանձրույթի պատ-
ճառով ծանրանալու և թուլանալու հետևանքով բարիք գործել
չկարողանալը, ուստի և տարատեսակ մեղքերի մեջ ընկղմվելը: Ս.
Եփրեմ Ասորին դեպի վար շարժում է համարում **տրտմությունը**,
իսկ ս. Գ. Տաթևացին «Գիրք Հարցմանց»-ում՝ **տրտմությունն ու
ձանձրույթը** (այսինքն՝ **ծուլությունը**, ինչպես բացատրում է հենց
ինքը Տաթևացին):

Աջ և ձախ խոտորումն ընդհանրապես նշանակում է որևէ
առաքինություն միջին ուղիղ շավղի վրա չմնալով մեղանչել: Այս
խոտորումների կամ տարաբևեռ շեղումների մասին խոսվել է ԲԶ-
ում: «Գիրք Հարցմանց»-ում՝ վեցյակ շարժումների բացա-
տրություն մեջ, Տաթևացին դեպի աջ շարժում է համարում **ար-
ծաթսիրությունը** (փողասիրությունը), իսկ դեպի ձախ շարժում՝
պոռնկությունը:

Աջ և ձախ շարժումները ցույց են տալիս նաև հոգեկան (աջ) ու
մարմնական (կամ՝ շնչական. ձախ) մեղքերը, ինչպես տեսնում ենք
նաև ս. Եփրեմ Ասորու «Մեղայում»: **Հոգեկան մեղքեր** են հպար-
տությունը և նրանից ծնված բազմաթիվ մեղքեր, ինչպես օրինակ՝
սնափառություն, ամբարտավանություն, արհամարհանք, նա-
խանձ, չարակամություն, չարախոսություն, ստախոսություն,
բարկություն, անհնազանդություն, վհատություն, տրտմություն
(մեղամաղձական) և այլն: **Իսկ մարմնական մեղքեր** են որկրամո-
լությունը և այն բոլոր մեղքերը, որոնք այս կամ այն կերպ առնչ-

⁸³ Տե՛ս Եփրեմ Ասորի, Գիրք աղօթից, էջ 14-15, Գ. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 560:

⁸⁴ «Մեղկություն» բառի բացատրությունը տե՛ս Դ.3-ում:

վում են որկրամոլության հետ: Դրանցից են, օրինակ, անառակու-
թյունը, հարբեցողությունը, անպարկեշտությունը, պոռնկու-
թյունը, ծուլությունը, անբանությունը և այլն⁸⁵:

«Նախկինների մեղքերը գործելով և գալիք սերունդներին չար
օրինակ թողնելով», այսինքն՝ մեղանից առաջ ապրածների սխալնե-
րից դաս չքաղելով՝ նույն սխալներն ենք թույլ տալիս, որով գալիք
սերունդներին չար օրինակ ենք թողնում: «Նախկինների մեղքերը
գործել»-ն այստեղ հավանաբար դեպի հետ շարժումն է ցույց տա-
լիս, և «գալիք սերունդներին չար օրինակ թողնել»-ը՝ դեպի առաջ
շարժումը: Սակայն ս. Եփրեմը դեպի առաջ շարժում է համարում
հանդգնությունը և դեպի հետ շարժում՝ **սրտմտությունը** (բարկու-
թյունը), իսկ ս. Գրիգոր Տաթևացին «Գիրք Հարցմանց»-ում դեպի
առաջ շարժում է համարում **բարկությունը** և դեպի հետ շարժում՝
որկրամոլությունը⁸⁶:

Ը. Այլ և մեղայ եւթնիցս յանցանօք մահացու մեղօք՝ հպարտու-
թեամբ և մասամբք նորին, նախանձու և մասամբք նորին, բարկու-
թեամբ և մասամբք նորին, ծուլութեամբ և մասամբք նորին, ազա-
հութեամբ և մասամբք նորին, որկրամոլութեամբ և մասամբք
նորին, բղջախոհութեամբ և մասամբք նորին: Մեղայ Աստուծոյ:

Ը. Այլև մեղանչեցի յոթ մահացու մեղքերով՝ հպարտությամբ,
նախանձով, բարկությունամբ, ծուլությամբ, ազահությունամբ, որկրա-
մոլությամբ, բղջախոհությամբ և նրանց տարատեսակներով:
Մեղանչեցի Աստծո դեմ:

Յոթ մահացու մեղքերն այն գլխավոր մեղքերն են, որոնք
մնալով մարդու մեջ և ապաշխարություն չքաղվելով՝ մարդու

⁸⁵ Տե՛ս Թովմ. Մանդակունի, Գառք, էջ 216-217:

⁸⁶ Տաթևացին «Գիրք հարցմանց»-ում չի տալիս դեպի առաջ և հետ շարժումների՝
«Մեղայում» ներկայացված բացատրությունները, որոնք, անշուշտ, բնավ չեն համա-
պատասխանում բարկությանն ու որկրամոլությանը:

հավիտենական մահվան պատճառ կարող են դառնալ, ուստի և «մահացող» են կոչվում: Այս մահացող մեղքերը ծնողն են մյուս բոլոր մեղքերի: Այս յոթ գլխավոր մեղքերից առաջին երեքը՝ հպարտություն, նախանձ, բարկություն, հոգեկան մեղքեր են համարվում, իսկ մնացած չորսը՝ ծուլություն, ազահություն, որկրամոլություն և բղջարահոլություն՝ մարմնական մեղքեր⁸⁷:

Հպարտության ծնունդները կամ տարատեսակներն են փառասիրությունը, սնափառությունը, ինքնահավանությունը, ինքնագովությունը, մեծամտությունը, պատվասիրությունը, կեղծավորությունը, ցուցադրամոլությունը, հանդգնությունը, անհնազանդությունը և այլն: Հպարտությամբ էր, որ սատանան իրեն անչափ մեծ մեկը կարծեց և նախանձելով Աստծո մեծ փառքին՝ ցանկացավ Նրա տեղը գրավել: Հպարտության հակադիր առաքինությունն է խոնարհությունը: «Ով իր անձը բարձրացնում է, կխոնարհվի, և ով իր անձը խոնարհեցնում է, կբարձրանա» (Մատթ. ԻԳ 12):

Նախանձից ծնվում են ռիսակալությունը, ատելությունը, հիշաչարությունը, արհամարհանքը, թշնամանքը, ծաղրը, ուրիշների հետ սեփական անձը համեմատելիս իրեն ավելին կարծելը և այլն: Նախանձի հակադիր առաքինությունն է եղբայրասիրությունը:

Բարկության տարատեսակներն են ցասումը, կատաղությունը, վիրավորելը, հարվածելը, վեճեր ստեղծելը, հակառակելը, բազում տրտունջներն ու բողոքները, հայհոյանքը և այլն: Բարկության հակադիր առաքինությունն է հեղուկությունը: «Սովորեցե՛ք ինձանից, որ հեղ եմ և սրտով խոնարհ,- ասում է Տերը,- և ձեր անձերին հանգիստ կգտնեք» (Մատթ. ԺԱ 29):

Ծուլությամբ, այսինքն՝ առանց որևէ ջանք թափելու, մարդը չի կարող փրկվել: Միայն հավատով չէ, որ մարդ պիտի արդարանա,

այլև իր գործած առաքինություններով. «Հավատն առանց գործի մեռած է» (Հակոբ. Բ 20), և հավատն է, որ ստիպում է մեզ գործել, գործել թե՛ մեր ներսում՝ հոգալով մեր հոգու մաքրության մասին, և թե՛ մեզանից դուրս՝ եղբայրասիրության ու ողորմության բարի գործեր կատարելով: Ծուլությունից առաջ են գալիս ձանձրույթ, քնկոտություն, դատարկակեցություն, շատախոսություն ու բամբասանքներ, հեշտասիրություն (հաճույքասիրություն), աղոթելու, եկեղեցի հաճախելու, Աստվածաշնչի ընթերցման մեջ թուլացում, ուսման և այլ պարտականությունների մեջ կաղում: «Այս բանն ենք պատվիրում ձեզ,- ասում է Պողոս առաքյալը,- ով չի ուզում աշխատել, թող չուտի էլ: Արդ, լսում ենք, որ ձեզանից ոմանք անկարգ կյանքով են ապրում, որևէ գործով չեն զբաղվում, այլ ծուլ-ծուլ շրջում են՝ պարապ բաներով հետաքրքրվելով: Այդպիսիներին պատվիրում ու հորդորում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսով, որ աշխատեն հանդարտությամբ և իրենց հացն ուտեն» (Բ Թեսաղ. Գ 10-15), քանի որ Պողոս առաքյալն ինքն էլ էր մեծ ջանքով ու տքնությամբ գիշեր ու ցերեկ աշխատում, որպեսզի որևէ մեկի վրա ծանրություն չդառնար: Եվ այսպես էր վարվում հավատացյալներին օրինակ ծառայելու համար, որ իրեն նմանվեն (տե՛ս Բ Թեսաղ. Գ 7-9): Ուրեմն՝ ծուլության հակադիր առաքինությունն աշխատասիրությունն է:

Պողոս առաքյալը երկու տեղ ազահությունը կռապաշտություն է անվանում (Եփես. Ե 5, Կողոս. Գ 5), որովհետև, ըստ Տիրոջ խոսքի (Մատթ. Զ 24), մարդ չի կարող միաժամանակ երկու տիրոջ ծառայել, այսինքն՝ չի կարող ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային, որը հարստությունն է: Ուստի ազահը, որ ծառայում է մամոնային, կռապաշտ է և ոչ թե աստվածապաշտ: Ազահության ծնունդներ են փողասիրությունը, առևտրում կամ դրամական այլ կարգի հաշիվներում խարդախությունը, գողությունը, զրկողությունը, աղքատների, թշվառների հանդեպ ատելությունը և օգնությունից նրանց

⁸⁷ Մկրտիչ վրդ. Արծրունեան, Բացատրություն հրաժարման և զղջման բանից..., էջ 93: Հոգեկան ու մարմնական մեղքերի մասին տե՛ս Ասխորի՝ Է հատվածի՝ աջ և ձախ խոստորումների բացատրության մեջ:

գրկելը, ժլատութիւնը և այլն: Ագահութեան հակադիր առաքինութիւնն է **ողորմածութիւնը**:

Որկրամոլութիւնն նշանակում է որկորի (կերակրափողի) հաճույքին շատ տուրք տալ: Որկրամոլութիւնն են թե՛ շատակերութիւնը և թե՛ այնպիսի քչակերութիւնը, որ կատարվում է չափազանց մեծ հաճույքով ու հափշտակութեամբ: Այնպես պիտի չլինի, որ մարդու որովայնն իր աստվածը դառնա (տե՛ս Փիլիպ. Գ 19): Որկրամոլութեան ծնունդ են անհագ ուտելը, առանց ժամ ու ժամանակի կերակրվելը, պահքն արհամարհելը, հարբեցողութիւնը և այլն: Որկրամոլութեան հակադիր առաքինութիւնն է **ժուժկալութիւնը՝ չափավորութիւնը**:

Բղջախոհութիւնը անմաքուր ու անպարկեշտ, ցանկական բաների մասին խորհելն է, դեպի հայտնի պոռնկութիւնն տանող դուռը: Բղջախոհութիւնը ծնում է անամոթ նայվածքներ, անպատկառութիւնն ու լրբութիւնն, անպարկեշտ խոսքերի արտաբերում և այլն: Սրա հակադիր առաքինութիւնն է **ողջախոհութիւնը**, որը մարդուն զսպել է տալիս անմաքուր ցանկութիւնները, որոնք կարող են ապականել նրա թե՛ մարմինը, թե՛ հոգին:

Մարդու բնութեան մեջ դրված այս կրքերն ըստինքյան չար չեն, բայց մարդը չարի խաբեութեամբ ու իր հոժարակամութեամբ դրանք մեղք է դարձնում: Եթե պիտի հպարտանանք, ապա միայն մեր Աստծով և ոչ թե մեր անձով. ինչպես ասում է Պողոս առաքյալը, «Ով պարծենում է, թող Տիրոջով պարծենա» (Ա Կոր. Ա 31, Հմմտ. Երեմ. Թ 24), կամ՝ «Քա՛վ լիցի ինձ պարծենալ մեկ այլ բանով, քան մեր Տեր Հիսուսի խաչով» (Գաղատ. Զ 14): Եթե նախանձելու ենք, ապա միայն բարուն ու առաքինութեանը՝ մեր կյանքն առավել առաքինի դարձնելու և ոչ թե ուրիշներին վնասելու համար. «Նախանձավո՛ր եղեք այն շնորհներին, որ լավն են» (Ա Կորնթ. ԺԲ 31): Եթե պիտի բարկանանք, ապա միայն մեղքի, մեզ

նեղող չարի ու նրա սպասավորների վրա և կամենանք Տիրոջ գորութեամբ հաղթանակ տանել նրանց դեմ: Եթե պիտի ծուլանանք, ապա չարիք գործելու մեջ: Եթե պիտի ագահ լինենք, ապա միայն Աստծո փառքը փնտրելիս: Մնվելն էլ մարդուն տրված է մարմինը կենդանի պահելու համար, սակայն մենք մեր անժուժկալութեան պատճառով այն վերածում ենք որկրամոլութեան: Փոխարեն Աստծո և մարդկանց հանդեպ մաքուր սիրով լցվելու, բղջախոհութեամբ դառնում ենք ցանկասեր ու մարմնասեր, մինչդեռ մարմնի սեռական ցանկութիւնն Աստված մարդու մեջ դրել է սերնդագործութեան համար՝ համաձայն Իր իսկ պատվերի. «Աճեցե՛ք, բազմացե՛ք և լցրեք երկիրը» (Մննդ. Ա 28):

Թ. Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ՝ յանձնառեւեացն և հրաժարեւեացն, զի ոչ զյանձնառականսն կատարեցի և ոչ ի հրաժարեւեացն հեռացայ: Զօրէնս առի և յօրինացն հեղագացայ, ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ և գործովս անարժան գտայ, զիտելով զչարն՝ կամաւ կորացայ և ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Զո՞րն ասեմ կամ զո՞րն խոստովանիմ, զի անթիւ են յանցանք իմ, անասելի են անօրէնութիւնք իմ, աններելի են ցաւք իմ, և անբժշկելի են վէրք իմ: Մեղայ Աստուծոյ:

Թ. (1) Այլև մեղանչեցի Աստծո բոլոր պատվիրանների դեմ՝ հանձնառելի և հրաժարելի, որովհետև ոչ հանձնառելիները կատարեցի, ոչ էլ հրաժարելիներից հեռացա: (2) Օրենքը ստանձնեցի, սակայն նրանում ծուլացա, քրիստոնեական հավատքն ընդունեցի, բայց գործերովս նրան անարժան գտնվեցի, չարն իմանալով՝ կամովին շեղվեցի և բարի գործերից ինքնակամ հեռացա: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Ո՞րն ասեմ կամ ո՞րը խոստովանեմ. հանցանքներս անթիվ են, անօրենութիւններս՝ անպատմելի, ցավերս՝ աններելի, և վերքերս՝ անբժշկելի: Մեղանչեցի Աստծո դեմ:

Թ1. Մինա լեռան վրա Աստծուց Մովսեսին հանձնված քարե տախտակները պարունակում էին տասը պատվիրաններ, որոնցից առաջին հինգը պատվիրում էին հանձն առնել այս կամ այն բանը կատարել, իսկ հաջորդ հինգն արգելում էին կամ հրաժարեցնում այս կամ այն բանը կատարելուց (տե՛ս Ելք Ի 2-17): Այս իսկ պատճառով առաջին հինգը կոչվում են հանձնառելի պատվիրաններ (հանձնառական կամ դրական պատվիրաններ), իսկ մյուս հինգը՝ հրաժարելի (հրաժարական կամ ժխտական պատվիրաններ):

Հանձնառելի 5 պատվիրաններն են՝

1. Մեր Աստծուց բացի այլ աստվածներ պիտի չլինեն մեզ համար:
2. Որևէ բանի նմանությունը կուռք պիտի չչինենք ու չպաշտենք, քանի որ մեր Աստվածը նախանձախնդիր Աստված է:
3. Մեր Աստծո անունն անպատեհ ու իզուր պիտի չարտասանենք:
4. **Շաբաթ** օրը սուրբ պիտի պահենք, այսինքն՝ ոչ մի գործ պիտի չանենք:

Քրիստոնյաները, Տիրոջ հարություն օրվա խորհրդով, շաբաթը փոխարինեցին **կիրակիով**: Հրեաները շաբաթը (եբր. նշանակում է «հանգիստ») սուրբ պահելու շատ խիստ օրենքներ ունեն. նույնիսկ գրելու, լույս վառելու, ավելու, ինչ-որ բան քաղելու և այլ նման գործեր կատարելու իրավունք չունեն, և շաբաթը խախտողները հնում խստորեն պատժվում էին: Իսկ քրիստոնյաները, հիմնվելով Տիրոջ այն խոսքի վրա, թե՛ «**Շաբաթը մարդու համար եղավ և ոչ թե մարդը՝ շաբաթի**» (Մարկ. Բ 27), ազատ են հրեական Օրենքի այս կապանքներից և կիրակի օրը սուրբ են պահում՝ այդ օրն առավելապես Տիրոջ տրամադրելով, այսինքն՝ եկեղեցի հաճախելով ու ս. Պատարագին մասնակցելով, աղոթելով,

Աստվածաշունչ ու հոգևոր գրականություն ընթերցելով, ողորմության գործեր կատարելով, իսկ անձնական շահի կամ եկամտի համար կատարվող գործերից, առավել ևս անառակություններից, անպարկեշտ կերուխումից ու զվարճանքներից, պետք է խուսափեն:

5. Պիտի պատվենք մեր հորն ու մորը:

Հրաժարելի պատվիրաններն են՝

6. Մի՛ սպանիր:
7. Մի՛ շնացիր:
8. Մի՛ գողացիր:
9. Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր:
10. Քո մերձավորին պատկանող որևէ բանի վրա աչք մի՛ դիր, այսինքն՝ մի՛ ցանկացիր դրանք ունենալ:

Թ2. Օրենքը «Մեղայի» այս հատվածում քրիստոնեական կրոնն է նշանակում, որը նույնպես, ինչպես ցանկացած կրոն, ունի իր պարտադիր օրենքներն ու կանոնները: Սա նույնն է, ինչ քրիստոնեական հավատքը (կամ ինչպես գրաբարյան բնագրում՝ կարգը), ուստի «Օրենքը ստանձնեցի, սակայն նրանում ծուլացա»-ն և «քրիստոնեական հավատքն ընդունեցի, բայց գործերովս նրան անարժան գտնվեցի»-ն ըստ էության նույն իմաստն են արտահայտում, որ է՝ «Միայն անունով եմ քրիստոնյա և ո՛չ թե գործերով»:

Այնուհետև խոսվում է գիտակցաբար ու կամովին գործված մեղքերի մասին, որոնց անդրադարձել ենք Ա2-ում, և ապա հետևում են խոստովանողի մեծ զղջումը հավաստող, ինքնախարազանող խոսքեր, որոնք, չափազանցություն լինելով, կարելի է ասել, չեն համապատասխանում ճշմարտությանը, որովհետև սրտանց զղջացողի, անկեղծ խոստովանողի ու ապաշխարողի համար չկա ոչ

աններելի ցավ և ոչ էլ անբժշկելի վերք, քանի որ թե՛ ներողը և թե՛ բժշկողն ամենագուր ռ ամենակարող Աստված է:

Ժ. Հա՛յր սուրբ, գքեզ ունիմ միջնորդ Հաշտութեան և բարեխօս առ Միածին Որդին Աստուծոյ, զի իշխանութեամբդ, որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ գքեզ:

Ժ. Հա՛յր սուրբ, դու ես իմ՝ Աստծո Միածին Որդու Հետ Հաշտության միջնորդն ու բարեխօսը, քեզ տրված իշխանությամբ արձակի՛ր իմ մեղքերի կապանքները, աղաչո՛ւմ եմ քեզ:

Այս գրքուկի «Ներածության» մասում՝ «Խոստովանութիւն» խորագրի ներքո, արդեն խոսվել է քահանաներին Աստուծոց տրված այն իշխանության մասին, որով նրանք կարող են մարդկանց մեղքերին թողութիւն տալ, ինչի շնորհիվ մեղքերի պատճառով Աստուծուն դառնացրածներս նորից Հաշտուում ենք Նրա Հետ: Ինչպես ասում է Սայի մարգարեն, «**Ձեր մեղքերն են պատնէշ դարձել ձեր և Աստծո միջև**» (Սայի ԾԹ՝ 2), իսկ անկեղծ խոստովանութիւնն ու քահանայի միջոցով տրված թողութիւնը քանդում են այդ պատնէշն ու Հաշտեցնում-միավորում մեզ մեր երկնավոր Հոր Հետ:



«ԱՐՁԱԿՈՒՄՆ» ՄԵՂՔԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՄ՝⁸⁸

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց՝ խոստովանեցելոցն և մոռացելոցն: Եւ ես կարգաւ քահանայական իշխանութեան և հրամանաւ աստուածային, թէ՛ «Ձոր արձակեցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս», նովին բանիւն արձակեմ գքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց՝ ի խորհրդոց, ի բանից և ի գործոց, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Եւ դարձեալ տամ գքեզ ի խորհուրդս սուրբ Եկեղեցւոյ, զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս Հանդերձեալ կենացն: Ամէն:

Մարդասեր Աստված թող քեզ ողորմի և թողութիւն շնորհի քո բոլոր Հանցանքներին՝ թե՛ խոստովանված և թե՛ մոռացված: Եվ ես քահանայական իշխանության կարգով և աստվածային հրամանով, թե՛ «Ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում», այդ նույն խոսքով, Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, արձակում եմ խորհուրդներով, խոսքերով և գործերով քո կատարած բոլոր մեղքերը: Այլ և քեզ դարձյալ հանձնում եմ սուրբ Եկեղեցու խորհուրդներին, որպեսզի ինչ բարիք էլ գործում ես, բարեգործութիւն համարվի և քեզ հանդերձյալ կյանքի փառքին արժանացնի: Ամեն:

Քահանան՝ որպես Աստծո և մարդու միջնորդ, արձակում է

⁸⁸ «Ողորմեսցին» նույնպես վերագրվում է ս. Գ. Տաթևացուն, ինչպես և Աշված է ս. Եփրեմի աղոթագրքում: Ս. Աթանասի և ս. Եփրեմի «Մեղապից» հետո նույնությամբ բերված է «Ժամագրքում» եղած «Ողորմեսցին»՝ հետևյալ վերտառությամբ. «Աղօթք արձակման՝ արարեալ մեծի թաբունապետին Գրիգորի Տաթևացոյն» (Էջ 29): Միքելյանն իր «Քրիստոնէականում» (Էջ 419) որպես «Ողորմեսցի» հեղինակ է Աշուն ս. Գրիգոր Լուսավորչին: Սակայն որևէ այլ աղբյուրում մենք այս մասին հիշատակություն չկարողացանք գտնել:

մարդու մեղքերի կապանքները և ապա նրան դարձյալ հանձնում Եկեղեցու խորհուրդներին: Ի՞նչ է սա նշանակում: Հնում ծանր մեղքեր գործածներն իսկույն թողության չէին արժանանում, այլ ապաշխարության մի որոշ շրջան էին անցնում և միայն հետո՝ քահանայից թողություն ստանում: Հոգևորականի կողմից նշանակված ապաշխարության շրջանը չբոլորած ու թողության չարժանացած մարդիկ իրավունք չունեին մասնակցելու Եկեղեցու խորհուրդներին՝ չէին կարող ոչ մկրտվել, ոչ պսակվել, ոչ որևէ եկեղեցական աստիճան ստանալ՝ ձեռնադրվել, և առավել ևս՝ չէին կարող մասնակցել ս. Հաղորդության խորհրդին՝ ս. Պատարագի արարողությանը, որին հետևում էին դրսից՝ կանգնելով եկեղեցու դռան մոտ կամ գավթում: Հիրավի սա տեսնում ենք ս. Պատարագի արարողության ժամանակ. բուն խորհրդի կատարումից առաջ սարկավազը ձայնում է. «Թող ոչ մի երախա [այսինքն՝ չմկրտված], ոչ մի թերահավատ, ոչ մի ապաշխարող ու անմաքուր մարդ չմոտենա աստվածային այս Խորհրդին», իսկ ավելի ուշ՝ «ողջունը» տալիս, ասում է. «Միմյանց ողջունե՛ք սուրբ համբույրով, և ձեզանից ովքեր չեն կարող հաղորդվել աստվածային Խորհրդին, թող դռան մոտ կանգնեն և աղոթեն»: Իսկ երբ մեղավորի ապաշխարության շրջանն անցնում էր, և նա իր մեղքերին թողություն էր ստանում, այլևս կարող էր մասնակցել Եկեղեցու խորհուրդներին: Ահա այս է նշանակում «քեզ դարձյալ հանձնում եմ սուրբ Եկեղեցու խորհուրդներին» խոսքը:



ՏԱՎԵԼՎԱԾ Ա

(Ս. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Զմեռան հատոր, էջ 236-327)

Արդ, եղբայրներ՛ր, Աստծո սիրով աղաչում եմ, անգեղջ կամքով, մեղքերի մեջ չմեռնե՛նք, այս աշխարհից անապաշխար դուրս չելնե՛նք. որովհետև «**ահավոր է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը**» (Եբր. Ժ 31): Թեև անմեղ լինել չենք կարող, ինչը հրեշտակներին է հատուկ, մեղքի մեջ անգեղջ չլինե՛նք, ինչը հատուկ է սատանային, այլ ինչը մարդուն է հատուկ, ա՛յն կատարենք. մեղքից դառնանք, ապաշխարենք, սրտով զղջանք, լեզվով խոստովանենք և գործով արդարացվենք: «**Դեպի Աստված դառնանք, և Նա կդառնա դեպի մեզ**» (Հմմտ. Զաք. Ա 3):


Երբ զղջում ենք մեղքի համար, Աստված մեզ հետ հաշտվում է, երբ մեղքը խոստովանում ենք, Աստված մեզ ներում է շնորհում, և երբ ապաշխարում ենք, պատիժներից ազատվում ենք:

Բայց եթե դու մեղքդ չես թողնում, Աստված էլ մեղքիդ պատիժը չի թողնում: Եթե դու դեպի Աստված չես դառնում, Նա էլ դեպի քեզ չի դառնում:

Դո՛ւ հաշտվիր Աստծո հետ, քանզի դո՛ւ բարկացիր Նրան: Դո՛ւ մոտեցիր Նրան, քանզի դո՛ւ հեռացար Նրանից և քեզ կորստյան մատնեցիր: Ինչպես ասում է Դավիթ մարգարեն, «**Ովքեր իրենց հեռացրին Քեզնից, կորստյան կմատնվեն**» (Սաղմ. ՀԲ 27):

Դո՛ւ գտիր քեզ, քանզի դո՛ւ քեզ կորցրիր: Դո՛ւ արդարացիր, քանզի դո՛ւ մեղանչեցիր: Որովհետև այն Աստվածը, Ով քեզ ստեղծեց առանց քեզ, քեզ չի արդարացնի առանց քեզ: Մի՛ ասա, թե՛ «Ողորմած է Աստված, ինձ կքավի»: Ողորմած է, այո՛, բայց նաև արդա՛ր. զղջացողներին ողորմում է, բայց չզղջացողներին արդա՛-

ըուծյամբ դատում ու քննում: Ողորմած է, բայց արժանավորների հանդեպ, իսկ անարժանների համար արդար դատավոր է: Այս կյանքով է մեղավորի հանդեպ ողորմած, իսկ հանդերձյալում արդարադատ է: Այստե՛ղ է նստած ողորմության ու շնորհի աթոռին, իսկ այնտեղ կնստի դատաստանի աթոռին: Եվ մենք պետք է կամ ամաչենք Նրա ողորմությունից, կամ երկնչենք Նրա արդարությունից: Այստե՛ղ է ներում, իսկ այնտեղ դատապարտում է: Ինչպես ասում է առաքյալը, «**Եթե Աստծո ներողամտությունն այստեղ արհամարհում ես, քեզ համար բարկությունն ես գանձում Աստծո արդար դատաստանի օրը**» (Հմմտ. Հռոմ. Բ 4): Քանզի կրակով լցված գեհենն այն է, որ ասում է. «**Գնացե՛ք Ինձանից, անիծվածներ՛ր, դեպի հավիտենական կրակը**» (Մատթ. ԻԵ 41), որից թող փրկի մեզ ամենքի Փրկիչն ու մեր Քրիստոս Աստվածը, Ում փա՛ռք հավիտյանս: Ամեն:



ՆԱՎԵԼՎԱԾ Բ

Որպես հավելված ներկայացնում ենք «Հրաժարիմքը», «Հաւատոյ ուղղափառ խոստովանութիւն»-ը և մեղքերի ընդհանրական խոստովանությունը՝ գրաբար բնագրով և զուգահեռ աշխարհաբար թարգմանությամբ:

ՀՐԱԺԱՐԻՄՔ

Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա, ի պատրանաց նորա, ի խորհրդոց նորա, ի գնացից նորա, ի չար կամաց նորա, ի չար հրեշտակաց նորա, ի չար պաշտօնէից նորա, ի չար կամարարաց նորա և յամենայն չար զօրութենէ նորա հրաժարելով հրաժարիմք:

«Հրաժարիմքը» երեք անգամ ասելուց հետո շրջվում են դեպի արևելք և սկսում արտասանել մեր Եկեղեցու հավատքի խոստովանությունը: Այն արտասանում են ձեռնամած, այսինքն՝ ձեռքերի ափերը միմյանց կցած և կրծքի դիմաց պահած:

Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած անեղ, անծիմ և անսկիզբն, այլ ծնող Որդու և բխողը Սուրբ Հոգու Սրբոյ:

Հաւատամք զԲանն Աստուած անեղ, ծնեալ և սկսեալ ի Հօրէ

ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆՔ

Հրաժարվում ենք սատանայից և նրա ամբողջ խաբէությունից, նրա պատրանքներից, խորհուրդներից, ընթացքից, նրա չար կամքից, չար հրեշտակներից, չար սպասավորներից, չար կամարարներից և նրա ամբողջ չար զորությունից հրաժարվելով հրաժարվում ենք:

Խոստովանում և կատարյալ սրտով հավատում ենք, որ Հայր Աստված անստեղծ է, անծիմ և անսկիզբ, այլ ծնողը Որդու և բխողը Սուրբ Հոգու:

Հավատում ենք, որ Խոսքն Աստված անստեղծ է, Հորից նսխքան հավիտյանները ծնված ու սկսված, Նրա-

նախ քան զյախտեանս, ո՛չ յետոյ և ո՛չ կրտսեր, այլ որքան Հայրն՝ հայր, ընդ Նմին և Որդին՝ որդի:

Հաստատմք զՍուրբ Հոգին Աստուած անեղ, անժամանակ, ոչ ծնեալ, այլ բղխեալ ի Հօրէ, էակից Հօր և փառակից Որդոյ:

Հաստատմք զԵրրորդութիւնն Սուրբ մի բնութիւն, մի աստուածութիւն, ո՛չ երեք աստուածք, այլ մի աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երևելեաց և աներևութից:

Հաստատմք յԵկեղեցի սուրբ, զթողութիւն մեղաց՝ հաղորդութեամբ սրբոց:

Հաստատմք զՄինն յԵրից Անձանց զԲանն Աստուած ծնեալ ի Հօրէ նախ քան զյախտեանս, ի ժամանակի իջեալ յԱստուածածին Կոյսն Մարիամ, առեալ յարեւելէ նորա՝ միաւորեաց ընդ Իւրում Աստուածութեանն՝ իննամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ Կուսին: Եւ եղև Աստուածն կատարեալ մարդ կատարեալ՝ հոգով և մտօք և մարմնով, մի անձն, մի դէմ և միաւորեալ մի բնութիւն: Աստու-

նից ո՛չ ավագ և ո՛չ կրտսեր, այլ որքանով Հայրը հայր է, այնքանով Որդին՝ որդի:

Հավատում ենք, որ Սուրբ Հոգի Աստվածն անստեղծ է, անժամանակ, չի ծնված, այլ բխում է Հորից, Հորն էակից է և Որդուն՝ փառակից:

Հավատում ենք, որ Սուրբ Երրորդութիւնը մի բնութիւն է, մի աստվածութիւն. ո՛չ թե երեք աստված, այլ մի՛ Աստված, մի՛ կամք, մի՛ թագաւորութիւն, մի՛ իշխանութիւն, արարիչ երևացող ու աներևութ արարածներին:

Հավատում ենք սուրբ Եկեղեցուն և մեղքերի թողութեանը՝ սուրբերի հաղորդութեամբ:

Հավատում ենք, որ Երեք Անձերից Մեկը՝ Հորից նախքան հավիտյանները ծնված խոսքն Աստված, ժամանակի մեջ իջալ Աստվածածին Կոյս Մարիամի մեջ և նրա արունից վերցնելով՝ միավորեց իր աստվածութեան հետ: Ինն ամիս մնալով անարատ Կուսի արգանդում՝ կատարյալ Աստվածը եղալ կատարյալ մարդ՝ հոգով, մտքով ու մարմնով, մի անձ, մի դէմք և միավորված մի բնութիւն: Աստված մարդացալ առանց փոփո-

ածն մարդացեալ առանց փոփոխման և առանց այլալիութեան: Անսերմն յղութիւն և անապական ծնունդ: Որպէս ոչ է սկիզբն Աստուածութեան Նորա, և ոչ վախճան՝ մարդկութեան Նորա. «**Զի Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յախտեան**» [Եբր. ԺԳ 8]:

Հաստատմք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս շրջեալ ի վերայ երկրի: Յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն, Հայր ի վերուստ վկայեալ՝ Դա է Որդի Իմ սիրելի, և Հոգին Սուրբ աղանակերպ իջեալ ի վերայ Նորա: Փորձեալ ի աստանայէ և յաղթեալ մահ: Քարոզեալ մարդկան զփրկութիւն: Աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ և ծարաւեալ: Յետոյ եկեալ կամա ի չարչարանս, խաչեալ և մեռեալ՝ մարմնովն, և կենդանի՝ աստուածութեամբն: Մարմինն եղեալ ի գերեզմանի՝ միաւորեալ աստուածութեամբն, և հոգւովն իջեալ ի դժոխս՝ անբաժանելի աստուածութեամբն: Քարոզեալ հոգւոցն, աւերեալ զդժոխս և ազատեալ զհոգիս: Յետ երից աւուրց յարուցեալ ի մեռելոց և երևեալ աշակերտացն:

յսութեան ու փոխարինման: Հղիացումն անսերմ էր, և ծնունդն՝ անապական: Ինչպէս սկիզբ չունի Նրա աստվածութիւնը, այդպէս էլ անվախճան է Նրա մարդկութիւնը. «Քանզի Հիսուս Քրիստոսը նույնն է երէկ, այսօր և հավիտյան» [Եբր. ԺԳ 8]:

Հավատում ենք, որ մեր Տէր Հիսուս Քրիստոսը շրջել է երկրի վրա: Երեսուն տարեկան դառնալով՝ եկել է մկրտվելու, Հայրը վկայել է. «Դա՛ է Իմ սիրելի Որդի», իսկ Սուրբ Հոգին աղանակերպ իջել է Նրա վրա: Փորձվել է աստանայից և հաղթել նրան: Փրկություն է քարոզել մարդկանց: Մարմնով աշխատել է, հոգնել, քաղցել ու ծարավել: Ապա կամովին եկել է չարչարվելու, խաչվել է և մարմնով մեռնելով հանդերձ՝ աստվածությամբ մնացել կենդանի: Մարմինը՝ աստվածության հետ միավորված, դրվել է գերեզմանի մեջ, իսկ հոգով ու աստվածությունից անբաժան՝ իջել է դժոխք, հոգիներին քարոզել, դժոխքն ավերել և հոգիներն ազատագրել: Երեք օրից հետո մեռելներին հարություն է առել և աշակերտներին հայտնվել:

Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն համբարձեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ Հօր: Այլ և զայոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ ի դատել զկենդանին և զմեռեալս, որ և յարութիւն ամենայն մարդկան:

Հաւատամք և զհատուցումն գործոց. արդարոցն՝ կեանք յաիտենական, և մեղաւորացն՝ տանջանք յաիտենական:

Հաւատում ենք, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսն այդ նույն մարմնով բարձրացել է երկինք և նստել Հոր աջ կողմում: Բայց և զայլու է այդ նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու ողջերին ու մեղաւորներին, ինչք նաև բոլոր մարդկանց հարությունն է:

Հաւատում ենք նաև, որ հատուցում է տրվելու [մարդկանց] գործերին. արդարների՝ հավիտենական կյանք, իսկ մեղաւորներին՝ հավիտենական տանջանք:



ՄԵՂԱՅ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՆ

Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր և Որդույ և Հոգւոյն Սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ և սրբուհոյ Աստուածածնին և առաջի բո, հայր սուրբ, զամենայն մեղս, զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով, կամայ և ակամայ, զիտութեամբ և անզիտութեամբ: Մեղայ Աստուծոյ:

Մեղայ հոգւովս և զօրութեամբ սորա, մտօքս և շարժմամբ սորա, մարմնովս և զգայութեամբ սորա: Մեղայ զօրութեամբ հոգւոյս՝ խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ, շռայլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ և թերամտութեամբ: Մեղայ Աստուծոյ:

Մեղայ չար խորհրդով մըտացս՝ նենգութեամբ, ասելութեամբ, խեթիւ, մախանօք, յաչաղանօք, թուլութեամբ, պոռնկական խորհրդով՝ արուական, իգական, անասնական, գրաստական, զա-

ՄԵՂԱՆՉԵՑԻ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Մեղանչեցի Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հոր, Որդու Սուրբ Հոգու դեմ: Մեղանչել եմ Աստծո դեմ: Խոստովանում եմ Աստծո, սուրբ Աստվածածնի և քո առաջ, հայր սուրբ, գործածս բոլոր մեղքերը: Քանզի մեղանչեցի խորհուրդով, խոսքով և գործով, կամովին և ակամայ, զիտութեամբ և անզիտութեամբ: Մեղանչեցի Աստծո դեմ:

Մեղանչեցի հոգովս և նրա զօրութեամբ (զորություններով), մտքովս և նրա շարժմամբ (շարժումներով), մարմնովս և նրա զգայութեամբ (զգայարաններով): Մեղանչեցի հոգու զորութեամբ՝ խորամանկութեամբ և անզգամութեամբ, հանդգնութեամբ և երկչոտութեամբ, շռայլութեամբ և ժլատութեամբ, զեխութեամբ և անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, հուսահատութեամբ և թերահավատութեամբ: Մեղանչեցի Աստծո դեմ:

Մեղանչեցի մտքիս չար խորհուրդներով՝ նենգութեամբ, ասելութեամբ, հիշաչարութեամբ, մախանքով, չարակնութեամբ, թուլութեամբ, պոռնկական խորհուրդով՝ արվամուլական, իգամուլական, անասնական,

զանական, ի գիշերի և ի տուրնջեան երազական գիջութեամբ և անըջական գարշ աղտեղութեամբ: Մեղայ Աստուծոյ:

Մեղայ ցանկութեամբ մարմնոյս՝ հեշտութեամբ, պղերգութեամբ, յօրանջմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս և զագրագործութեամբ ի պէս-պէս ախտս, հեշտալրութեամբ լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, իգութեամբ ոնգացս, պագշտութեամբ բերանոյս, անժուժկալութեամբ, շուայտութեամբ և արբեցութեամբ: Մեղայ Աստուծոյ:

Մեղայ չարաբանութեամբ լեզուիս՝ ստախօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանասարկութեամբ, շոգմոգութեամբ, քսու, դատարկաբանութեամբ և ծաղու, զրախօսութեամբ, հերձախօսութեամբ և անիժաբանութեամբ, տրտնջելով, դժգոհելով, բամբասելով և հայհոյելով: Մեղայ Աստուծոյ:

Մեղայ գողութեամբ ձեռացս, ազահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով և ընդ գարշս

գրաստական, գազանական, գիշերն ու ցերեկը երազական գիջութեամբ և անըջական գարշելի աղտեղութեամբ: Մեղանչեցի Աստծո ղեմ:

Մեղանչեցի մարմնիս ցանկութեամբ՝ հեշտասիրութեամբ, պղերգութեամբ, քնի հորանջմամբ, մարմնի շարժումներով ու պէս-պէս ախտերով զագրագործութեամբ, ականջներովս ցանկասիրութեամբ լսելով, աչքերիս անմաքրութեամբ, սրտիս ցանկութեամբ, ունզներիս մեղկութեամբ, բերանիս անպարկեշտութեամբ, անժուժկալութեամբ, շվայտութեամբ և հարբեցողութեամբ: Մեղանչեցի Աստծո ղեմ:

Մեղանչեցի լեզվիս չարաբանութեամբ՝ ստախոսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հակաճատութեամբ, վիճաբանութեամբ, չարախոսութեամբ, շոգմոգութեամբ, քսութեամբ, դատարկաբանութեամբ, ծիծաղով ու ծաղրով, զրախոսութեամբ, հերձախոսութեամբ, անիժելով, տրտնջալով, դժգոհելով, բամբասելով և հայհոյելով: Մեղանչեցի Աստծո ղեմ:

Մեղանչեցի ձեռքով գողանալով, ազահելով, զրկելով, հարվածելով, սպանելով և գարշելի գործեր կա-

ածելով: Մեղայ Աստուծոյ:

Մեղայ ամենայն յօրուածովք շինուածոյս և ամենայն անդամօք մարմնոյս, հնգեակ զգայարանօքս և վեցեակ շարժմամբս՝ վերամբարձ ոտնահարութեամբ և վայրաքարշ մեղկութեամբ, յաջ և յահեակ խտորելով, զառաջնոցն մեղանչելով և վերջնոցն չար նշասակ գոլով: Մեղայ Աստուծոյ:

Այլ և մեղայ ելթնիցս յանցանօք մահացու մեղօք՝ հպարտութեամբ և մասամբք նորին, նախանձու և մասամբք նորին, բարկութեամբ և մասամբք նորին, ծուլութեամբ և մասամբք նորին, ազահութեամբ և մասամբք նորին, որկրամոլութեամբ և մասամբք նորին, բղջախոհութեամբ և մասամբք նորին: Մեղայ Աստուծոյ:

Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ՝ յանձնառելեացն և հրաժարելեացն, զի ոչ զյանձնառականսն կատարեցի և ոչ ի հրաժարելեացն հեռացայ: Զօրէնս առ ի յօրինացն հեղգացայ, ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ և գործովս անարժան գտայ, գիտելով զչարն՝ կամա կորացայ և ի բարեաց գործոց տս ինձէն հեռացայ. վա՛ր ինձ, վա՛ր ինձ, վա՛ր ինձ:

տարելով: Մեղանչեցի Աստծո ղեմ:

Մեղանչեցի մարմնիս բոլոր մասերով ու բոլոր անդամներով, հինգ զգայարաններով և վեցակ շարժումներով՝ վերամբարձ ոտնահարութեամբ, վայրաքարշ մեղկութեամբ, աջ և ձախ խտորվելով, նախկինների մեղքերը գործելով և գալիք սերունդներին չար օրինակ թողնելով: Մեղանչեցի Աստծո ղեմ:

Այլ և մեղանչեցի յոթ մահացու մեղքերով՝ հպարտութեամբ, նախանձով, բարկութեամբ, ծուլութեամբ, ազահութեամբ, որկրամոլութեամբ, բղջախոհութեամբ և նրանց տարատեսակներով: Մեղանչեցի Աստծո ղեմ:

Այլ և մեղանչեցի Աստծո բոլոր պատվիրանների ղեմ՝ հանձնառելի և հրաժարելի, որովհետև ոչ հանձնառելիները կատարեցի, ոչ էլ հրաժարելիներից հեռացայ: Օրենքը ստանձնեցի, սակայն նրանում ծուլացայ, քրիստոնէական հավատքն ընդունեցի, բայց գործերովս նրան անարժան գտնվեցի, չարն իմանալով՝ կամովին շեղվեցի և բարի գործերից ինքնակամ հեռացայ: Վա՛ր ինձ, վա՛ր ինձ,

Զոօրն ասեմ կամ զոօրն խոստովանիմ, զի անթիւ եմ յանցանք իմ, անասելի եմ անօրէնութիւնք իմ, աններելի եմ ցաւք իմ, և անբժշկելի եմ վերք իմ: Մեղայ Աստուծոյ:

Հա՛յր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ Միածին Որդին Աստուծոյ, զի իշխանութեամբդ, որ տուեալ է քեզ, արձակեցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ:

ԱՐՁԱԿՈՒՄՆ

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց՝ խոստովանեցելոցն և մոռացելոցն: Եւ ես կարգաւ քահանայական իշխանութեան և հրամանաւն աստուածային թէ՛ «Զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս», նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց՝ ի խորհրդոց, ի բանից և ի գործոց, յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ: Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդս սուրբ Եկեղեցւոյ, զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն: Ամէն:

վա՛յ ինձ: Ո՞րն ասեմ կամ ո՞րը խոստովանեմ. հանցանքներս անթիվ եմ, անօրէնություններս՝ անպատմելի, ցավերս՝ աններելի, և վերքերս՝ անբժշկելի: Մեղանչեցի Աստծո ղեմ:

Հա՛յր սուրբ, դու ես իմ՝ Աստծո Միածին Որդու հետ հաշտության միջնորդն ու բարեխօսը, քեզ տրված իշխանությամբ արձակի՛ր իմ մեղքերի կապանքները, աղաչո՛ւմ եմ քեզ:

ՄԵՂՔԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Մարդասեր Աստված թող քեզ ողորմի և թողություն շնորհի քո բոլոր հանցանքների՝ թե՛ խոստովանված և թե՛ մոռացված: Եվ ես քահանայական իշխանության կարգով և աստվածային հրամանով, թե՛ «Ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում», այդ նույն խոսքով, Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, արձակում եմ խորհուրդներով, խոսքերով և գործերով քո կատարած բոլոր մեղքերը: Այլ և քեզ դարձյալ հանձնում եմ սուրբ Եկեղեցու խորհուրդներին, որպեսզի ինչ բարիք էլ գործում ես, բարեգործություն համարվի և քեզ հանդերձյալ կյանքի փառքին արժանացնի: Ամեն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԱՅԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Հտ. Ա, Երևան, 1971, Հտ. Դ, 1979:
- Առաքել Միլենցի, Աղամգիրք, Երևան, 1989:
- Աստուածաշունչ մատեան Հին և նոր կտակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1997:
- «Գանձասար», Հտ. Ա-Բ, Երևան, 1992, Հտ. Գ-Դ, 1993, Հտ. Զ, 1996:
- Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում ճառք, Ս. Էջմիածին, 1894: Գիւտ եպս. [Ղազարեան], Արևելեան անապատականը և «Նարեկ»ը, Երուսաղէմ, 1937:
- Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, 1985:
- Գրիգոր Վարդապետ, Խօսք ճշմարիտ Հաւատքի և առաքինասէր վարքի մասին, Երևան, 1992:
- Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729:
- Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Զմեռան Հատոր, Կ. Պոլիս, 1740:
- Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան Հատոր, Կ. Պոլիս, 1741:
- Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1994:
- Սրբոյ Հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք և մատենագրութիւնք, Վենետիկ, 1907:
- Եփրեմ Ասորի, Յորդորակ ապաշխարութեան, Օրթագիւղ, 1837:
- Գիրք աղօթից ասացեալ սրբոյն Եփրեմի Խուրբին Ասորւոյ, Երուսաղէմ, 1933 (Զ տպագրութիւն):
- Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Նիւ Եօքք, 1986:
- Կանոնագիրք Հայոց, Հտ. Ա, Երևան 1964, Հտ. Բ, Ե., 1971:
- Ղևոնդ արք. Զէպէյեան, Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս, 1986:

Մաղաքիա արք. Օրմանեան, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1985:

Մաշտոց, Վաղարշապատ, 1905:

Միքայէլ ծ. վրդ. Յակովբեան Սալլանթեանց, Կրօնագիտութիւն քրիստոնէական, Մոսկով, 1831:

Մկրտիչ վրդ. Արծրունեան, Բացատրութիւն Հրաժարման և գղջման բանից սրբոց հարց..., Երուսաղէմ, 1854:

Յայսմաւուրք (Տէր Իսրայէլի), Կոստանդնուպօլիս, հտ. Ա-Բ, 1834:

Յովհ. Երզնկացի, Խրատ բոլոր քրիստոնեաներուն, Անթիլիաս, 1984:

Յովհ. Մանդակունի, ծառք, Վենետիկ, 1860:

Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի, Յառ եբրայեցիս թուղթն Պողոսի, ժգ 17, ծառ ԼԴ, Վիեննա, 1855:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Ա-Բ, Վենետիկ, 1836-37:

Նորայր արք. Պողարեան, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990:

Շնորհք արք. Գալուստեան, Հայազգի սուրբեր, Երևան, 1997:

Պարգև եպս. Մարտիրոսյան, Ես եմ ճանապարհը, Երևան, 1995:

Պողոս պատրիարք Ազրիանուպոլսեցի, Խրատի թանգարան, Բ հրատ., Ս. Էջմիածին, 2002:

Սահակ քհն. Տէր Սարգսեան, Քննական կրօնագիտութիւն, Կ.Պոլիս, 1897:

Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց, Կ.Պոլիս, 1828:

Վարդան Այգեկցի, Խրատներ, Երևան, 1999:

Վարդան Այգեկցի, Խրատ բոլոր քահանաներին և ժողովրդին, Ս. Էջմիածին, 2001:

Տէր-Միքելեան Արշակ, Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը, Տփլիս, 1900:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	4
Մաս Ա	
Ներածութիւն	
Մեղքը	7
Սկզբնական և ներգործական մեղք	14
Խղճատանք և գղջում	16
Մեղքերի խոստովանութիւն	20
Մաս Բ	
Բացատրութիւն «Հրաժարիմքի» և մեղքերի ընդհանրական խոստովանութիւն աղոթքի խոսքերի	30
«Հրաժարիմք»	31
«Զղջումն». «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն»	39
«Արձակումն». Մեղքերի արձակում	82
Հավելված Ա	84
Հավելված Բ	86
Օգտագործված հայերեն գրականութիւն ցանկ	94

ՄԵՂԱՅ
ԱՍՏՈՒԾՈՅ

Բացատրություն «Հրաժարիմքի» և մեղքերի ընդհանրական
խոստովանության աղոթքի խոսքերի

Աշխատասիրություն՝ Ս. Ստամբուլցյանի

Առաջին հրատարակությունը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու
Քրիստոնեական Դաստիարակության և քարոզչության կենտրոնի
(ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ 2001)